


**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ**



**Հայաստանի Հանրապետության Վարչապետ Ս. Սարգսյանը
«Փոքր Միեր» (կաղետական) կրթահամալիրում.**

Կոտայքի մարզ, 2007 թ. դեկտեմբերի 2



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (54). 2007

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոթանջյան Հ. Ս.**
քաղաքագիտության դոկտոր (Ռ՝Ի),
ռազմագիտական գիտությունների
ռուսաստանյան ակադեմիայի
խակական անդամ,
հակահարկային գծով
փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
- Աղաբեկյան Ա. Ա.**
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիամով Է. Ա.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Գրիգորյան Մ. Ս.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Իսրայելյան Վ. Ս.**
- Խաչատրով Յ. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Մելքոնյան Գ. Գ.**
- Մելքոնյան Մ. Գ.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Շաղյան Պ. Ա.**
- Սարկիսյան Մ. Ս.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Փարսադանյան Ա. Մ.**
- Քոչունց Կ. Գ.**
- Օհանյան Ս. Մ.**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Գ. Մ. Արշակյան,** Թուրքիայի ռազմա-
քաղաքական հարաբերությունները Վրաս-
տանի հետ 1995—2001 թթ. 7
- Կ. Ս. Դալլաբջյան,** Տեսակետներ ներ-
կայիս համընդհանրացման վերաբերյալ 18
- Մ. Մ. Մարգարյան,** Իսլամը նոր աշ-
խարհակարգում 30

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Ա. Ռ. Ավերիսյան,** Զինվորական օմ-
բուդանների հաստատություն. դերն ու գոր-
ծունեության առանձնահատկությունները 47

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Ա. Մ. Համբարյան,** Պետությունների
ռազմական անվտանգությունը միջազգային
անվտանգության համատեքստում միջազ-
գային իրավունքի լույսի ներքո 57
- Վ. Ա. Խաչատրյան,** Մարդասիրական
ինտերվենցիայի իրավական հիմքերը ժա-
մանակակից միջազգային իրավունքում 66

ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վ. Հ. Մարգարյան,** Հավանական հա-
կառակորդի բացասական տեղեկութահոգե-
բանական ներգործությունից պաշտպանու-
թյան հարցի շուրջ 76

ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Է. Մելիք-Փաշայան, Ա. Մ. Փարսադանյան, Ջորակոչիկների համալիր հետազոտումը ռազմահոգեբուժական փորձաքննության ժամանակ 88

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բ. Հ. Հարությունյան, Խաղիսաղի ճակատամարտը (450 թ.) 95

ՀԱՅԱԶԳԻ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

Հ. Ա. Դեմոնյան, Փոխծովակալ Հեռնան Կույումջյան 104

ՈԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ 109

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Դ. Ս. Չիլինգարյան, Համարի բառարան 112

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
- Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
- Ա. Հ. Թռչունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
- Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Պ. Մ. Հերունի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
- Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
- Կ. Ա. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
- Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Վ. Ս. Սարգսյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*
- Հ. Ա. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (54). 2007
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Агабекян А. А., *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*,
Григорян М. С., *Исаханиян М. Р.*, *Исраелян В. С.*, *Карапетян М. Н.*, *Кочунц К. Г.*,
Маргарян В. Г. (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*, *Мартirosян С. С.*,
Мелконян Г. Г., *Мелконян М. Г.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*,
Оганян С. М., *Парсаганян А. М.*, *Саркисян М. С.*, *Сегракян С. Г.*,
Тер-Григорьянц Н. Г., *Хачатуров Ю. Г.*, *Шагян П. А.*

СОДЕРЖАНИЕ

ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТИКА

- Г. М. Аршакаян.* Военно-политические отношения Турции с
Грузией в 1995—2001 гг. 7 (42)*
К. С. Даллакян. Взгляды на современную глобализацию . . . 18 (42)
М. М. Маргарян. Ислам при новом миропорядке 30 (43)

ВОЕННОЕ ПРАВО

- А. Р. Аветисян.* Институт военного омбудсмана: роль и осо-
бенности деятельности 47 (55)

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

- А. М. Амбарян.* Военная безопасность государств в кон-
тексте международной безопасности в свете международного
права 57 (73)
В. А. Хачатрян. Правовые основы гуманитарной интервен-
ции в современном международном праве 66 (73)

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

- В. Г. Маргарян.* К вопросу о защите от негативного инфор-
мационно-психологического воздействия вероятного против-
ника 76 (86)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

А. Э. Мелик-Пашаян, А. М. Парсаганян. Комплексное обследование призывников при военно-психиатрической экспертизе 88 (93)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

Б. А. Арутюнян. Битва при Халхале (450 г.) 95 (103)

ПОЛКОВОДЦЫ—АРМЯНЕ

Г. А. Демоян. Вице-адмирал Эрнан Куюмджян 104

НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ 109

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян. Словарь номера 112

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;*
- Н. У. Аракелян, академик НАН РА;*
- В. М. Арутюнян, академик НАН РА;*
- Г. Е. Багдасарян, академик НАН РА;*
- Г. А. Геворкян, академик НАН РА;*
- Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;*
- П. М. Геруни, академик НАН РА;*
- А. А. Манташян, академик НАН РА;*
- Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;*
- М. М. Мириджаниян, доктор медицинских наук, профессор;*
- К. С. Мосоян, доктор технических наук, профессор;*
- В. С. Саркисян, академик НАН РА;*
- А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;*
- А. А. Трчунян, член-корреспондент НАН РА;*
- Ю. С. Чилингарян, академик НАН РА*

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC QUARTERLY,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (54). 2007
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Aghabekyan A. A.*, *Apramov E. A.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Grigoryan M. S.*, *Idynyan R. A.*,
Isakhanyan M. R., *Israelyan V. S.*, *Karapetyan M. N.*, *Khachatourov Y. G.*,
Kotchunts K. G., *Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*,
Martirossov L. A., *Melkonyan G. G.*, *Melkonyan M. G.*, *Mirzabekyan A. R.*,
Nazaryan A. S., *Ohanyan S. M.*, *Parsadanyan A. M.*, *Sarkissyan M. S.*,
Sedrakyan S. G., *Shadyan P. A.*, *Ter-Grigoryants N. G.*

CONTENTS

DEFENSE-SECURITY POLICY

- G. M. Arshakyan.* Military-political relations of Turkey with
Georgia in 1995—2001 7 (44) *
- K. S. Dallakyan.* The views on the contemporary globalization . 18 (45)
- M. M. Margaryan.* Islam in the new world order 30 (45)

MILITARY LAW

- A. R. Avetisyan.* The military ombudsman institution: the role
and peculiarities of activity 47 (56)

INTERNATIONAL LAW

- A. M. Hambaryan.* Military security of the states in the context
of the international security in the light of the International Law . . 57 (74)
- V. A. Khachatryan.* Legal principles of humanitarian interven-
tion in the contemporary International Law 66 (75)

MILITARY INFORMATICS

- V. H. Margaryan.* To the issue of the protection from the ne-
gative informational and psychological influence by a potential
adversary 76 (86)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY MEDICINE

A. E. Melik-Pashayan, A. M. Parsadanyan. The complex examination of draftees at the military-psychiatric expertise 88 (93)

MILITARY HISTORY

B. H. Haroutyunyan. The battle of Khaghkhagh (450 A. D.) 95 (103)

THE GENERALS—ARMENIANS

H. A. Demoyan. Vice Admiral Hernan Couyoumdjian 104

SOMETHING NEW IN MILITARY FIELD 109

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

N. S. Mkrtchian, L. H. Papikian, D. S. Chilingarian. Volume dictionary 112

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumsian*, Candidate of Psychological Sciences, Docent;
 - N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
 - G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
 - Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
 - H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
 - V. M. Haroutyunian*, Full Member, NAS RA;
 - P. M. Herouni*, Full Member, NAS RA;
 - A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
- E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
 - V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
- H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;
- A. H. Trchounian*, Fellow Correspondent, NAS RA

**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԲԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ 1995–2001 ԹԹ.**

Գ. Մ. ԱՐՇԱԿՅԱՆ

Մեր տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացները ճիշտ ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունի թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության ուսումնասիրությունը: Թուրք-վրացական հարաբերությունները այն գործոններից են, որոնցով պայմանավորված են անվտանգությունն ու կայունությունը հարավկովկասյան տարածաշրջանում:

ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանը դարձավ Թուրքիայի ամենակարևոր արտաքին քաղաքական գործընկերներից մեկը: Թուրքիայի համար Վրաստանի այդքան մեծ կարևորությունը հիմնականում պայմանավորված էր երկու գործոնով: Առաջին. ԽՍՀՄ փլուզումից հետո թուրք-հայկական հարաբերությունները լարված բնույթ էին կրում, ուստի Թուրքիայի համար Վրաստանը դարձավ հիմնական դարպասը դեպի Կենտրոնական Ասիա: Երկրորդ գործոնը գլխավորապես կապված էր Թուրքիայի էներգետիկ քաղաքականության հիմնական նախագծի՝ Բաքու–Ջեյհան նավթամուղի և Վրաստանի՝ որպես նավթամուղի տարանցիկ երկրի դերակատարության հետ: ՌԻստի 90-ական թվականների երկրորդ կեսից, գրեթե չթաքցնելով իր ռազմավարական պայմանավորվածությունները Ադրբեյջանի հետ, Անկարան ակտիվ ջանքեր գործադրեց իր ռազմավարական ուղեծրում Վրաստանին ևս ընդգրկելու ուղղությամբ: Թուրքիան հատկապես ձգտում էր Վրաստանի հետ համագործակցությունն ընդլայնելու քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում: Դրան էապես նպաստեց այն հանգամանքը, որ 90-ական թվականների երկրորդ կեսից Վրաստանը հետևողականորեն շարունակում էր իր ռազմաքաղաքական ինտեգրումը ՆԱՏՕ-ին և համագործակցությունը ԱՄՆ-ի ու Թուրքիայի հետ: ՌԻստի և թուրք-վրացական հարաբերությունները թևակոխեցին ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության փուլ:

1991 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց միայն 1992 թ. մայիսին՝ ԱՄՆ-ի կողմից Վրաստանի ճանաչումից և Էդուարդ Շևարդնաձեի՝ Վրաստանի նախագահի դառնալուց հետո: 1992 թ. վերջերին Թուրքիայի վարչապետ Մուլեյման Գեմիլը պաշտոնական այցով ժամանեց Վրաստան: Այցի ընթացքում Ս. Գեմիլը և Է. Շևարդնաձեն ստորագրեցին «Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը»¹:

¹ *Stu Manos Karagiannis*. The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil (<http://ourworld.compuserve.com/HOME/PAGES/USAZERB/413.htm>):

Վրաց-թուրքական հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1994 թ. հունվարին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի պաշտոնական այցը Թուրքիա, որի ընթացքում Շևարդնաձեն և Թուրքիայի նախագահ Դեմիրելը Անկարայում ստորագրեցին մի հռչակագիր, որում կողմերը հաստատում էին իրենց պարտավորությունը՝ աջակցելու անկախությանը, խաղաղությանը, կայունությանը և ժողովրդավարությանը²:

1995 թ. Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի դեմ կազմակերպված մահափորձը դարձավ Կովկասում նոր աշխարհաքաղաքական նախաձեռնությունների և տեղաշարժերի առիթ: Վրաստանը փոխեց իր քաղաքական կողմնորոշումը՝ սերտ հարաբերություններ հաստատելով Արևմուտքի և մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի հետ, ինչն ուներ, անկասկած, հակառուսական ուղղվածություն³: Այս համատեքստում լուրջ տեղաշարժեր նկատվեցին նաև թուրք-վրացական հարաբերություններում: Այսպես, 1996 թ. մարտի սկզբին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Մուստաֆա Քալենլին ժամանեց Վրաստան: Նա մի շարք կարևոր հանդիպումներ ունեցավ Վրաստանի ղեկավարության հետ: Մարտի 3-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Ջուրաբ Ժվանիայի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները: Խոսելով Վրաստանում անցկացվող տնտեսական բարեփոխումների մասին՝ Քալենլին նշեց, որ թուրքական ներդրումները մոտ ապագայում կտան լավ արդյունքներ: ԹԱՄԺ-ի նախագահը մասնավորապես հայտարարեց. «Վաղ Կասպյան նավթի տարանցման ծրագրի իրականացումը կնպաստի երկու երկրների տնտեսական, քաղաքական և սոցիալական շահերին: Թուրքիան պատրաստ է առավելագույնն անելու ծրագրի արագ իրականացման համար»⁴:

Մարտի 5-ին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ Մուստաֆա Քալենլին, դրական գնահատական տալով Վրաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացին, համոզվածությամբ նշեց, որ ժողովրդավարական ուղիով ընթացող Վրաստանը կդառնա տարածաշրջանում խաղաղության և կայունության երաշխիքը: Նա նաև իր գոհունակությունը հայտնեց, որ Վրաստանի առևտրական հաշվեկշռի մեջ տվյալ պահին Թուրքիան գրավում է առաջին տեղը: Արժարժեքով երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների հարցը՝ Քալենլին շեշտեց. «Վրաց-թուրքական հարաբերությունները մենք դիտում ենք որպես երկու իրավահավասար, բարեկամական երկրների հարաբերություններ»⁵:

Թուրք-վրացական հարաբերությունները ամրապնդելու նպատակով 1996 թ. ապրիլին պաշտոնական այցով Թուրքիա մեկնեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած պատվիրակությունը: Ըստ թուրքական աղբյուրների՝

² Տես *Մ. Կարազիսնիս*, նշ. աշխ.:

³ Տես *Gia Tarkhan-Mouravi*. The Georgian-Abkhazian conflict in a regional context. Brussels, 1998, August:

⁴ «ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին», ցուցակ 3, գործ 160, էջ 23:

⁵ Նույն տեղում:

Թուրքիայի նախագահ Սուլեյման Գեմիլրեյը, Վրաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Շևարդնաձեին բնութագրելով որպես «մեծ քաղաքական գործիչ, որն ունի մեծ գիտելիքներ ու փորձ համաշխարհային և տարածաշրջանային հարաբերությունների առնչությամբ», շեշտեց, որ «Վրաստանի նախագահի այցը Անկարա կնպաստի երկու երկրների միջև արդեն գոյություն ունեցող կապերի հետագա զարգացմանը: Տարածաշրջանային հարցերում Թուրքիայի և Վրաստանի սերտ համագործակցությունը սերտորեն կապված է երկու երկրների շահերի հետ»⁶: Վրաստանի նախագահը, նշելով տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման գործընթացում Թուրքիայի մեծ դերակատարությունը, իր հերթին գոհունակություն հայտնեց երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման տեմպերի վերաբերյալ: Նա մասնավորապես ասաց. «Հնարավոր չէ կովկասում խաղաղությունը և կայունությունը վերականգնել առանց Թուրքիայի աջակցության: Ես շնորհակալ եմ Թուրքիայից Վրաստանի տարածքային ամբողջականության հարցում նրա ցուցաբերած աջակցության համար»⁷:

Թուրքիայի պաշտոնական մոտեցումը արխագական և օսական հիմնախնդիրներին ու Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչումը մեծապես նպաստեցին, մասնավորապես, տնտեսական ու ռազմաքաղաքական դրրոտներում թուրք-վրացական հարաբերությունների զարգացմանը, ինչի շնորհիվ 90-ական թվականների կեսերին Թուրքիան դարձավ Վրաստանի ամենախոշոր առևտրային գործընկերներից մեկը և, ինչպես նշել էր Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեն, «Վրաստանի երկարաժամկետ ռազմավարական գործընկերը»: Բացի այդ, ռազմական դրրոտում համագործակցության շրջանակներում Թուրքիան սկսեց աջակցել ռազմական կրթության բնագավառում Վրաստանի ձեռնարկած բարեփոխումներին և ազգային բանակի կազմավորման գործընթացին⁸:

Թուրք-վրացական միջխորհրդարանական համագործակցության խորացման առումով կարևոր նշանակություն ունեցավ 1997 թ. փետրվարի 28-ին Թուրքիայի խորհրդարանական պատվիրակության այցը Վրաստան: Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար Հաթինօղլին կրկին շեշտեց Թուրքիայի սկզբունքային դիրքորոշումը Արխագական հիմնահարցում. այդ հակամարտությունը պետք է կարգավորվի Վրաստանի տարածքային ամբողջականության հիման վրա: Վրաստանի նախագահը կարևորեց Թուրքիայի ավելի ակտիվ մասնակցությունը արխագական հակամարտության և հարավկովկասյան տարածաշրջանում առկա մյուս հակամարտությունների կարգավորման գործընթացին⁹:

Շարունակում էր զարգանալ նաև թուրք-վրացական հարաբերությունների

⁶ «Turkish Daily News», 1996, 4 April:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս *Mustafa Aydin*. Turkish policy toward the Caucasus (www.ciaonet.org/olj/co/co_jul02/co_jul02f.pdf):

⁹ Տե՛ս *Գիւս Թարխան-Մուրալի*, նշ. աշխ.:

իրավապայմանագրային հենքը: 1998 թ. մարտի 13-ին Թուրքիայի վարչապետ Մետուք Յիլմազի պաշտոնական այցի ժամանակ Վրաստանում ստորագրվեցին համաձայնագրեր առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ, քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված կասպյան էներգետիկ ռեսուրսները Բաքու-Ջեյհան նավթամուղով արտահանելու հետ¹⁰:

Վրաստանի և Թուրքիայի միջև երկկողմ հարաբերությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1999 թ. փետրվարին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած պատվիրակության այցը Թուրքիա: Թուրքիայի ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին մասնավորապես ռազմաքաղաքական համագործակցության և տնտեսական ոլորտների զարգացման, ինչպես նաև տրանսպորտային և հաղորդակցային նախագծերի իրականացման մի շարք հարցեր¹¹:

Նշենք, որ 2000 թ. հունվարի 14-15-ը Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի պաշտոնական այցը Վրաստան դարձել էր տարածաշրջանում լուրջ քննարկման առարկա: Վրաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Դեմիրելը հանդես եկավ հետևյալ նախաձեռնությամբ՝ ստեղծել «Կովկասյան կայունության պակտ»: Մասնավորապես՝ զուգահեռներ տանելով Բալկանների և Կովկասի միջև՝ Դեմիրելը նշեց, որ Եվրոպան և ԵԱՀԿ-ն պետք է ներգրավվեն այս ծրագրի մեջ, որի հաջողությունը կախված է նաև Ամերիկայի աջակցությունից: Ըստ Դեմիրելի՝ «տարածաշրջանի կայունությանն ուղղված պակտի ստեղծման ծրագիրը ԵԱՀԿ անդամ բոլոր երկրների խնդիրն է»: Նա մասնավորապես նշեց. «Առանց բաժանման գծերի ժողովրդավարական և բարգավաճող Եվրոպայի համար Կովկասի կայունությունը առանցքային է: Մեր գլխավոր նպատակն է ճնշում գործադրել քաղաքակիրթ երկրների վրա, որպեսզի նրանք ավելի մեծ ուշադրություն դարձնեն Կովկասի տարածաշրջանին»¹²:

Նկատի ունենալով մասնավորապես Ռուսաստանը՝ Դեմիրելն ասաց, որ ոչ մի պետություն չպետք է ձգտի իր գերիշխանությունը հաստատելու երիտասարդ պետությունների նկատմամբ: Հակառակը՝ այդ երկրներին պետք է օգնել զարգացնելու տնտեսությունը և ժողովրդավարությունը, որ վերջիններս ի վիճակի լինեն կանգնելու «իրենց սեփական ոտքերի վրա»¹³: Դրանով Դեմիրելը շեշտում էր, որ Ռուսաստանը կովկասյան տարածաշրջանում այլևս չունի մենաշնորհային դիրքեր:

Բացի այդ, Թուրքիան և Վրաստանը պայմանավորվեցին երկու երկրների միջև համագործակցության ամրապնդման նպատակով բացել արդեն երրորդ ցամաքային անցակետը (Չիլդիր-Աքթաշ): Թուրքական կողմը նաև պատրաստակամություն հայտնեց Վրաստանի հետ համաձայնագիր ստորագրելու Վրաստանի ռազմական

¹⁰ Տես «Независимая газета», 24 марта 1998 г.:

¹¹ Տես Կ. Ս. Գաճուև. Геополитика Кавказа. М., 2001, с. 355; *isuh`C. Чернявский*. Южный Кавказ в планах НАТО. «Международная жизнь», 1998, сентябрь:

¹² «Turkish Daily News», 2000, 17 January.

¹³ Նույն տեղում:

օղաչումներին Թուրքիայում մարզելու վերաբերյալ¹⁴: Այսպիսով՝ Գեմիքեյի այցը Վրաստան մեկ անգամ ևս հաստատեց Թուրքիայի ցանկությունը Միջին Արևելքի և Կովկասի տարածաշրջանում ավելի հաստատուն դիրքեր ունենալու և այստեղ առաջնորդի դերն ստանձնելու նրա հավակնությունները:

Թուրքիան Վրաստանը դիտում էր որպես կարևոր տարանցիկ երկիր միջին-ասիական էներգակիրները արտահանելու գործում: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը 2000 թ. հոկտեմբերի 25-ին Վրաստան կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ «Ադրբեջանի Շահդենիզի բնական գազի պաշարները հավասարակշռության նոր գործոն են դառնում Միջին Ասիայում և Կովկասում: Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի նախագիծը զարգացնելու է ոչ միայն երկու երկրների, այլև ամբողջ տարածաշրջանի, Եվրոպայի և Ասիայի տնտեսությունը»:¹⁵ Ջեմը նշեց նաև Թուրքիայի համար Էրզրում–Կարս–Թբիլիսի երկաթուղու մեծ կարևորությունը¹⁵:

Թուրք-վրացական հարաբերությունների զարգացման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեցավ 2001 թ. հունվարի 29–30-ը Է. Շևարդնաձեի պաշտոնական այցը Թուրքիա: Այցի կարևոր քաղաքական արդյունքներից մեկը եղավ երկու երկրների համատեղ հայտարարության ընդունումը: Դրանում շեշտվեց, որ կողմերը շարունակելու են ջանքերը տարածաշրջանում կայունության և անվտանգության մեխանիզմներ, մասնավորապես՝ Կովկասի կայունության պակտ, ստեղծելու ուղղությամբ: ՈՒՀագրավ է, որ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հարցերը տեղ չգտան հայտարարության մեջ՝ մնալով որպես Վրաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում խաղաղ ճանապարհով լուծվելիք խնդիրներ: Հայտարարությունում նշվեց Բաթումի օդանավակայանի արդիականացման համար աշխատանքային խումբ ստեղծելու, կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ պայմանագիր ստորագրելու անհրաժեշտությունը¹⁶: Հատկանշական է, որ Թուրքիայի ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում քննարկվեց նաև Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականությունը: Շևարդնաձեն արտահայտեց այն միտքը, որ Ռուսաստանը, ճիշտ է, չպետք է դուրս մղվեր տարածաշրջանից, սակայն նա էլ իր հերթին պետք է խուսափեր Վրաստանի վրա չափերն անցնող ճնշումներ գործադրելուց¹⁷:

Թուրքիայի և Վրաստանի միջև քաղաքական սերտ հարաբերությունների ձևավորումը իր անդրադարձն ունեցավ նաև երկկողմ ռազմական հարաբերությունների վրա:

Թուրք-վրացական ռազմական հարաբերությունները սկսեցին ինտենսիվորեն զարգանալ հատկապես 90-ական թվականների վերջերին: Ռազմական ոլորտում թուրք-վրացական համագործակցության զարգացմանը էապես նպաստեց 1998 թ. ապրիլի 15-ին Վրաստանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի Գլխավոր շտաբի միջև կնքված «Ռազմական ոլորտում համագործակցության և փո-

¹⁴ Տես «Türkiye», 17 Ocak, 2000:

¹⁵ Տես «Cumhuriyet», 26—27 Ekim, 2000:

¹⁶ Տես «Radikal», 30 Ocak, 2001:

¹⁷ Տես «Radikal», 31 Ocak, 2001:

խաղարձ համաձայնության պայմանագիրը»: Համաձայնագրում հատուկ ընդգծված էր Անկարայի և Թբիլիսիի միջև ռազմական համագործակցության «ռազմավարական» կողմը: Ըստ համաձայնագրի՝ Թուրքիան աջակցելու էր վրացական Ջինված ուժերի նյութատեխնիկական բազայի ձևավորմանն ու կադրերի պատրաստմանը: Բացի այդ, Անկարան հանձն առավ վրացական բանակի արդիականացման և որոշ ռազմական օբյեկտների կառուցման ֆինանսավորումը¹⁸:

Ռազմական ոլորտում թուրք-վրացական հարաբերությունների ակտիվացման և համագործակցության հետագա զարգացման նպատակով Թուրքիան և Վրաստանը 1999 թ. մարտին ստորագրեցին ռազմական աջակցության և համագործակցության մասին պայմանագիր, որի շրջանակներում իրագործվող թուրքական ռազմական աջակցությունը ծառայելու էր Վրաստանի անկախության ամրապնդման ու սահմանների պաշտպանության, ինչպես նաև Արևմուտքի ու մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի հարաբերությունների զարգացման շահերին¹⁹: Ուշագրավ է այն փաստը, որ Վրաստանը կիսում էր Թուրքիայի մտահոգությունը՝ կապված կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման հետ: ՌԻՍՏԻ պատահական չէր, որ 90-ականների վերջին Վրաստանը, թուրքական և ամերիկյան աջակցությամբ, ակտիվ կերպով վարում էր արևմտամետ քաղաքականություն և զարգացնում էր իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Այս համատեքստում հատկապես ուշագրավ էր Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հայտարարությունը, թե «5 տարվա ընթացքում Վրաստանը թակելու է ՆԱՏՕ-ի դուռը»²⁰:

Թուրք-վրացական ռազմական համագործակցությունն ընդլայնելու և ձեռք բերված պայմանավորվածությունները իրականացնելու նպատակով 1999 թ. մարտի 1-ին Վրաստան ժամանեց թուրքական ռազմական պատվիրակությունը՝ Թուրքիայի հատուկ նախանշանակման գործերի հրամանատար Էնգին Ալանի գլխավորությամբ: Որպես Վրաստանի ռազմական ղեկավարության հետ հանդիպումների արդյունք՝ ստորագրվեց թուրք-վրացական ռազմական համագործակցության մասին համաձայնագիրը: Համաձայնագրի շրջանակներում Թուրքիան Վրաստանին էր հատկացնելու 5,5 մլն դոլար՝ ռազմական օբյեկտների վերակառուցման և վերազինման, Ռազմական ակադեմիայի կրթական կենտրոնի կառուցման և բանակի ֆինանսավորման համար: Բացի այդ, Անկարան պարտավորվեց ֆինանսավորել Գորիի ռազմավոր-ձադաշտի վերակառուցման աշխատանքները: Հատկացված դրամաշնորհով վրացական նավատորմի համար պետք է գնվեր ուղեվարական սարքավորանք²¹:

Թուրք-վրացական ռազմական համագործակցության խորացմանն էր միտված 2001 թ. հունվարի 29–30-ը Է. Շևարդնաձեի պաշտոնական այցը Թուրքիա, որի ժամանակ կողմերը ստորագրեցին համաձայնագրեր ռազմական արդյունաբերության և

¹⁸ Տես Գ. Մ. Հաջիև, նշ. աշխ., էջ 355, նաև՝ Ս. Չեռնյավսկի, նշ. աշխ.:

¹⁹ Տես «Jamestown Monitor», 1999, 5 March, Vol. 5, № 45:

²⁰ Andrew Jack and David Stern. Georgia plans to seek NATO membership. «Financial Times», 1999, 25 October.

²¹ Տես «Независимая газета», 1 октября 1999 г.:

այլ բնագավառներում համագործակցության վերաբերյալ: Ռազմաարդյունաբերական համագործակցությունն իր մեջ ներառելու էր կրթության, տեխնիկական աջակցության և այլ հարցեր, ինչի նպատակն էր Վրաստանի բանակի համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի չափանիշներին²²: Թուրքիայի նախագահ Սեզերը նշեց. «Մենք շեշտել ենք, որ Թուրքիան մեծ կարևորություն է տալիս իր մտերիմ բարեկամ և ռազմավարական գործընկեր Վրաստանի անկախությանը և տարածքային ամբողջականությանը: Մենք հայտնել ենք, որ Թուրքիան ցանկացած գնով աջակցելու է Վրաստանի ջանքերին՝ ուղղված քաղաքական կայունության ապահովմանը»: Իր հերթին Շևարդնաձեն հայտարարեց, որ Թուրքիայի բարեկամությունը շատ կարևոր է Վրաստանի համար, Թուրքիան առաջին պետությունն է, որը ճանաչեց Վրաստանի անկախությունը և օգնություն ցույց տվեց երկրի համար դժվար պահերին²³:

Մինչ Շևարդնաձեի Անկարա ժամանելը՝ հունվարի 28-ին, Թուրքիայի պաշտպանության նախարարը օդային ուժերի հրամանատարի և այլ գեներալների հետ մասնակցեց Մառնեուլի ռազմաօդային բազայի բացման արարողությանը (այս բազան երեք ամսում արդիականացվել էր Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից, ինչի համար հատկացվել էր 1,5 մլն ԱՄՆ-ի դոլար): Նախատեսվում էր, որ այս բազայում աշխատելու էին նաև թուրք զինվորականներ: Ըստ «Միլիյեթի» հաղորդման՝ Թուրքիայի պաշտոնական շրջանները համարում էին, որ այս բազան ռազմավարական կարևորություն է ներկայացնում «թե՛ Ռուսաստանի ճնշումներից նեղվող Վրաստանի, թե՛ տարածաշրջանային ուժ հանդիսացող Թուրքիայի տեսակետից»²⁴:

2001 թ. հուլիսի 3-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց Թուրքիայի պաշտպանության նախարար Սաբահաթթին Չաքմաքոլուն: Քննարկվեցին ռազմական բնագավառի համագործակցության խնդիրներ և, մասնավորապես, Վրաստանի տարածքից ռուսական ռազմակայանների դուրսբերման ժամկետների հարցը: Չաքմաքոլուն հայտնեց, որ Թուրքիան լիովին աջակցում է Վրաստանին ռուսական զորքերի դուրսբերման հարցում՝ կարևորելով թուրք-վրացական ռազմական համագործակցությունը: Էդուարդ Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ Չաքմաքոլուն նշեց. «Նախորդ տարիների ընթացքում Թուրքիան դարձել էր Վրաստանի հիմնական գործընկերը ոչ միայն առևտրի, այլև ռազմական ոլորտում: Թուրքիան արդեն ավելի քան 12 մլն դոլար է տրամադրել Վրաստանի ռազմական ոլորտի զարգացման համար: Այնհայտ է, որ Թուրքիան և Վրաստանը դարձել են լավ գործընկերներ, հատկապես՝ ռազմական ոլորտում»²⁵:

Հատկանշական է, որ Թուրքիան ոչ միայն մեծ ֆինանսական ու ռազմատեխնիկական աջակցություն էր ցուցաբերում վրացական Չինված ուժերին, այլև թուրք-վրացական համատեղ նախագծերի ու միջոցառումների իրականացմամբ ակտիվո-

²² Տես «Radikal», 30 Ocak, 2001, *ևսևի*՝ «Cumhuriyet», 30 Ocak, 2001:

²³ Տես «Cumhuriyet», 30 Ocak, 2001:

²⁴ «Milliyet», 30 Ocak, 2001.

²⁵ «Kommersant», 4 Temmuz, 2001.

րեն մասնակցում էր նրանց վերապատրաստմանը, մարտունակության մակարդակի բարձրացմանը:

Այս համատեքստում ուշադրության են արժանի 1998 թ. մայիսին կայացած Վրաստանի և Թուրքիայի համատեղ զորավարությունները («Կովկասյան Ամագոնիա-98»), որոնք անցկացվեցին սևծովյան Փոթի և Բաթում նավահանգիստների ավազանի վերաբերյալ կնքված համաձայնագրի շրջանակներում: Թուրքիայի կողմից ֆինանսավորված զորավարությունների նպատակն էր տանկերների համար սպառնալիք ներկայացնող նավերի վնասագերծման ուղղությամբ համատեղ փոխգործության մեխանիզմների մշակումը²⁶:

Բացի այդ 1999 թ. մարտին թուրք-վրացական ռազմական համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում Թուրքիայի կողմից Վրաստանին հատկացված 5,5 մլն դոլար դրամաշնորհի շրջանակներում Թուրքիան և Վրաստանը ստեղծելու էին երկկողմ համագործակցության մեխանիզմներ՝ իրենց ընդհանուր սահմանը ցամաքային ականներից պաշտպանելու և սահմանների երկայնքով դրանց օգտագործումը կանխելու համար: Աշխատանքները կատարելու նպատակով Թուրքիայի կառավարությունը Վրաստանի սահմանապահ ուժերին նվիրեց ծովային ռազմական մոտորանավակ²⁷:

Անդրադառնալով Թուրքիայի կողմից Վրաստանին տրամադրած ռազմական օգնությանը՝ նշենք, որ միայն 1998–1999 թթ. Թուրքիան վրացական Ձինված ուժերին և սահմանապահներին տրամադրեց մոտ 10 մլն դոլար, ինչը թուրք-վրացական ռազմական համագործակցության ընդլայնման վկայությունն է²⁸: Բացի այդ, թուրք-վրացական ռազմական համագործակցության շրջանակներում Թուրքիայի Գլխավոր շտաբը 2001 թ. սեպտեմբերին Վրաստանի Ձինված ուժերին նվիրեց երկու ռազմական UH-1H ուղղաթիռ, ինչի կապակցությամբ 2001 թ. սեպտեմբերի 24-ին Վրաստանի ռազմաօդային ուժերի օրվա միջոցառումների շրջանակներում կազմակերպվեց ավիաշոու²⁹:

2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո Թուրքիան ավելի ակտիվացրեց անվտանգության բնագավառում իր համագործակցությունը Վրաստանի հետ՝ հատկապես կարևորելով ահաբեկչության դեմ պայքարը: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ստացավ 2001 թ. նոյեմբերի 7–8-ը Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերի այցը Վրաստան: Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարձնաձեի հետ հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվեցին՝ ահաբեկչության դեմ պայքարում համագործակցելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրելու մասին: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Սեզերը հայտարարեց, որ այս հարցի քննարկման ժամանակ նա Վրաստանի նախագահին առաջարկել էր

²⁶ Տես Գ. Մ. Հաջիև, նշ. աշխ., էջ 355—356:

²⁷ Տես David Darchiashvili, Tamara Pataraiia, Guran Dumbadze, Irakli Aladashvili. The Army and Society in Georgia (http://www.cpirs.org.ge/Archive/AS_12_99.pdf):

²⁸ Տես Գ. Մ. Հաջիև, նշ. աշխ., էջ 355—356, *ևսև*՝ «Независимая газета», 12 мая 1998 г.:

²⁹ Տես «Caspian news agency», 2001, 25 September:

համաձայնագիրը դարձնել եռակողմ (Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև): Իր հերթին Շևարդնաձեն հույս հայտնեց, որ Ադրբեջանը կպաշտպանի այդ նախաձեռնությունը: Ըստ Վրաստանի նախագահի՝ տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման գործընթացում առաջընթացի դեպքում այս պայմանագրին կարող էին միանալ նաև այլ երկրներ³⁰:

Հատկանշական է, որ ըստ թուրքական լրատվամիջոցների՝ Շևարդնաձեի հետ հանդիպումից հետո Թուրքիայի նախագահը հեռախոսագրույց էր ունեցել Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ՝ նրան նույնպես առաջարկելով Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքել անվտանգության հարցերին վերաբերող պայմանագիր: Թուրքիայի Հանրապետության նախագահի հասարակայնության հետ կապերի վարչության տեղեկատվության մեջ մասնավորապես ասված էր. «Նախագահ Սեզերը Վրաստան կատարած այցի ընթացքում առաջարկել է Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրել պայմանագիր անվտանգության ոլորտում համագործակցություն ծավալելու, ահաբեկչության, թմրադեղերի մաքսանենգության և կազմակերպված հանցագործության դեմ համատեղ պայքարի վերաբերյալ: Նույն առաջարկն արվել է նաև Ադրբեջանի նախագահ Ալիևին և արժանացել վերջինիս հավանությանը»³¹:

2002 թ. ապրիլի 29–30-ը Թուրքիայի Տրապիզոն քաղաքում տեղի ունեցավ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը: Երեք երկրների նախագահների հանդիպումից հետո անցկացվեցին այդ երկրների բարձրաստիճան պատվիրակությունների բանակցությունները, որոնց շրջանակներում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ՆԳ նախարարների կողմից ստորագրվեց «Ահաբեկչության, կազմակերպված հանցագործության, թմրանյութերի ապօրինի վաճառքի, փողի լվացման, մարդկանց առևանգման, զենքի մաքսանենգության և այլ հանցագործությունների դեմ համատեղ պայքարի վերաբերյալ» համապարփակ պայմանագիր, որը իրավական հիմք էր ստեղծում այս բնագավառում եռակողմ համագործակցություն ծավալելու համար³²:

Այսպիսով՝ 90-ական թվականների կեսերին Թուրքիային հաջողվեց էապես ամրապնդել իր դիրքերը Վրաստանում, ինչը մեծապես պայմանավորված էր թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացմամբ: Ինչ խոսք, դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Վրաստանը 90-ական թվականների երկրորդ կեսից ակնհայտորեն արևմտամետ քաղաքականություն էր վարում և ձգտում էր սերտացնելու հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Միջազգային զարգացումների և հատկապես՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետևանքով ԱՄՆ-ի ավելի ակտիվ ներգրավվածությունը հետխորհրդային տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներում նույնպես էական դեր խաղաց Վրաստանում Թուրքիայի դիրքերի ամրապնդման համար:

³⁰ Տե՛ս «Caspian news agency», 2001, 9 November:

³¹ «Turkish Daily News», 2001, 17 November.

³² Տե՛ս «Star», 2002, 1 May; «525ci Gazetesi», 2002, 2 Mayıs:

Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո թուրք-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները թևակոխեցին համագործակցության նոր փուլ: Վրաստանը, ձգտելով հնարավորինս շուտ ազատվել իր երկրում Ռուսաստանի ռազմական ներկայությունից, ջանքեր է գործադրում, որպեսզի զարգացնի ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունները, որոնց շրջանակներում Վրաստանը մեծ տեղ է տալիս հատկապես Թուրքիայի հետ համագործակցությանը: ՌԻստի պատահական չէ, որ ռուս-վրացական հարաբերությունների լարվածության պայմաններում Վրաստանի ղեկավարությունը բազմիցս նշել է ռուս խաղաղապահներին միջազգային խաղաղապահներով փոխարինելու կարևորությունը, ընդամին այստեղ պետք է ծանրակշիռ լիներ Թուրքիայի մասնակցությունը:

Թուրք-վրացական ռազմաքաղաքական և աշխարհատնտեսական համագործակցության սերտացումը կարող է բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի համար: Մասնավորապես՝ Վրաստանը ակտիվորեն մասնակցում է մի շարք տարածաշրջանային նախագծերի, որոնք կարող են հանգեցնել ոչ միայն տարածաշրջանում Ռուսաստանի՝ որպես թուրք-ադրբեջանական դաշինքի ռազմաքաղաքական հակակշռի ազդեցության նվազմանը, այլև տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներից Հայաստանի մեկուսացմանը: Խոսքը առաջին հերթին վերաբերում է նավթի ու գազի տեղափոխման Բաքու–Թբիլիսի–Ջեյհան և Բաքու–Թբիլիսի–Էրզրում նախագծերին:

Հատկանշական է, որ ըստ նախնական պլանի՝ Բաքու–Ջեյհան նավթամուղը պետք է անցներ հարավկովկասյան երեք հանրապետություններից որևէ երկուսի տարածքով: Այն պետք է սկիզբ առներ Ադրբեջանում, այնուհետև անցներ կա՛մ Վրաստանի, կա՛մ Հայաստանի տարածքով: Սակայն Հայաստանի տարբերակը Ադրբեջանի և Թուրքիայի համար անընդունելի էր երեք հիմնական քաղաքական պատճառներով: Նախ՝ լուծված չէր Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կապակցությամբ, երկրորդ՝ Թուրքիան, ելնելով Ադրբեջանի հետ սերտ գործակցությունից, փակել էր Հայաստանի հետ իր սահմանները, երրորդ հիմնական պատճառը Հայաստանի և Թուրքիայի միջև առկա քաղաքական լարվածությունն էր՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ:

Ահա սրանք էին հիմնական պատճառները, որ շրջանառության մեջ դրվեց Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նախագիծը՝ որպես հիմնական գործընկերների համար քաղաքականապես ամենանպատակահարմարը, թեև այն ավելի երկար ու ավելի թանկ նախագիծ էր:

Սինույն ժամանակ միջազգային որոշ շրջաններ շահագրգռվածություն էին ցուցաբերում նավթամուղը Հայաստանով տանելու հարցում՝ այդ քայլը դիտելով որպես Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման լուրջ գրավական: Այս տարբերակի ջատագովներից էր Լեռնային Ղարաբաղի հարցով նախկին բանակցող Ջոն Մարեսկան, որի կարծիքով վերոհիշյալ նավթամուղը կարող էր օգտագործվել որպես լուրջ դրոսպատճառ, որպեսզի հակամարտող կողմերը վերջ

դնեն հակամարտությանը և հայերի ու ադրբեջանցիների համար երաշխավորեն կայունությունն ու բարեկեցությունը³³:

Որոշակի հակահայկական ուղղվածություն ունի նաև թուրք-վրացական տարածաշրջանային համագործակցության մեկ այլ ծրագիր՝ Կարս–Ախալքալաք–Թբիլիսի երկաթուղու կառուցման նախագիծը, որի իրականացումը Հայաստանի համար կունենա անբարենպաստ հետևանքներ մի քանի տեսանկյունից: Նշված նախագծի իրագործման հետևանքով Հայաստանը կկորցնի տարածաշրջանում իր կարևոր խաղաթղթերից մեկը. Կարս–Գյումրի երկաթուղին այլևս չի լինի հարավկովկասյան տարածաշրջանը Թուրքիայի հետ կապող միակ երկաթուղին: Մինչև ժամանակ, այդ երկաթգծի շրջանում մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման դեպքում Թուրքիան կարող է զգալիորեն ամրապնդել իր դիրքերը Վրաստանի հայաբնակ Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում, ինչը կարող է սպառնալիքներ ստեղծել տեղի հայերի անվտանգության համար:

Ամփոփելով՝ նշենք, որ ներկայումս Վրաստանը Հայաստանի համար կարևոր տարանցիկ երկիր է³⁴: Սակայն Թուրքիան, շրջափակման ենթարկելով Հայաստանը, ձգտում է Վրաստանին ներառել թուրք-ադրբեջանական համագործակցության ոլորտի մեջ, ինչը Հայաստանի համար նույնպես վտանգավոր է իր ազգային անվտանգության տեսանկյունից, քանզի դա կարող է հանգեցնել ոչ միայն Հայաստանի արտաքին առևտրի ծավալների ու բեռնափոխադրումների կտրուկ նվազմանը, այլև լրջորեն սպառնալ Վրաստանի հայաբնակ շրջանների անվտանգությանը:

Հայաստանը, որի արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից մեկն է տարածաշրջանում նոր բաժանարար գծերի ձևավորման բացառումը, պետք է հնարավորինս արդյունավետ օգտագործի Վրաստանի հետ գործակցության ամբողջ ներուժը, որպեսզի վերջինս ավելի հավասարակշռված քաղաքականություն վարի իր հարևան երկրների, մասնավորապես՝ Հայաստանի հետ հարաբերություններում՝ խուսափելով միակողմանի քաղաքականությունից:

³³ Տես *John J. Maresca*. Using oil to stop a nasty war. «Journal of Commerce», 1994, 1 August:

³⁴ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 42:

ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ. Ս. ԴԱԼԼԱՔՅԱՆ, փոխգնդապետ, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի
ռազմական քաղաքականության ամբիոնի ադյունկո

Վերջին տասնամյակում սոցիալական փոփոխության ոլորտի բազմաթիվ հետազոտություններ և հրապարակումներ նվիրված են մի երևույթի, որն ստացել է «համընդհանրացում» անվանումը: Իր դրսևորումների բազմազանության պատճառով քաղաքագետների և համաշխարհային հասարակության կողմից այդ երևույթի մեկնաբանությունը հակասական է և հաճախ՝ փոխբացառող: Այն դարձել է սուր քաղաքական վիճաբանությունների և ակադեմիական քննարկումների առարկա, ինչը նրա ուսումնասիրվածության անբավարարության և հետագա հետազոտությունների անհրաժեշտության վկայությունն է:

Համընդհանրացման ակունքները: Համընդհանրացման երևույթի ակունքների ու ծագման մասին հետազոտողների կարծիքները տարբեր են: Մենք չենք կարծում, թե համընդհանրացումը գիտատեխնիկական հեղափոխության և բարձր տեղեկության տեխնոլոգիաների արգասիք է: Մարդու սոցիալականացման գործընթացի բուն էության մեջ ի սկզբանե դրված է համընդհանրացման երևույթը, քանի որ «հոմո սապիենսի» (*homo sapiens*) կենսաբանական-սոցիալական էությունը, մարդու բնույթն ու սոցիետալությունը համընդհանուր են:

Անհիշելի ժամանակներից մարդկության պատմությունն ուղեկցվել է համընդհանրական գործընթացներով՝ սկսած ժողովուրդների Մեծ գաղթից, որը խարխլեց տոհմացեղային պարփակվածությունն ու միավորեց մասնատված էթնիկական հանրությունները, մինչև Հին Արևելքի՝ Ալեքսանդր Մակեդոնացու, Հին Հռոմի համաշխարհային կայսրությունների, Բյուզանդիայի առաջացումը: Որակական առումով համընդհանրացումը սովորական երևույթ է. նոր անվան տակ թաքնված են փոխկախվածության աճման և միասնական աշխարհատարածքի ձևավորման վաղուց հայտնի գործընթացները, որոնք ընդամենը քանակական փոփոխությունների են ենթարկվում և այլ ձևեր ընդունում:

Ամբողջ աշխարհի միավորման, համամարդկային, տեղային, էթնիկական արժեքների դիալեկտիկական համատեղման, համամոլորակային «բարեկեցության արդարացի հասարակության» ստեղծման ու նրա կառավարման գաղափարը առօրեական է նաև նորագույն ժամանակներում. օրեցօր այն փոխակերպվում և իրական բովանդակություն է ստանում: «Աշխարհը վերապրում է նվաճումների նոր դարաշրջան, և եթե նախկինում որպես գլխավոր նվաճողներ հանդես էին գալիս պետությունները, ապա այժմ այդ դերը ստանձնել են մասնավոր արդյունաբերական ու ֆինանսական խմբերը», գրում է ֆրանսիական «Մոնդո դիպլոմատիկ» ամսագիրը¹:

Թեև ներկայումս հայեցակարգային բնութագրերի չափանիշները բավական հա-

¹ Տես «Санкт-Петербургские ведомости». № 37 (2197), 10 ноября 2000 г.:

կասական և անորոշ են, այդուհանդերձ բնական և հասարակական երևույթների համակարգված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս տարանջատելու իրականության առավել էական միտումները, որոնք սկզբունքային նշանակություն ունեն համընդհանրացման սոցիալական երևույթի էության ըմբռնման համար:

Տեղեկատվության և հաղորդակցության զարգացումը: 20-րդ և 21-րդ դարերի սահմանագծին տեղի ունեցավ տեղեկատվական տարածության ինտենսիվ հանրայնացում. այն արդեն չի տեղավորվում (մասնակիորեն կամ ամբողջովին) այժմյան աշխարհատնտեսական կապերի, հասարակական հարաբերությունների կառուցվածքում և չի ենթարկվում ուժային կարգավորման: Արդեն մեր օրերում համաշխարհային հեռահաղորդակցային արդյունաբերությունը, տնօրինելով 800 մլրդ ԱՄՆ-ի դոլար, համարվում է գաղափարների և տեղեկատվության ուղեկցորդ: Դժվար է նշել մի երկիր, որն այս կամ այն չափով կախված չլինի համաշխարհային տեղեկատվական համակարգից: Հետևաբար, այսօրվա աշխարհը տեղեկատվական սահմաններ չունի². ընթանում է տեղեկույթի անարգել ու չկառավարվող արտադրություն և տարածում: Տեղեկատվական տեսանկյունից մեր մոլորակը, կարծես, իր ծավալներով փոքրանում է:

Մարդու հեռա- և տրանսպորտային հաղորդակցման հնարավորությունների (IP հեռախոսակապ, երկաթուղի, ավտոտրանսպորտ, ավիացիա) զարգացումն ու լայն տարածումը հանգեցրել են ժամանակի և տարածության ընկալման փոփոխմանը. ի հայտ են եկել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «ժամանակի խտացումը», «հեռավորության վերացումը»՝ հեռավորություններն արդեն այնքան մեծ չեն թվում, որքան նախկինում: Հեռահաղորդակցման և բեռնափոխադրման գների իջեցումը հսկայական խթան էր գովազդի զարգացման, խորհրդատվության (կոնսալտինգի) համար. հաշվված վայրկյաններում կարելի է գգալի ծավալներով տեղեկույթ հաղորդել: Տեղեկույթի հաղորդման գինը 20-րդ դարի 60-ական թվականների համեմատությամբ նվազել է ավելի քան հազար անգամ, իսկ արագությունն աճել է մոտ 300 հազար անգամ:

Ժամանակակից տնտեսության փոխկապվածությունը և փոխկախվածությունը: Հետարդյունաբերական տեղեկության հասարակության առաջընթացն իր հերթին արմատապես վերափոխեց կապիտալիստական արտադրածը՝ նշանավորելով քաղաքակրթության բնական-տարերային զարգացման ավարտը և արտադրության միջազգայնացման ավելի ու ավելի դինամիկ դարձող գործընթացը: Մի շարք հեղինակավոր փորձագետների կարծիքով՝ համընդհանրացումը նշանավորում է զարգացման հարացույցի փոփոխությունը, նա ժամանակակից տեխնաձին քաղաքակրթության որակապես նոր ձև է՝ հանդես գալով որպես ամբողջ մարդկության բնական պատմական ոչ համաժամանակյա զարգացման բարձրագույն փուլ:

Այժմյան տնտեսական աշխարհը այն աստիճան փոխկապված է, որ մի պետության տնտեսական անհաջողությունները անխուսափելիորեն անդրադառնում են մեկ այլ պետության տնտեսական համակարգի վրա. 1982 – 1988 թթ. Կարիբյան ավազա-

² Տես *Ճ. Կոմարոֆֆ*. Национальность, этничность, современность: политика самосознания в конце XX века. В кн.: «Этничность и власть в полиэтничных государствах». М., 1994, с. 46:

նի երկրներում փակվեց մոտ 400 հազար աշխատատեղ, ինչի հետևանքով ԱՄՆ հորդեց ավելի էժան աշխատուժը, որը համաձայն էր կյանքի և աշխատանքի ցանկացած պայմանների³, և այնտեղ ստեղծեց սոցիալական լարվածություն, առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության ուժեղ տատանումներ, հաշվեկշռի խախտում ինչպես աշխատուժի շուկայում, այնպես էլ երկրի ամբողջ տնտեսության մեջ: Համաշխարհային տնտեսական մրցակցության հետևանքով արտադրության տեղափոխումը էժան աշխատուժ, հումք ու էներգառեսուրսներ ունեցող երրորդ երկրներ հանգեցնում է սովյալ երկրում աշխատատեղերի կրճատմանը՝ դրանով իսկ խախտելով նրա ամբողջ տնտեսական համակարգի հավասարակշռվածությունը:

Մեծ թվով փորձագետներ համարում են, որ տնտեսության մեջ համընդհանրացման գործընթացները անհակադառնալի են և կառավարվում են շուկայական օրենքներով: Այսօր աշխարհի ավելի քան 130 երկրներ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ են, ընդ որում, նրանց թիվն անընդհատ աճում է, ինչը հաստատում է ամբողջ աշխարհի տնտեսական ինտեգրման անխուսափելիությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ առաջին 15–20 տարիներին, միջազգային առևտրի հիմնական ցուցանիշները չէին հասնում 1914 թ. մակարդակին և կազմում էին բոլոր երկրների համախառն ազգային արտադրանքի (ՀԱԱ) 10-16 %-ը: 1973–1987 թթ. ժամանակաշրջանում այդ ցուցանիշը հասավ 22 %-ի, իսկ մինչև 2015 թ. միջին տարեկան աճը կկազմի մոտ 7 %⁴: Ներկայումս ամերիկյան արժեթղթերի 1/3-ը պատկանում է Չինաստանին և Ճապոնիային⁵:

Անհաշտ մրցակցության պայմաններում տնտեսության համընդհանուր զարգացմանը զուգահեռաբար տեղի են ունենում աշխատուժի նոր միջազգային բաժանում և արտահոսք: ԱՄՆ-ի Բերկլիի համալսարանի պրոֆեսոր Մ. Քաստելյը պնդում է, որ ազգային տնտեսությունները կախված են «համընդհանրացման միջուկի» գործունեությունից: Նրա կարծիքով՝ համընդհանուր տնտեսությունը կարելի է սահմանել «որպես տնտեսություն, որի հիմնական բաղադրատարրերն օժտված են ռեալ կամ ընտրված ժամանակում աշխարհի մասշտաբով որպես ամբողջություն գործելու հաստատությունական, կազմակերպական ու տեխնոլոգիական կարողություններով»⁶:

Համընդհանրացման գործընթացները կարևոր են աշխարհի զարգացած արդյունաբերական երկրների համար, քանի որ հենց նրանք ունեն «ուղեղների արտահոսքի», ստեղծագործաբար մտածող մարդկանց, ինտելեկտի և ռեսուրսների անհամաչափ բաշխման հետևանքով՝ «մոխրագույն նյութի» ներհոսքի կարիք*։ Ըստ ՄԱԿ-ի և Բնիկ ժողովուրդների հարցերով միջազգային աշխատանքային խմբի (IWGIA) գնա-

³ Տես *Ю. Игрицкий. Национальное государство под натиском глобализации* (http://pubs.carnegie.ru/p&c/Vol4-1999/4/default.asp?n=12_igritski.asp):

⁴ Տես *М. М. Лебегава. Мировая политика. М., 2006, с. 146:*

⁵ Տես *В. А. Дергачев. Глобалистика. М., 2005, с. 172:*

⁶ *М. Кастельс. Глобальный капитализм и Россия. «Экономические стратегии», 2000, № 3.*

* Ածխի համաշխարհային պաշարների 30 %-ը, նավթի 40 %-ը, գազի 45 %-ը, երկաթի հանքարարի 44 %-ը և թանկարժեք քարերի 30 %-ը գտնվում են Ռուսաստանի ընդերքում:

հատականների՝ ցամաքի մոտ 20 %-ը (առավել արժեքավոր էկոլոգիայով) պատկանում է ավանդական մշակույթ ունեցող ժողովուրդներին⁷: Այդ գործընթացներից շահում են նաև այլ երկրներ ու էթնիկական հանրություններ. արբանյակային կապի և հաղորդակցության համակարգերի օգտագործումը չի սահմանափակվում աշխարհագրական կամ այլ հատկանիշներով: Նրանք ավելի ու ավելի են ներգրավվում համաշխարհային առաջադիմական գործընթացներում, բայց, մյուս կողմից, պատրաստ չեն բաց շուկայի և անհաշտ մրցակցության պայմաններին, ինչն արտահայտվում է ապրանքների շուկայում մրցունակության նվազմամբ և արտաքին առևտրային պակասորդի հսկայական աճմամբ:

Բնապահպանական ճգնաժամի համընդհանրացումը: Աշխարհի՝ որպես մեկ ամբողջության ձևավորման ու գործառնման մեջ էական դեր է կատարում մարդկության տնտեսական գործունեության հետևանքով կենսոլորտի գործառնության խաթարումը, որը հղի է անդառնալի, լուրջ աղետալի հետևանքներով: Որքան մարդկությունն ավելի է զարգանում (քանակապես ու որակապես), այնքան ավելի է ստիպված լինում մեծ քանակով ու արագացող տեմպերով* օգտագործելու պարենը, էներգիան, հումքն ու ռեսուրսները՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ, ինչպիսիք են ռեսուրսների սպառումը, շրջակա միջավայրի աղտոտումը, կենսոլորտի վերականգնողական հատկության ու հիմնական շրջանառության խանգարումը և այլն: Այս հարցերն էին արծարծվում Հռոմի ակումբում, շրջակա միջավայրի պրոբլեմներին նվիրված ՄԱԿ-ի գիտաժողովում և այլ գիտահավաքներում ներկայացված զեկուցումներում:

Համընդհանրացման բովանդակության տարբեր կողմերը հիմնականում դրսևորվում են ԱՄՆ-ի կողմից, որը, լինելով աշխարհի ամենահզոր պետությունը, այդ բովանդակությանը հաղորդում է իրեն հատուկ ձևն ու ոճը: Եթե հաշվի առնենք, որ ԱՄՆ-ը, որի բնակչությունը կազմում է աշխարհի բնակչության 5 %-ը, օգտագործում է աշխարհի բնական ռեսուրսների 25 %-ը, որ միջին ամերիկացին կյանքի ընթացքում շվեդացու համեմատությամբ կրկնապատիկ վնաս է հասցնում բնությանը, 13 անգամ ավելի, քան բրազիլացին, 280 անգամ՝ քան Չադի կամ Հաիթիի⁸ բնակիչը, որ բնության արդյունաբերական ռեսուրսներն իր կարիքների համար օգտագործելու հետևանքով մեկ մարդու թողած այսպես կոչված բնապահպանական հետքը** ԱՄՆ-ի դեպքում 10 անգամ ավելի է, քան զարգացող երկրներում ու կազմում է մոտ 10 հա***, սպա մարդու կենսական և սոցիալական պահանջմունքների բավա-

⁷ Տես Ю. П. Шабает, А. П. Сагохин. Этнополитология. М., 2005, с. 170:

* Երկրի բնակչության թիվը 1927–1999 թթ. աճեց 3 անգամ՝ 2 մլրդ-ից հասնելով 6 մլրդ-ի:

⁸ Տես А. Неклесса. Конец цивилизации или конфликт истории. «Международная экономика и международные отношения», 1993, № 3, *tiuli* «Актуальные вопросы глобализации». «Мировая экономика и международные отношения», 1999, № 5; Пол Кеннегу. Вступая в двадцать первый век. М., 1997, с. 49:

** Պարեն, ջուր, բնակատեղ, տրանսպորտ, առևտուր, թափոնների վերամշակում և այլն:

*** Միլիարդի յուրաքանչյուր մարդու բաժին է ընկնում միջին հաշվով 2,2 հա բնապահպանական ռեսուրս:

րարման համար անհրաժեշտ նյութական արժեքների առկա և աճող պակասորդի պատճառով «ամերիկանացման» երկարաձգումը կհանգեցնի մոլորակի վրա կյանքի վերացմանը* : Բնության նկատմամբ անհաշվենկատ գործնական-օգտապաշտական վերաբերմունքից հրաժարումը և համաշխարհային հումքային ու էներգետիկ ռեսուրսների օգտագործման արդյունավետության մեծացումը ապագա սերունդների զարգացման համար միակ հնարավոր հեռանկարներն են:

Ատոմակայանում տեղի ունեցած վթարը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների, որոնցից կտուժեն շատ երկրներ և սերունդներ: Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարը անդրադարձավ ոչ այնքան ՌԻկրաիմայի, որքան հարևան Բելառուսի վրա, իսկ ռադիոակտիվ փոշին հասավ մինչև Արևմտյան Եվրոպայի քաղաքներ: Որպես մեկ այլ օրինակ կարելի է բերել 2001 թ. սկզբին Մեծ Բրիտանիայում բռնկված դաբաղի համաճարակը, որը տարածվեց այլ երկրներում, և որի հետևանքով Արգենտինան կորցրեց մսի արտահանման ծավալի 2/3-ը⁹:

Կլիմայի փոփոխությունը և համընդհանուր ջերմացումը, օգոնային խոռոչի մեծացման աղետալի հետևանքները կազդեն առանց բացառության աշխարհի բոլոր երկրների վրա: Ըստ Կլիմայի փոփոխման հարցերով միջկառավարական փորձագետների խմբի (IPCC) զեկուցման, որի նախապատրաստմանը վեց տարվա ընթացքում մասնակցել են տարբեր երկրներից 2,5 հազար գիտնականներ, մոլորակի օդի միջին ջերմաստիճանը 21-րդ դարի վերջում կարող է բարձրանալ 6,4 աստիճանով, ինչի հետևանքով կսկսվի Արկտիկայի և Անտարկտիկայի սառցավահանի հալոցքը. ամռան կեսին ամբողջովին կհալվեն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի սառույցները, և համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա 59–79 սմ-ով¹⁰: Դրա հետևանքով երկրի բնակչության մոտ 1/5-ը կտուժի ջրհեղեղներից: Մյուս կողմից՝ էապես կընդարձակվեն անապատները և կզգացվի մշակման համար պիտանի հողերի խիստ պակաս: Բացի այդ, շոգ հասարակածային գոտին կդառնա էլ ավելի շոգ, և բնակչությունն ստիպված կլինի լքելու այն և տեղափոխվելու հյուսիսային գոտիներ, ինչը կհանգեցնի ծանր ժողովրդագրական հետևանքների, հատկապես եթե հաշվի առնենք, որ երկրի բնակչության թիվը 21-րդ դարի վերջում կհասնի մոտ 10 միլիարդի¹¹: Այս համընդհանուր խնդիրների լուծումը մտահոգում է բոլորին և պահանջում է շատ երկրների համաժամանակյա ու համաձայնեցված արդյունավետ գործողություններ:

Բրյուսելյան գազաթնաժողովում Եվրամիության անդամ երկրների ղեկավարները կլիմայի փոփոխման, ջերմոցային գազերի արտանետման և շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի շրջանակներում որոշում ընդունեցին 2009 թվականից հրաժարվել սովորական շիկացման լամպերից և անցնել էներգախնայող լյումինես-

* Օրինակ՝ հետախուզված և կանխատեսվող նավթի պաշարները Ռուսաստանի Դաշնությանը կբավականացնեն միայն 35 տարի, գազի՝ 80 տարի, ածխի՝ 150 տարի:

⁹ Տես Մ. Մ. Լեքեղևա, նշ. աշխ., էջ 149:

¹⁰ Տես <http://wek.ru/obsh/2742/>:

¹¹ Տես <http://wek.ru/news/obsh/2790/#1>:

ցենտ լամպերի, իսկ 2020 թվականից՝ ամբողջ սպառվող էլեկտրաէներգիայի 1/5-ն ստանալ վերականգնվող աղբյուրներից: Այս միջոցառումները, ինչպես նաև ածխաթթու գազերի արտանետումների կրճատման ուղղությամբ ձեռնարկված միջոցները հնարավորություն կտան նվազեցնելու մարդկության գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունը¹²:

Համընդհանուր և ընդհանուր անվտանգություն: Մարդկությունը հոգնել է հնարավոր միջուկային աղետների, համընդհանուր «միջուկային ծմռան» մշտական սպառնալիքներից: ՈՒ. Բեկը նշում է, որ այսուհետև այն ամենը, ինչ կատարվում է Երկրագնդի վրա, չի կարող հանգեցվել միայն տեղային, սահմանափակ իրադարձության, որ բոլոր աղետներն էլ համընդհանուր են¹³: «Եթե աշխարհը դառնում է փոխկախված, ապա նաև փոխխոցելի է», գրում է Վ. Կուվալդինը¹⁴: Ցանկացած ազգային, տեղային, տարածաշրջանային սուբյեկտի կամ օբյեկտի անվտանգությունը չի կարող ապահովված լինել առանց համամոլորակային հրամայականների վրա խարսխվող համընդհանուր անվտանգության ապահովման: Սահմանների թափանցիկությունը, երկրների փոխկապվածությունը և փոխկախվածությունը ստիպում են ավելի ակտիվ կերպով արձագանքել ծագող հակամարտային իրադարձություններին՝ անկախ այն բանից, թե Երկրագնդի որ կետում են դրանք տեղի ունենում:

Տեղեկատվայնացումն առաջ բերեց մի նոր երևույթ՝ կիրեռահարեկչություն, այդ թվում՝ տեղեկատվական ահաբեկչություն: Տեղեկույթի ակնթարթային հաղորդումը և բազմացումը առաջ են բերում այսպես կոչված «կրիտիկական ենթակառույցներում» սխալների հնարավոր «բազմապատկման» խնդիր, ինչի հետևանքները երբեմն դժվար է պատկերացնել: Ըստ «Ինֆորմեյշն ՈՒԻԿ» ամսագրի գնահատականների՝ 2000 թ. համակարգչային վիրուսները և ծրագրահեռնների գործողությունները մեծ բիզնեսին հասցրեցին 1,6 մլրդ դոլարի վնաս¹⁵: 2007 թ. փետրվարին Կորեական ֆոնդային շուկան 1,5 %-ով անսպասելի անկում ապրեց այն բանից հետո, երբ խաբված տեղական հեռուստատեսությունը հայտարարեց «Մայկրոսոֆտ» ձեռնարկության տնօրենների խորհրդի նախագահ Բիլ Գեյտսի մահվան լուրը: Կրած դրամական կորուստը կազմեց ավելի քան 3 մլրդ դոլար¹⁶: Հետևաբար, առաջացավ նման միջադեպերը նախականիսելու, կանխարգելելու և գործողությունները համամոլորակային մասշտաբով համադասելու անհրաժեշտություն:

Մարդկությունը ոչ այնքան բարիք է ստեղծում, որքան կոլեկտիվ բաշխվածությամբ փոխադարձ ընդհանուր ռիսկեր, այն է՝ «հազարադեմ հրեշի, որը ցանկացած

¹² Տես *Б. У. Брюссель. Прощайтесь с лампочкой накаливания. «Газета», № 47, 16 марта 2007 г.:*

¹³ Տես *У. Бек. Что такое глобализация? Ошибки глобализма—ответы на глобализацию. М., 2001, с. 27:*

¹⁴ *В. Б. Кувалдин. Глобализация—светлое будущее человечества? На пороге XXI века мегаобщество приобретает реальные очертания. «НГ сценарии», № 9 (54), 11 октября 2000 г.*

¹⁵ Տես *У. У. Լեքեղևա, նշ. աշխ., էջ 202:*

¹⁶ Տես <http://www.obozrevatel.com/news/2007/2/14/156342.htm>:

պահի կարող է ընդունել ժողովրդագրական ռուսի, թմրամոլության, մաֆիայի, միջուկային զենքի տարածման, էթնիկական մոլագարության, ՉԻԱՀ-ի, Էբոլայի վիրուսի, կազմակերպված հանցավորության, իսլամական ինտեգրիզմի, ջերմոցային էֆեկտի, անապատացման, մեծ միգրացիոն հոսքերի, ռադիոակտիվ ամպի և այլ տեսք»¹⁷: Այս բոլորը համաձորակային մասշտաբի սպառնալիքներ են, և մարդկությունն իր գոյատևումն ապահովելու համար «պետք է հրաժեշտ տա իր ռասայական, քաղաքական և այլ նախապաշարմունքներին ու նստի բանակցությունների սեղանի շուրջ», գրում է Բ. Մարկովը¹⁸: Բազմակողմանիորեն և համընդգրկուն կերպով¹⁹ ընկալվող «անվտանգության որոնումներում» առաջ են քաշվում սոցիալական գոյության համընդհանրության, այնպիսի համընդհանուր մեգահասարակության ստեղծման նոր հայեցակարգեր, որի շրջանակներում գոյություն ունեցող ազգային-պետական գոյացությունները հանդես կգան որպես քիչ թե շատ ինքնուրույն կառուցվածքային միավորներ²⁰: Հնարավոր է, որ մոտ ապագայում համաշխարհային հանրության առջև ծառանա Երկրագնդի վրա գլխավոր և անգուգական արժեքի՝ մարդու գոյության պահպանման խնդիր: Հռետեսական և սարսափազդու սցենարները կդառնան ավելի հավանական ու կործանարար, եթե մարդկությունն ստիպված լինի ծայրահեղ իրավիճակներին դիմակայելու պառակտվածության ու փոխադարձ անհանդուրժողության պայմաններում:

Էթնիկականության ժամանակակից միօրինակացումը: Համընդհանրացման գործընթացը ենթադրում է նոր աշխարհակարգի ստեղծում, մարդու կենսագործունեության տարբեր պարամետրների միօրինակացում ու ստանդարտացում, տեղային արժեքների ու առանձնահատկությունների վերացում: Համաձորակային մասշտաբով ստեղծվում է մշակութային արժեքների մի յուրօրինակ համակարգ, մի ընդհանուր կենսակերպ, որոնք տարածվում են ՉԼՄ-ների, հեռուստատեսության, տեղեկատվական կապուղիների միջոցով և չեն ճանաչում պետական կամ էթնիկական սահմաններ: Հեռուստատեսության և հաղորդակցման այլ համակարգերի միջոցով աշխարհով մեկ հաղթական արշավում են նոր արժեքներն ու բարոյականությունը, արտահանվում է զանգվածային մշակույթի տեսարտադրանքը: Վերագոյային ընկերությունների արտադրանքի ամենահաս ու կաշուն գովազդը, որը «մտցվում է» սպառողի գլուխը, ներգործում է հասարակական գիտակցության վրա և, անկախ մարդու ռասայական ու էթնիկական պատկանելությունից, ձևավորում միևնույն պահանջմունքներով՝ «մակդոնալիսներով», սպառման որոշակի ապրանքներով, նոր ապրելակերպ՝ ընդհուպ մինչև միանգամայն նոր արհեստական պահանջմունքների ու կենսագործունեության կենցաղային բնութագրերի ստեղծումը: Համաշխարհային

¹⁷ *И. Рамоне. Геополитика хаоса. М., 2001, сс. 14—15.*

¹⁸ *Б. В. Марков. Знаки бытия. «Наука», 2001, с. 549.*

¹⁹ *Stu A. Teim. Глобализация—угрозы или новые возможности для Европы? «Проблемы теории и практики управления», 1998, № 5:*

²⁰ *Stu B. Б. Кувалдин. Глобализация—светлое будущее человечества? «Внешняя политика и безопасность современной России» (http://scenario.ng.ru/printed/interview/2000-10-11/5_future.html):*

շուկայի գրեթե երեք քառորդը հեղեղված է ամերիկյան հեռուստածրագրերով և հոլիվուդյան (հիմնականում՝ ցածրորակ) ֆիլմերով, ամերիկյան փոպ երաժշտությունը հնչում է բոլոր ռադիոկայաններով և ընդունիչներով*, ամերիկյան ջինսը «ազգայնացվել» է ամբողջ մոլորակի վրա, ամբողջ աշխարհում խմում են «Կոկա-կոլա» և «Փեպսի-կոլա»: «Ամերիկյանը» ձեռք է բերում համաշխարհային մշակույթի գծեր²¹:

Երկրների մեկուսացվածության վերացման և փոխազդման անխուսափելի աճման պայմաններում էթնիկականությունը դիտվում է որպես միջէթնիկական ու միջպետական շփումներում փոխմերձեցման և ինտեգրման համար հիմնական խոչընդոտ: Այս պայմաններում հասարակության քիչ թե շատ քողարկված էթնոազգայնականացումը դառնում է առավել կենսական պրոբլեմներից մեկը, ինչն իր հերթին համընդհանրացման հիմնարար միտումներից մեկն է՝ պայմանավորված ոչ միայն տնտեսական գործոններով:

Լեզվի շեշտված էթնոազգային էությունը, որը էթնիկականության առավել ցայտուն տարբերակիչն է, իբր դժվարությամբ է համաձայնեցվում մշակույթի նորամուծության համընդհանուր հոսքերի խիստ հազեցվածության հետ: Լեզվական արգելքները բարդացնում են բարեհաջող տնտեսական գործունեությունը, դժվարացնում ամենատարբեր արտադրանքի իրացումը՝ ի հաշիվ ազգային մշակույթին նրա հարմարեցման, խանգարում են միջանձնային ու միջմասնագիտական շփմանը և համամարդկային տեղեկույթի փոխանակմանը, մարդկանց բնական մտերմությանը: Նույնիսկ կրթական ծրագրերի առումով այնպիսի միասնական երկրում, ինչպիսին Խորհրդային Միությունն էր, միութենական հանրապետությունների դպրոցներում մայրենի լեզվով ներդրվում էին նոր կրթական ծրագրերը ռուսալեզու դպրոցների համեմատությամբ մի քանի տարի ուշացումով: Սեր օրերում արդեն մի շարք լեզուներ գործածությունից դուրս են եկել: Բայց, ինչպես արդարացիորեն նշում է Յ. Շաբանը, «մշակույթների և լեզուների մրցակցություն միշտ էլ եղել է, և համընդհանրացումը չէ, որ դարձել է դրա պատճառը, այն կարող է միայն խթանել այդ երևույթները»²²: Անխուսափելիորեն անհրաժեշտ է դառնում համաշխարհային համապիտանի լեզվի գոյությունը, և այդ դերին հաճախ հավակնում է անգլերենը:

Այս պայմաններում էթնոազգային հրամայականները անխուսափելիորեն կախման մեջ են ընկնում վերազգային ընկերությունների և միջազգային հաստատությունների գաղափարախոսությունից, ստեղծվում է էթնոմշակութային միջավայրի ամբողջ համակարգի քայքայման ու ինչ-որ միջինացվածության վերածման, ավանդական էթնոազգային նույնականության, հոգևոր ու բարոյական արժեքների կորստի ռեալ վտանգ: Համընդհանրացումը գռեհկորեն համահարթեցնում է էթնոազգային արժեքները՝ անտեսելով ռացիոնալ անհատականացումը, ձգտում է մարդկանց մեջ ձևավո-

* ԱՄՆ-ում կինոարդյունաբերությանը հատկացվում է տարեկան 10 մլրդ դոլար, և նկարահանվում է միջինը 700 ֆիլմ (ցածրորակ), որոնք հեղեղում են աշխարհի կինոթատրոնները, իսկ ամերիկյան երաժշտությունը հաղորդվում է աշխարհի բոլոր ռադիոկայաններով:

²¹ Տես Յ. Բժեզինսկի. Великая шахматная доска. М., 1998, с. 38:

²² Յու. Պ. Շաբան, Ա. Պ. Սադոխին, նշ. աշխ., էջ 174:

րելու նոր ինքնություններ²³, նոր շարժառիթավորում ու գործելակերպ: Համասեռացման միտումները, էթնոսագային արժեքների ու ավանդույթների աստիճանական արժեզրկումը, իր բոլոր սոցիալական, քաղաքական ու բարոյական ինքնապաշտպանության հաստատություններով հանդերձ դիմադրող էթնիկականության կերպափոխումն ու «ապակառուցումը», էթնիկականի տերմինային արժեհամակարգում նոր նորմերի գեեիկ փոխպատրուսումը չափազանց ցավազին են, և բարոյալքող ազդեցություն են գործում մարդկանց վրա՝ առաջացնելով ճանաչողական աններդաշնակություն (կոզնիտիվ դիսոնանս) և զանգվածային հուսալքություն, անհատական ու կոլեկտիվ անօգնականության և անտարբերության զգացում: Այս սոցիոմշակութային քառսի պայմաններում անհատական «Ես»-ը «վերակառուցավորվում» է, բախվում վերացարկվելու և համընդհանուր «Ես»-ի մեջ տարրալուծվելու միտումներին, ընդամին անտեսվում են էթնիկական «Ես»-ի յուրօրինակությունն ու անկրկնելիությունը:

Բայց մարդ արարածը, լինելով տարբեր տեսակի սոցիոմշակութային վերափոխումների նկատմամբ առավել բացն ու զգայունը, այդ ամենի այդքան արագացած ընկալմանը պատրաստ չէ: Նա չի ընդունում նման միտումները որպես իրեն ոչ հարազատ երևույթներ և պատրաստ է ակտիվորեն դիմակայելու դրանց, ինչը մարդու էությանը դրանց անհամապատասխանության, էթնիկական զանազանության միաձուլման անբնականության վկայությունն է: Այս գործընթացում էթնիկականությունն անխուսափելիորեն սոցիալական նշանակություն է ստանում հանրության բոլոր անդամների համար: Էթնիկական հատկանիշով միավորումը դառնում է դիմակայության առավել մատչելի միջոցը²⁴ և ինքնարտահայտման գործընթացում սկսում է հանդես գալ որպես ինքնորոշվող սուբյեկտ, որը համընդհանրացման սկզբնավորմամբ հետզհետե ձեռք է բերում սոցիալական բնույթ: Հիմնվելով 20-րդ դարի վերջին տասնամյակների իրողությունների էմպիրիկ հետազոտությունների վրա՝ Է. Սմիթն այն կարծիքն էր հայտնել, որ տեղի է ունենում «համընդհանուր էթնիկական վերածնունդ»²⁵:

Ազգ-պետության ինքնիշխանության քայքայումը: Հետարդյունաբերական հասարակության տեսության ստեղծող Դանիել Բելը դեռ 1976 թ., կատարելով ապագայում կառուցվածքային փոփոխությունների կանխագուշակում, եկել է այն եզրակացության, որ համընդհանրացման ուժերի և ժամանակակից պետության հաստատությունների գործողության մասշտաբները միմյանց չեն համապատասխանում: Պետության մասշտաբները դառնում են մեծ պրոբլեմների լուծման համար շատ փոքր և փոքր պրոբլեմների լուծման համար՝ շատ մեծ²⁶, և, ինչպես ասացուցում է Կենիչի Օյմին, համընդհանուր տնտեսական քարտեզում այժմ առանձնակի կարևորություն են ստանում «տարածաշրջան-պետությունները», որոնց սահմանները և ուրվագծերը

²³ Տես *В. Б. Кувалдин*. Глобализация—светлое будущее человечества? Внешняя политика и безопасность современной России:

²⁴ Տես *Ф. Фукуяма*. Доверие. Новая постиндустриальная волна на Западе: антология. М., 1999, с. 161:

²⁵ Տես *Э. Смит*. Национализм и модернизм. М., 2004, с. 388:

²⁶ Տես *Վ. Ա. Դերաշևի*, նշ. աշխ., էջ 46:

նշում է ապրանքների ու ծառայությունների համընդհանուր շուկայի հաշվենկատ, «անտեսանելի ձեռքը», իսկ դեկավարման կոշտ, կենտրոնացված համակարգերը կա՛ն դժվար ժամանակներ են ապրում, կա՛ն ընդհանրապես սկսում են փլուզվել²⁷:

Համընդհանրացումն առաջին հերթին ծնունդ է առնում կապիտալիստական արտադրաձևից, որի համար ազգային պետությունների սահմանները նեղ են: Կապիտալացումը (արտադրության կապիտալիստական եղանակը) դուրս է գալիս առանձին պետության տնտեսական շահերի շրջանակից ու թելադրում է իր պայմանները. առաջին հերթին պահանջում է, որ միջազգային կապիտալի անարգել ու անվտանգ տեղափոխումների համար ստեղծվի միանման իրավական-քաղաքական դաշտ: Շատ հեղինակներ այն տեսակետին են, որ համընդհանրացման էությունը անդրասահմանային տեղափոխությունների կամ սահմանների աճող թափանցիկության մակարդակների բարձրացումն է²⁸: Ժամանակակից զարգացած հետարդյունաբերական համաշխարհային կապիտալացումը սրընթաց կերպով ընդարձակում է վերազգային բնույթ ունեցող իր գործունեության ոլորտները, որոնք չեն կարող պարփակվել բացառապես մեկ պետության սահմաններում, անարգել կերպով նոր շուկայական պայմաններ է թելադրում տարբեր պետությունների՝ հաշվի չառնելով նրանց ազգային շահերը: Քաղաքացիական և բարոյական պատասխանատվությունից հեռու մնալու, ազգային պարտավորություններն ու սոցիալական ժողովրդավարության բոլոր ձեռքբերումները դեն նետելու ներհուն ձգտումը նրան դարձնում են «փոխադրունակ», և «էժան հարստության» իր որոնումներում նա, ըստ Ա. Պանարինի, «օգտվելով «արտատարածքայնության» իրավունքից՝ հեշտությամբ պատվաստվում է ցանկացած այլ հանրությունների»²⁹: «Միջազգային խմբավորումները դառնում են համաշխարհային տնտեսական գործընթացի ավելի ազդեցիկ սուբյեկտներ, քան առանձին պետությունները: Դրա հետ կապված է... կոնկրետ ինտեգրացիոն խմբավորմանը պատկանելության դերի աճումը», գրում է Մ. Պորտնոյը³⁰: Պետությունը ցուցաբերում է սոցիալական հարաբերությունների, միջպետական և ներպետական դրամաշրջանառության կարգավորման, օֆշորային գոտիներում բանկային հաշիվներ ունեցող տնտեսական սուբյեկտների հարկման, «օգտակար տեղեկույթի» հոսքի վերահսկման և դրսից ստացվող տեղեկույթի գտման անկարողություն* : Զանգվածային հաղորդակցման համակարգերի զարգացումը հանգեցրել է

²⁷ Stu K. *Ohmae*. The rise of the Region-state. «Foreign Affairs», 1993, № 72 (2), P. 78:

²⁸ Stu П. *Катценштейн, Р. Кохэн, С. Краснер*. «Международная организация» и исследования вопросов мировой политики. Мировая политика и международные отношения в 1990-е годы: взгляды американских и французских исследователей. М., 2001, сс. 74—77:

²⁹ А. С. *Панарин*. Постмодернизм и глобализация: проект освобождения собственников от социальных и национальных обязательств (<http://www.filgrad.ru/texts/panarin.htm>).

³⁰ М. А. *Портной*. Современные тенденции мировых интеграционных процессов. США, 1997, № 8, с. 13.

* Որոշ պետություններ սահմանափակում են Ինտերնետի հասանելիությունը պրովայդերների վերահսկման միջոցով, սակայն դա գնալով դժվարանում է:

չկարգավորվող էլեկտրոնային առևտրի և վիրտուալ ֆինանսական շուկայի առաջացմանը: Այսպես, ըստ «Էոնստ և Յանգ» ֆիրմայի գնահատման՝ 1999 թ. Եվրոպայում Ինտերնետով գնումներ կատարողների թիվը կազմել էր մոտ 9 մլն մարդ³¹: Այսօր արդեն որոշ վերազգային ընկերությունների եկամուտը գերազանցում է միջին պետության եկամուտը* : Մեծ թվով հեղինակավոր տեսաբաններ խորապես համոզված են, որ ընթացում է արդիական սոցիալականացում, որ ինքնիշխան պետությունը, որպես մասնավոր սեփականության (մասնավոր-սեփականատիրական սոցիալական հարաբերությունների ոգու) անխոնջ պահապան, անխուսափելիորեն դատապարտված է բնական վախճանի: «Համաշխարհային տնտեսության առաջացումը խարխուլում է ազգային պետությունները և... հանգեցնում ազգային տնտեսությունների քայքայմանը», գրում է Վ. Տուրանը³²: Հայտնվելով միջազգային մրցակցության պայմաններում՝ ազգային տնտեսություններն անկարող են դիմադրելու վերազգային ընկերություններին և «հանձնվում են» նրանց ղեկավարմանը՝ դրանով իսկ կախման մեջ ընկնելով նրանցից:

Ձեյմս Ուորհոլան պնդում է, որ պետությունները համընդհանուր գործոնների ազդեցությամբ արդեն սկսել են արմատապես փոխել իրենց էությունը³³: Համընդհանուր հարաբերությունների կառուցվածքում 350 տարիների ընթացքում աշխարհակարգի հիմքը հանդիսացող Վեստֆալյան «ինքնիշխան» ազգ-պետությունների «փակ» համակարգն իրեն սպառել է: Հետագոտող Պ. Խմիլովն իր հերթին այլ կարծիք է. նա համարում է, որ համընդհանրացումը ոչ մի կերպ չի սահմանափակում ազգ-պետության ինքնիշխանությունը: Համաձայն տվյալ տեսակետի՝ համընդհանրացումն ընդունում է մնացած աշխարհի նկատմամբ համընդհանրացած պետությունների լայնածավալ գավթողագործության բնույթ, և կարելի է խոսել միայն որոշ գործառույթների վերացման մասին, գործառույթներ, որոնց փոխարեն նրանք ձեռք են բերում այլ՝ ոչ պակաս կարևորները: Ըստ այդ հեղինակի՝ աշխարհատնտեսական համակարգի միջուկը կազմող վերազգային կազմակերպությունները գործում են համաձայնորակային մասշտաբով, բայց նրանց տնտեսական հզորությունը պատկանում է այն առանձին պետություններին, որոնց տարածքում գտնվում են նրանց ղեկավար կենտրոնները, և կազմում են հավասարակշռված տնտեսական-աշխարհագրական համալիրի կարևորագույն մասը³⁴: Բայց, ինչպես նշում է Ա. Նեկլեսան, վերազգային

³¹ Տես *U. U. Lephkova*, նշ. աշխ., էջ 153:

* Վերազգային ընկերությունների գծով ՄԱԿ-ի կենտրոնը 1970 թ. այդ ընկերությունների շարքը դասեց մեծ ծավալի՝ 1 մլրդ, շրջանառություն և արտասահմանում ակտիվներ ունեցող ձեռնարկությունները: Հետագայում առաջին ցուցանիշը ավելացվեց մինչև 2 մլրդ, իսկ վերազգային բանկերի համար՝ 4 մլրդ դոլար:

³² *B. A. Turan*. Глобальные проблемы современности. М., 2001, с. 39.

³³ Տես *J. Warhol*. Politicized ethnicity in the Russian Federation: dilemmas of state formation. Lewiston—Queenston—Lampeter, 1996, P. 110:

³⁴ Տես *П. Н. Хмылёв*. Глобализация как социально-философская проблема. «Глобализация в социально-философском измерении. Сборник материалов конференции СПб», 2003, сс. 11—13:

կառույցները, ֆինանսաբանկային ցանցերը և այլ կազմակերպություններ ստեղծում են նոր սերնդի ներազդման լծակներ, որոնք հնարավորություն են տալիս պլանաչափ ու արդյունավետ կերպով ազդելու այս կամ այն երկրում կամ երկրների խմբում տիրող իրավիճակի վրա, երբեմն՝ հակառակ տեղի բնակչության կամքին³⁵: Մեծ թվով զարգացած երկրներ նախաձեռնում են իրենց ազգային տնտեսական քաղաքականության շահերին հակասող քայլեր:

Այսպիսով՝ սոցիալական էվոլյուցիայի հիմնարար օրինաչափությունները ոչ միայն վերափոխում են ներկայիս պայմաններում հնացած ու զանգվածային չթույլատրված «շտկումների» ենթարկվող ազգ-պետության վարքը, այլև օբյեկտիվորեն քայքայում են նրա ինքնիշխանությունը: Հետևաբար, պատմական հեռանկարում անխուսափելի է պետության կերպափոխումը ավելի ճկուն գոյացության, որն ավելի լավ հարմարված կլինի համընդհանրացած հանրության համակարգի կառուցվածքին, կարևորություն չի տալիս տարածքային ամբողջականությանը, առաջնային է համարում ոչ թե հազարամյա ավանդույթներով ու նախապաշարմունքներով գեր-ժանրաբեռնված սկզբունքները, այլ օպերատիվ շահերն ու մրցունակ քաղաքականությունը: Այդպիսի հասարակությունում, համարում է Ռ. Կուպերը, առանձնահատուկ նշանակություն կստանա անհատը³⁶, իսկ ազգային օրենսդրություններն աստիճանաբար իրենց տեղը կզիջեն մի ընդհանուր, համաշխարհային օրենսդրության³⁷, հետևաբար, սոցիալական էվոլյուցիայի հետազգային փուլը կհանգեցնի «տարածքային ամբողջականության» երևույթի ու ռազմաշունչ ազդեցիվ պետական քաղաքականության վերացման:

«Ինչպիսին էլ լինեն ազգ-պետությանը հատուկ ուժեղ կամ թույլ կողմերը, նա մնում է որպես արագ փոփոխվող համընդհանրացած միջավայրի հիմնական կառուցվածքային ստորաբաժանում,–գրում է Ֆիլիպ Կեռնին,–բայց, այդուհանդերձ, նա այլևս երբեք չի լինի այնպիսին, ինչպիսին նախկինում է եղել»³⁸: Չառլզ Թիլին ենթադրում է, որ հեռանկարում կառաջանան պետությունների նոր մոդելներ, որոնք ոչ թե կմիօրինակացնեն, այլ կներառեն իրենց բնակչության մշակութային բազմազանությունը³⁹: Բրիտանական հայտնի դիվանագետ Ռ. Քուպերը մեզահասարակության կազմակերպման նոր համակարգ է համարում կոոպերատիվ կայսրությունը, ընդհանուր ազատությունն ու անվտանգությունը՝ առանց կենտրոնացված բացարձակապետության, էթնիկական գերիշխման և (կամ) էթնիկական բացա-

³⁵ Տես *А. И. Неклесса. Конец цивилизации, или Зигзаг истории. «Знамя», 1998, № 1:*

³⁶ Տես *Роберт Купер. Постсовременное государство и мировой порядок. «Прогнозис», 2006, № 1 (5):*

³⁷ Տես *С. Ковалев. Право на самоопределение и будущий миропорядок. «Неприкосновенный запас», 2003, № 2 (28):*

³⁸ *Ph. Cerny. The changing architecture of politics: structure, agency, and the future of the state. London, 1990, P. 246.*

³⁹ Տես *Ch. Tilly. National States. «The Formation of National States in Western Europe», 1975:*

ռիկության⁴⁰: Այդ համակարգի հիմքում դրված կլինի հետարդիական պետությունը՝ ավելի բազմակարծիքային, ավելի բարդ ու սակավ կենտրոնացված, քան ժամանակակից բյուրոկրատական պետությունը:

⁴⁰ Տես Վ. Ա. Դերգաշև, նշ. աշխ., էջ 284:

ԻՍԼԱՄԸ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳՈՒՄ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր

21-րդ դարը մարդկության պատմության մեջ կմտնի համաշխարհային չափանիշներով նշանավորվող էական իրադարձություններով, այդ թվում՝ «սառը պատերազմի» ավարտը ավետող ռազմավարական հաշվեկշռի խախտմամբ և երկբևեռ աշխարհի անէացմամբ: Փաստորեն, համընդհանրացման գործընթացը մի յուրօրինակ մարտահրավեր է նետել մարդկությանը: Այդ մարտահրավերին պատասխանելու համար անհրաժեշտ է փաստել տեղի ունեցող բազմաշերտ փոփոխությունների հակասականությունը: Այդ հակասություններից առավել էական են՝

— մի կողմից՝ փոխկապված աշխարհում համամարդկային շահերի առանձնահատկությունների, համընդհանրացման և մույնականացման ձգտումների, մյուս կողմից՝ ազգերի, հանրությունների և անհատների ինքնորոշման միջև գոյություն ունեցող հակասությունները,

— տարբեր տեղային քաղաքակրթությունների համատեղելիության կամ անհամատեղելիության հիմնահարցերը, որոնք ավելի ակնառու են դառնում՝ պայմանավորված համընդհանրացման գործընթացի արագացմամբ և հատվածայնությամբ:

Կարևորելով այս հակասությունները՝ փորձել ենք ներկայացնել այն միջավայրը, որում գտնվում է Հայաստանը և ստիպված է լուծելու իր լինելության դժվարին հիմնախնդիրները: Միևնույն ժամանակ, ցանկացել ենք ՀՀ կառավարող վերնախավի ուշադրությունը հրավիրել նոր աշխարհակարգում ձևավորվող համագործակցության մշակույթի ուսումնասիրման անհրաժեշտության վրա, համագործակցություն, որը ենթադրում է և՛ քաղաքակրթությունների երկխոսություն, և՛ ազգային ինքնության բնականոն արդիականացում: Այս նկատառումներով շեշտադրել ենք՝ «Ովքե՞ր են մեր հարևանները, և ու՞ր է գնում աշխարհը, արդյո՞ք ունակ ենք փոխվելու հանուն մեր ապագայի»: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իսլամի և Արևմուտքի հարաբերություններին հաճախ բնորոշ են եղել փոխադարձ բացասումն ու բախումը, կարծում ենք, որ ՀՀ ազգային անվտանգության շահերի հաշվառմամբ նպատակահարմար չէ իսլամը դիտարկել որպես ահաբեկչության պատվար: Պետք է քաջ գիտակցել, որ, չնայած իր տարանջատվածությանը, իսլամը կարողացել է ճկուն արժեհամակարգի շնորհիվ արդիականանալ ու պատասխանել ոչ միայն պատմության մարտահրավերներին կամ մարտահրավերներ ուղղել, այլև ձևավորել «քաղաքակրթություն-

ների երկխոսության» հայեցակարգը՝ այն առաջարկելով որպես մարդկության առաջ կանգնած խնդիրների այլընտրանքային լուծում¹:

Այս նկատառումներով էլ իսլամի արժեհամակարգի նկատմամբ հետաքրքրությունը հատկապես սեծացավ 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո: Չարգացած և զարգացող երկրների բազմաթիվ քաղաքական գործիչներ, տեսաբաններ, փորձագետներ իրենց ուշադրությունը սևեռեցին մահմեդական աշխարհին՝ իսլամը դիտարկելով նոր աշխարհակարգում և զուգահեռներ տանելով իսլամի և ահաբեկչության, իսլամի և ժողովրդավարության, իսլամի և քրիստոնեության միջև: ՁԼՄ-ները և Ինտերնետը պարբերաբար քննարկում են «Սրբազան պատերազմը հասնում է Ամերիկա», «Իսլամը պաշարման մեջ», «Իսլամի նոր արևածագը, նոր համաշխարհային արշավ աշխարհիկ պետության դեմ», «Ջիհադ Ամերիկայում», «Իսլամի արժեքները և մարդկությունը» խորագրերը կրող նյութեր²: Հանրագումարի բերելով Ֆ. Ֆուկույամայի «Պատմության վերջը», Ս. Հանտինգտոնի «Քաղաքակրթությունների բախումը», Հ. Քիսինջերի «Իրականության ռացիոնալ գնահատումը», Ջ. Բեթզինսկու «Եվրասիական սրտի փշրումը»³ հայեցակարգերը՝ նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներն ուսումնասիրող ամերիկացի քաղաքագետ Է. Թոդը հանգեց այն եզրակացությանը, որ «պատմության նպատակը ցանկացած կրոնի արժեհամակարգի արդիականացմամբ ուղեկցվող ազատական ժողովրդավարության համապիտանիացումն է»⁴: Ուշագրավ է Ջոն Վոլի կարծիքը. նա, մերժելով արդիականացումը որպես միայն արևմտականացում ներկայացնելու փորձերը, այն համարում է «աշխարհի պատմության մի շրջան», որը բնութագրվում է «այնպիսի կայուն գործընթացներով, որոնք վերջ են դնում միջնադարյան քաղաքակրթության ավանդական կենսակերպին»⁵: Ջ. Վոլը այն կարծիքին է, որ արդիականացումը կարող է ընդունել տարբեր ձևեր, որոնք «իրենց ձևավորումը կստանան մարդկության ամենատարբեր մշակութային ավանդությունների հիման վրա»⁶: Դա հենց այն է, ինչ ենթադրում է իսլամական արդիականացումը. իսլամական երկրները ձևավորում են արդիականացման իրենց սեփական մոդելները, ընդամին միևնույն ժամանակ արժեքավորում են և՛ նույնականացումը, և՛ բազմակարծությունը, և՛ ինքնորոշումը՝ հավատարիմ մնալով իրենց ինքնությանը:

Իսլամի դերի նպատակամետ բացահայտումը կատարել ենք «քաղաքակրթու-

¹ Տես Յ. Յուսու. Теория диалога цивилизаций и внешняя политика ИРИ. Иран, 2003, с. 51:

² Տես <http://www.aua.am/aua/library/e-reference.htm>:

³ Տես Փ. Բուխյան. Конец истории и последний человек. М., 2004; С. Хантингтон. Столкновение цивилизаций. М., 2003; Киссинджер Генри. Нужна ли Америке внешняя политика? М., 2002; З. Бжезинский. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы. М., 1999:

⁴ E. Todd. After the Empire: The Breakdowns of the American Order. New York, 2003, P. 9.

⁵ O. J. Voll. The Mistaken Identification of «The West» with Modernity. «American Journal of Islamic Social Sciences», 1996, Vol. 13, № 1.

⁶ Նույն տեղում:

թյունների բախում» և «քաղաքակրթությունների երկխոսություն» զուգահեռների միջոցով՝ ուշադրություն դարձնելով նոր աշխարհակարգի կառուցվածքի միջուկը կազմող զարգացած երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա և այլն) իսլամի տարածման փաստին: Չարգացած երկրներում որպես «ինքնորոշված համայնքներ» ապրելով՝ նրանք հաճախ, մի կողմից, զգայական մեկնաբանություններ տալով քաղաքական իրականությանը, դառնում են էթնիկական բախումների, գոտմների, սահմանային պատերազմների և քաղաքացիական ահաբեկչության կրողներ, մյուս կողմից՝ «պասիվ» մահմեդականներ: Այս իմաստով ուշագրավ է ԱՄՆ-ի օրինակը. 1965 թ. ազատականացված էմիգրացիոն օրենքների շնորհիվ իսլամական սփյուռքն զգալի չափով համարվեց ազգային ինքնագիտակցությամբ օժտված, իրենց մշակույթին, պատմությանն ու հավատին քաջաձանոթ մարդկանցով, որոնք, աշխատելու և ուսանելու նպատակով Պակիստանից, Հնդկաստանից, Բանգլադեշից, Թուրքիայից, Իրանից և այլ իսլամական երկրներից ԱՄՆ գալով, ակտիվացրեցին ոչ միայն 1931 թ. հիմնված «Իսլամի ազգ» (*Nation of Islam*) կազմակերպությունը, այլև հիմնեցին նոր կազմակերպություններ: Այդ առումով ուշագրավ է «ԱՄՆ-ի և Կանադայի մահմեդական ուսանողների միությունը»՝ իր 300, և «Մզկիթների խորհուրդը» իր 100 մասնաճյուղերով: Համաձայն «Ժողովրդի և մամուլի եկեղեցական հետազոտությունների կենտրոնի» տվյալների՝ ԱՄՆ-ի գրեթե 10 միլիոն (6 մլն սպիտակամորթ, 4 մլն սևամորթ) մահմեդականների 10 %-ն ունի ցածր կենսամակարդակ, 52 %-ը՝ միջին, իսկ 28 %-ը կարող է համարվել հարուստ⁷:

Հետևաբար, իսլամը, որպես ելակետ ընդունելով Արևմուտք—Արևելք փոխկապվածությունը, կարող է դառնալ «քաղաքակրթությունների երկխոսություն» կրող: Ավելին. անհրաժեշտ է կարևորել ոչ միայն «քաղաքակրթությունների երկխոսությունը», այլև արժեքային բազմաչափություն ենթադրող քաղաքակրթությունների զուգամիտումը (կոնվերգենցիան)^{*}, որը դրված է նոր աշխարհակարգի ճարտարապետության հիմքում: Վերջինս, փաստորեն, մարտահրավեր է նետել մարդկությանը, բոլոր մարդկանց, որոնք համընդհանուր անվտանգության ապահովման միասնական ծրագրեր մշակելու ակնկալիքով պետք է միմյանց նկատմամբ ոչ թե անհանդուրժողություն ցուցաբերեն, այլ հաստատեն համագործակցության մշակույթ:

⁷ Տես «The Pew Research Center for the People and the Press» (<http://people-press.org/>):

* Կոնվերգենցիա (լատ. convergo՝ մոտենալ, զուգամիտել). այս հասկացությունը քաղաքական գիտությունը փոխառել է կենսաբանությունից, իսկ 20-րդ դարի 50–60-ական թթ. Պ. Սորոկինը, Ջ. Գելբրայտը, ՌԲ. Ռոստոմոն, մշակելով զուգամիտման տեսությունը, նրա կառուցվածքում են ներառել ֆուտուրոլոգիական կանխատեսումների լայն շրջանակը՝ սկսած սոցիալ-տնտեսական գործընթացների պետական կարգավորման կատարելագործման բարեփոխիչ և սոցիալ-ժողովրդավարական ձգտումներից մինչև ազատականացման և բազմակարծության միջոցով երկու համակարգերի միաձուլման հայեցակարգերը (Ջ. Բեզինսկի, Ս. Հանտինգտոն): Կոնվերգենցիայի տեսության կողմնակիցները, այդ թվում՝ Հռոմեական ակումբի ներկայացուցիչները, դրա հիմնավորման համար վկայակոչում են տնտեսական, քաղաքական և մշակութային գործունեության միջազգայնացման փաստը, գիտատեխնիկական հեղափոխության համաշխարհային բնույթը, համընդհանուր հիմնախնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությունը՝ կարևորելով և՛ բնության, և՛ բանականության բնապահպանական անվտանգությունը:

1.1. Նոր աշխարհակարգի արեղծման ճարտարապետության տրամաբանությունը

«Նոր աշխարհակարգ» հասկացությունը օգտագործվում է 1990-ական թվականներից, երբ ԽՍՀՄ փլուզմամբ ԱՄՆ-ը մնաց միակ ու դեռևս իր մրցակիցը չունեցող գերտերություն, իսկ 2001 թ. սեպտեմբերի 11-ի ողբերգական դեպքերից հետո ձեռնամուխ եղավ նոր աշխարհակարգի ճարտարապետության ձևավորմանը՝ ակտիվ պայքար մղելով ահաբեկչության դեմ⁸: «Սառը պատերազմի» ավարտը ցանկալի խաղաղություն չհաստատեց: Ակնհայտ է, որ աշխարհը դարձել է պակաս կանխատեսելի, ավելի մասնատված ու վտանգավոր, զուգահեռաբար կտրուկ աճել է ռազմական հակամարտությունների թիվը: «Ամերիկայի ազգային պաշտպանության խորհրդի հիմնադրամի» վերլուծաբանական կենտրոնի հաշվարկով՝ «սառը պատերազմի» շրջանում ռազմական հակամարտությունների մեջ ներգրավվում էին տարեկան մոտ 35 պետություն, 2000 թ.՝ 68, 2001 թ.՝ 59 պետություն: Այս պատճառով աշխարհի բոլոր ժողովուրդներին անհանգստացնում է այն հարցը, թե ինչպիսին կլինի համընդհանուր աշխարհը 21-րդ դարում, ինչ ուրվագծեր կարող է ունենալ և ինչ ռիսկով զարգանալ⁹:

Նոր աշխարհակարգը բնորոշվում է համաշխարհային կապերի բարդ համակարգով, որոնք էապես տարբերվում են աշխարհաքաղաքական հին արժեհամակարգից: Գասական աշխարհաքաղաքականությանը բնորոշ էին կոնկրետ ու ճշգրիտ բանաձևեր, տեղի ունեցող նույնիսկ արմատական փոփոխությունները չէին կարող անտեսել Ծովի և Ֆամաքի ուժային դասավորվածությունը: Մինչդեռ ԽՍՀՄ փլուզման և «սառը պատերազմի» ավարտի հետևանքով առաջացած «հետվեստֆալյան» համակարգը ձևավորեց նոր աշխարհաքաղաքական չափումներ, ու նրա ճարտարապետական կառուցվածքը հասկանալու ու գնահատելու համար գերակա է «քաղաքակրթություն» հասկացությունը: Դեռ իր ժամանակ երևան հանելով այդ հասկացության բազմաչափությունը՝ կոմս դը Միրաբոն իր «Օրենքների ընկերը» (1757 թ.) աշխատությունում քաղաքակրթությունը սահմանել է որպես «քաղաքավարություն և գիտելիք, որը տարածվում է միասնական կեցություն ենթադրող օրենքների հաստատման ակնկալիքով»¹⁰: Մինչդեռ ըստ Օ. Շպենգլերի՝ «քաղաքակրթությունը մշակույթի ճակատագիրն է», որից «մշակույթը չի կարող փախչել», քանի որ «քաղաքակրթություններն ամենաձայրահեղ և արհեստական վիճակներն են, որոնք իրականացնել կարող են միայն մարդկանց բարձր տիպերը»¹¹:

Քննարկելով այս մոտեցումը՝ Պ. Մորոկինը նշում է, որ քաղաքակրթությունը ենթադրում է «ծաղկում, հոգևոր զարգացում, մարդկային հոգու ազատություն, գիտության և արվեստի առաջընթաց»¹²: Տարբերակելով շուրջ 30 քաղաքակրթու-

⁸ Steu *И. А. Василенко*. Геополитика современного мира. М., 2006, с. 189:

⁹ Steu «National Defense Council Foundation» (<http://www.ndcf.org/>):

¹⁰ «Сравнительное изучение цивилизаций». М., 1999, с. 10.

¹¹ *О. Шпенглер*. Закат Европы. М., 1998, т. 1, с. 341.

¹² *П. Сорокин*. Социологические теории современности. М., 1992, с. 175.

յուններ՝ Ա. Թոյնբին հիմնավորում է այն դրույթը, որ «քաղաքակրթությունն իրենից ներկայացնում է մարդկային հանրույթների տեսակներ, որոնք արտահայտում են որոշակի դիրքորոշում կրոնի, ճարտարապետության, գեղանկարչության, սովորույթների և ավանդույթների, մի խոսքով՝ մշակույթի ոլորտում»¹³: Ս. Հանտինգտոնը, ելակետ ընդունելով վերոնշյալ բոլոր կարծիքները, նշում է, որ «ցանկացած քաղաքակրթության կամ մշակույթի կենտրոնական տարրեր են համարվում լեզուն և կրոնը»¹⁴: Այս արժեքային կողմնորոշման վրա նա կատարում է քաղաքակրթությունների բազմաբևեռ արժեհամակարգի ուսումնասիրում, համաձայն որի մեկնաբանում է նոր աշխարհակարգի ստեղծման ճարտարապետության տրամաբանությունը՝ առաջին պլան մղելով քաղաքակրթական բախումների պրոբլեմները:

Քաղաքակրթությունները, որոնք «մշակութային հանրույթ են»¹⁵, ունեն «մշակութային հատկանիշով մարդկանց խմբավորման ամենաբարձր մակարդակ» և «մշակութային ինքնության ամենալայն հարթություն», հետևյալներն են՝ *չինական, ճապոնական, հինդու, իսլամական, ուղղափառ, արևմտյան, լատինաամերիկյան* և (հնարավոր է) *աֆրիկյան*¹⁶: Արևմտյանն ունի երկու հիմնական տարբերակ՝ եվրոպական ու հյուսիսամերիկյան: Իսկ իսլամը ներառում է «բազմաթիվ առանձին մշակույթներ, ենթաքաղաքակրթություններ, այդ թվում՝ արաբական, թուրքական, պարսկական և մալայական»: Ընդ որում, քաղաքակրթություններն ունենում են վերելքներ ու անկումներ. նրանք *բաժանվում, միաստանվում* ու նաև *վերանում են*՝ չկարողանալով արդիականանալ քաղաքական իրականության պահանջներին համապատասխան: Ուսումնասիրելով քաղաքակրթությունների բախումը *միկրոմակարդակում* և *մակրոմակարդակում*՝ Հանտինգտոնը նշում է, որ միկրոմակարդակում այն խմբերը, որոնք քաղաքակրթությունների սահմանային գոտում են, վիճարկում են տարածքներ: Մակրոմակարդակում տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունները, տարաբնույթ դաշինքներ ստեղծելու նկատառումներով, միմյանց օգնելով, հզորանում են և վերահսկողություն սահմանում միջազգային հաստատությունների ու երրորդ ուժերի վրա: Եվ եթե համաշխարհային քաղաքականության մակրոմակարդակում (համընդհանուր) հիմնական բախումը տեղի է ունենում «Արևմուտքի և մնացած աշխարհի» (*The West and The Rest*) միջև, ապա միկրոմակարդակում (տեղային)՝ «Իսլամի և մյուս կրոնների» (*The Islam and The Rest*) միջև: Տեղային քաղաքակրթությունը ունի էթնիկական բնույթ, իսկ համընդհանուրը քաղաքակրթությունների համադրման հետևանքով առաջացած արժեքների ամբողջություն է, որը դրված է նոր աշխարհակարգի ճարտարապետության հիմքում: Նոր աշխարհակարգի կառուցվածքի նկատմամբ կիրառելով «միջուկ (կենտրոն) պետության» (*core state*) հասկացությունը՝ Հանտինգտոնը դասակարգում է ռազմավարական աշխարհը, համաձայն որի ճապոնական քաղաքակրթությունը գործնականում

¹³ А. Дж. Тойнби. Цивилизация перед судом истории. М., 1996, с. 134.

¹⁴ Ս. Հանտինգտոն, նշ. աշխ., էջ 80:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 50:

¹⁶ Տես նույն տեղում, էջ 54—56:

համընկնում է միակ միջուկ պետության՝ Ճապոնիայի հետ: Արևմուտքն ունի երկու միջուկ (կենտրոն)՝ Միացյալ Նահանգներն ու ֆրանկո-գերմանական միջուկը Եվրոպայում, և նրանց միջև՝ դրեյֆող իշխանության լրացուցիչ կենտրոնը՝ Մեծ Բրիտանիան: Ծիշտ է՝ Իսլամը, Լատինական Ամերիկան և Աֆրիկան չունեն միջուկ պետություններ, սակայն կարող են միավորվել ընդդեմ Արևմուտքի: Քանի որ Ս. Հանտինգտոնը Արևմուտքը դիտում է որպես միասնական հանրույթ, փորձելով պարզել ոչ արևմտյան հանրույթների ընդհանրությունները, եզրակացնում է, որ ծանր պատմական անցյալը ո՛չ թուրք-մահմեդականները, ո՛չ չինացիները չեն կարող շուտափույթ մոռացության մատնել: Հետևաբար, արաբաթյուրքական ենթաքաղաքակրթություններում միջուկ երկրների բացակայության պայմաններում չի կարելի խոսել Արևմուտքի դեմ ուղղված միասնական միջքաղաքակրթական կոնֆուցիական-մահմեդական դաշինքի մասին: Այդ պայմաններում «իսլամին միայն ուժեղացնում է ընդհանուր ինքնագիտակցությունը, ու մինչև այժմ ստեղծվել է բացառապես թերաճ ընդհանուր քաղաքական կառուցվածք»¹⁷:

Իր հերթին Չ. Բժեզինսկին կանխատեսում է «համընդհանուր հզորության» վեց (Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Արևելյան Ասիա, Հարավային Ասիա, Եվրասիական ողկույձ՝ «սև խոռոչ», Եվրասիական Բալկաններ՝ «տձև մահմեդական կիսալուսին») կենտրոնների առաջացումը, որոնք կարող են մտնել գաղտնի գործարքների մեջ, համագործակցել ու միմյանց հետ մրցակցել¹⁸: Այս առումով Չ. Բժեզինսկին, կարևորելով Եվրասիական Բալկանները, առանձնացնում է «Էթնիկական հակասությունների կաթսան» (Գազախստան, Գրդզստան, Տաջիկստան, ՌԻՊԵԿստան, Թուրքմենստան, Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, Աֆղանստան և երկու թեկնածու՝ Թուրքիա և Իրան): Եվրասիական Բալկանները՝ որպես «ուժի վակուում», աչքի են ընկնում ներքին անկայունությամբ, յուրաքանչյուր երկիր ունի ներքին լուրջ խնդիրներ: Ծիշտ է, Թուրքիան և Իրանը ավելի կենսունակ են, սակայն խոցելի են էթնիկական հակամարտությունների տեսանկյունից, իսկ Թուրքիան ծայրահեղ դեպքում «կարող է դառնալ, մասնակիորեն, տարածաշրջանային էթնիկական ընդհարումների գոհ»: «Եվրասիական Բալկաններում մրցակցում են Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը և Չինաստանը, մասնակիորեն ներքաշված են ՌԻԿրաիան, Պակիստանը, Հնդկաստանը և «հեռվում գտնվող Ամերիկան»¹⁹: ՌԻՀագրավ է, որ թյուրքական ժողովուրդների արեալը, ըստ էության, համընկնում է «Էթնիկական հակասությունների կաթսայի» հետ: Վերջինս Չ. Բժեզինսկուն առաջին հերթին հետաքրքրում է «սև խոռոչի», «վակուումի»²⁰ հետագա ճակատագրի առումով, ինչի միջոցով նա փորձում է կանխել «Եվրասիական կայսրության» հերթական վերածնունդը: Չհամաձայնվելով Չ. Բժեզինսկու կողմից «տձև մահմեդական կիսալուսնի» համար նախանշված դերի հետ՝ Մ. Վալցերը²¹ նոր աշխարհակարգի ճարտարապետության վերաբերյալ

¹⁷ Նույն տեղում, էջ 327:

¹⁸ Տես նույն տեղում, էջ 156—178:

¹⁹ Չ. Բժեզինսկի, նշ. աշխ., էջ 139:

²⁰ Տես նույն տեղում:

²¹ Տես M. Walzer. Governing the Globe. New York, 2000, PP. 44—52:

առաջարկում է ինքնատիպ մոտեցում՝ դիտարկելով երկու բևեռային դիրքորոշումները: Մի բևեռ նա համարել է համաշխարհային պետությունը, որն իր բոլոր քաղաքացիներին տալիս է հավասար իրավունքներ և սահմանում է հավասար պարտականություններ, իսկ հակառակ բևեռում՝ միասնական միջազգային կարգուկանոն չլինելն է, մի մարզինալացված աշխարհ՝ իր աններդաշնակ տեղեկատվական-հաղորդակցական համակարգով, որտեղ չեն գործում սերունդների համերաշխության և սոցիալական երկխոսության սկզբունքները: Ակնհայտ է, որ այս երկու աշխարհակարգերն ունեն իրենց լուրջ թերությունները: Առաջինը հանգեցնում է մշակույթների ու կենսամիջոցների ամբողջական միասնականության՝ անտեսելով ժողովրդավարական կերպավորման գործընթացում գտնվող երկրներում առկա նույնականացման ճգնաժամները: Երկրորդը վտանգավոր է, քանի որ հզոր պետությունները ձգտում են իրենց ենթարկել թույլերին, ինչի հետևանքով տեղի են ունենում պատերազմներ, ապստամբություններ, հակաինտեգրացիոն գործընթացներ, զարգանում են աղքատությունը, կոռուպցիան, մարդկանց առևտուրը և նմանատիպ այլ երևույթներ: Քննարկելով այս երկու մոդելները՝ Մ. Ռիդվիկը հանգել է այն եզրակացության, որ նոր աշխարհի կազմակերպվածքի առավել օպտիմալ համակարգ կարող է ձևավորվել, երբ նշված երկու բևեռներն ստեղծեն իրենց լայնածավալ կենտրոնը²²: Այս մոդելը նա անվանել է «երրորդ աստիճանի համաշխարհային բազմակարծություն», որը ձևավորվում է ոչ պետական կառույցների հետևյալ երեք մակարդակների առկայության պարագայում՝ կառավարման միջազգային այլընտրանքային կենտրոններ, միջազգային սոցիալական պարտականությունների անընդհատ ընդլայնվող ցանց և քաղաքացիական հասարակության միջազգային միություններ:

1.2. Իսլամում ժողովրդավարական արժեքների և մարդու իրավունքների պրոբլեմը

Նոր աշխարհակարգի պայմաններում կայուն զարգացում ապահովելու նպատակով նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ կապ կարող է լինել ժողովրդավարության և իսլամի միջև, և արդյոք դրանք միմյանց հակասող հասկացություններ են: Այս հարցի վերաբերյալ և՛ գիտական, և՛ փորձագիտական գրականությունում առկա են իրարամերժ կարծիքներ: Այսպես. իսլամական քաղաքագետ Քալիմ Սիդիքուին ժողովրդավարությունը բնորոշել է որպես «քաղաքական անհավատության» (*unbelief*) ժամանակակից գաղափարախոսություններից մեկը. «ժամանակակից աշխարհի քաղաքական ամենամեծ անհավատությունը (*kufi*) ազգայնականությունն է, որին անմիջականորեն հետևում է ժողովրդավարությունը (մարդկանց ինքնիշխանությունը), սոցիալիզմը (պրոլետարիատի դիկտատուրան), կապիտալիզմը և ազատ կամքը: Մյուս բոլոր քաղաքական համակարգերը, որոնք հիմնված են մեկ կամ մի քանի նման գաղափարների վրա, «կուֆրի» մասեր են»²³: Միևնույն ժամանակ է. Քեդուրին, կարևորելով իսլամի արդիականացման անհրաժեշտությունը, գրում է. «Ներկայա-

²² Տես Ս. Ա. Уговик. Глобализация и семеотические подходы. Ваклер, 2002, с. 423:

²³ K. Siddiqui. Primary Goals and Achievements of the Islamic Revolution in Iran. «Issues in the Islamic Movement», 1985.

ցուցչության գաղափարը, ընտրությունները, օրենքով կառավարվող քաղաքական հաստատությունները, պետության աշխարհիկության և նման այլ գաղափարներ ամբողջությամբ հարում են մահմեդական քաղաքական ավանդույթներին»²⁴:

ՈՒՀագրավ է արդիականացման՝ որպես քաղաքակրթական երևույթի նկատմամբ քաղաքագետ Հ. Ս. Քոթանջյանի ցուցաբերած մոտեցումը. «Արդիականացումը կարևոր նշանակություն ունի էթնոագգային երևույթների զարգացման գործում, քանզի այն արմատապես փոխում է ազգի կամ էթնիկական խմբի գործառնության պայմանները»²⁵: Ելակետ ընդունելով այս կարծիքը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Ջոն Վոլին: Ըստ նրա՝ արդիականությունը աշխարհի պատմության հաստատման մի շրջան է՝ «այնպիսի կայուն գործընթացներով, որոնք վերջ են դնում միջնադարյան քաղաքակրթության ավանդական կենսատճին. արդիականացումը կարող է տարաբնույթ ավանդությունների օգնությամբ քաղաքակրթել մարդկությանը»²⁶: Դա հենց այն է, ինչ իսլամական արդիականացումը կատարում է իսլամական երկրներում, որտեղ իշխանությունը հենված է հզոր անվտանգության համակարգ տնօրինող զինվորականության և զարգացած երկրների, հատկապես՝ ԱՄՆ-ի ռազմավարական դաշնության վրա: ՈՒՀագրավ են Ստենֆորդի՝ Հուվերի հաստատությունում* աշխատող ամերիկացի քաղաքագետ վերլուծաբան Սերժ Թրիֆկովիչի ընդհանրացումները Թուրքիայի վերաբերյալ. «Միջին Արևելքով զբաղվող մեր փորձագետները պետք է դադարեն ձևացնելուց, թե Թուրքիան ժողովրդավարական երկիր է: Ժամանակն է գիտակցելու, որ Թուրքիայի ցանկացած իրական «ժողովրդավարականացում» կնշանակի նրա անդառնալի «իսլամացում», քանի որ, չնայած իր քաղաքական վերնաշենքին, Թուրքիան իսլամի արժեքների վրա հիմնված պետություն է, արժեքներ, որոնք ժառանգել է Օսմանյան կայսրությունից: 1923 թ. Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի ստեղծած ժամանակակից Թուրքիան ներկայացնում է ազգայնական գաղափարների «աշխարհիկ տարբերակը»: Ինչևիցե, 1945 թ. բազմակուսակցական քաղաքական համակարգի հաստատումը հնարավորություն տվեց վերաարժեքավորելու քաղաքական իսլամը: Վերջին երեք տասնամյակների

²⁴ E. Kedourie. Democracy and Arab Political Culture. Washington, 1992, P. 5.

²⁵ Հ. Ս. Քոթանջյան, Արդիականացման քաղաքակրթական հիմնախնդիրները (քաղաքագիտական մոտեցում). Քաղաքագիտություն. ուս. ձեռնարկ, մաս I: Ե., 1997, էջ 116:

²⁶ Ջ. Օ. Վոլ, նշ. աշխ.:

* Ստենֆորդի համալսարանի Պատերազմի, հեղափոխության և խաղաղության Հուվերի հաստատությունը հայտնի է ինչպես իր գրադարանով և արխիվներով, այնպես էլ տնտեսագիտական և քաղաքագիտական ուսումնասիրություններով: Հաստատությունը հիմնվել է 1919 թ. Հերբերտ Հուվերի (ԱՄՆ-ի 31-րդ նախագահ) կողմից: Սկզբնական շրջանում այն իրենից ներկայացրել է Առաջին աշխարհամարտին վերաբերող փաստաթղթերի մի եզակի հավաքածու, սակայն շատ արագ դարձել է 20-րդ դարում աշխարհի քաղաքական, տնտեսական և հասարակական գործընթացների ուսումնասիրությունների աշխարհի ամենամեծ արխիվը և հարստագույն գրադարաններից մեկը: Իր կազմում ընդգրկելով Նոբելյան մրցանակակիրների, Ամերիկյան արվեստի և Գիտության ակադեմիայի մի խումբ ճանաչված գիտնականների՝ հաստատությունը դարձել է ԱՄՆ-ի առաջին «առաջատար մասնագիտական կենտրոններից» (*think-tank*) մեկը: Հուվերի հաստատության աշխատակիցները զբաղվում են ինչպես արդիական, այնպես էլ պատմական հոլովություն տեղի ունեցած փոփոխությունների համակարգային վերլուծություններով:

քաղաքական շարժումներն ստեղծեցին «թուրքական-իսլամական համադրում»՝ ազգի իսլամական հայեցակարգ, որը, ունենալով օսմանյան արմատներ, փորձում է վերահաստատել թուրքական ազգայնականության օսմանյան-իսլամական հայեցակարգը: Դրա ապացույցն է այն, որ նշված շարժումները մերժում են ժամանակակից արևմտյան կենսակերպը, արժեքները: Նրանց հաջողությունը բացատրվում է այն պարզ փաստով, որ թուրքերը դավանում են մի կրոնի, որն ունի որոշակի արժեհամակարգ: «Աշխարհիկության» մասին քեմալականների երազը երբեք դուրս չի թափանցել զինվորականների և Ստամբուլում կենտրոնացած վերնախավի նեղ շրջանակից: Այն հանգամանքը, որ Թուրքիայի քաղաքական վերնախավը թույլ արմատներ է թողել ազգի մշակութային գիտակցության մեջ, այսօր նույնքան լուրջ խնդիր է, որքան Աթաթյուրքի օրոք, և շատերի մտքում «իսլամ» կոչվող ննջող հրաբխի վերաբերյալ հարցը ոչ թե «եթե»-ն է, այլ՝ «երբ»-ը ...: «Այն, ինչ տեղի ունեցավ Թեհրանում, կարող է տեղի ունենալ նաև Անկարայում»²⁷:

Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում ակտիվացած մահմեդական ժողովուրդներն սկսեցին պահանջել ավելի շատ ինքնավարություն, ուստի իսլամական գործիչները ավելի ու ավելի հաճախ են օգտվում ժողովրդավարական արժեքներից՝ հենվելով իսլամական ավանդույթների վրա: Վերջին տարիներին նմանօրինակ ժողովրդավարությունը ավելի շատ մահմեդականներն են ընդունում՝ ներկայացնելով ժողովրդավարության կամ ժողովրդի քաղաքական մասնակցության իսլամին հատուկ ձևեր, փնտրելով և գտնելով դրանք իսլամական ավանդույթում: Իսլամի այնպիսի ավանդական ըմբռումներ, ինչպիսիք են քաղաքական բանավեճը կամ խորհրդակցությունը (*շուրա*), համայնքային փոխհամաձայնությունը (*իջմա*) և անհատական մեկնաբանությունը (*իջթիհաթ*), վերամեկնաբանվում են խորհրդարանական ժողովրդավարության, ներկայացուցչական ընտրությունների և կրոնական բարեփոխումների հասկացությունները հիմնավորելու համար: Այնպիսի իսլամական կազմակերպություններ, ինչպիսիք են «Իսլամական եղբայրությունը»՝ Եգիպտոսում և Հորդանանում, «Ջամաաթ ի իսլամին»՝ Պակիստանում, Քաշմիրում, Հնդկաստանում և Բանգլադեշում, «Բարեկեցություն» կուսակցությունը՝ Թուրքիայում, ինչպես նաև Ալժիրի Իսլամական փրկության ճակատ և Թունիսի Վերածննդի կուսակցությունները, Զուվեյթի «Ջամաաթ ի իսլամին», Ինդոնեզիայի «Մուհամմադիան» և «Նահդաթուլ Ուլաման» պաշտպանել են «իսլամական ժողովրդավարության» ընտրությունների սկզբունքը: Ի տարբերություն արևմտյան ժողովրդավարությունից, որին բնորոշ է ժողովրդի անսահմանափակ ինքնիշխանությունը, «իսլամական ժողովրդավարության» մեջ ժողովրդի ինքնիշխանությունը սահմանափակված է Ալլահի օրենքով և մագիաբների՝ կրոնախրավական դպրոցների հիմնադրույթներով, ինչը նրա և ժողովրդի միջև մի յուրօրինակ հավասարակշռություն է ստեղծում՝ հաստատելով «ժողովրդավարություն առանց ռիսկի», «ժողովրդավարություն առանց այլախոսության», «Ալլահի ժողովրդավարություն»: Սակայն նման ժողովրդավարու-

²⁷ Մերժ Թրիֆկուլիչ, Կոստնա՞ Թուրքիան իսլամական պետություն (Այն, ինչ տեղի ունեցավ Թեհրանում, կարող է պատահել և Անկարայում): «Հանրապետական», 2003, հմ. 3:

թյան պարագայում լուրջ պրոբլեմ են բազմակարծությունն ու քաղաքական այլախոհության հանդուրժումը, ինչպես նաև փոքրամասնությունների կարգավիճակն ու խոսքի ազատությունն այն շրջաններում, որտեղ մահմեդականները մեծամասնություն են կազմում: Այս երկրների քաղաքական արդիականացման փորձը ցույց է տալիս, որ «իսլամական ժողովրդավարության» հաստատման գործընթացը ուղեկցվում է փոքրամասնությունների (այլադավանների, կանանց, էթնիկական խմբերի) իրավունքների անտեսմամբ:

Մահմեդականների համար բազմակարծության սկզբունքը սերտորեն առնչվում է իսլամական օրենքով ոչ մահմեդականներին տրվող «պաշտպանված փոքրամասնությունների» (*qhshunhi*) կարգավիճակին, ինչպես նաև ոչ իսլամական երկրներում ապրող մահմեդական փոքրամասնությունների կարգավիճակին: Իսլամը պատմականորեն հաճախ շատ ճկուն է եղել ոչ մահմեդականների՝ «գրքի ժողովուրդների»^{*} նկատմամբ. մահմեդական աշխարհում «պաշտպանվածի» կարգավիճակը նրանց հնարավորություն է տվել ազատորեն դավանելու իրենց կրոնը: Սակայն որոշ մահմեդական վարչակարգերի և իսլամական շարժումների կողմից ոչ մահմեդականների նկատմամբ կիրառվող հալածանքները, միջէթնիկական, կրոնական հողի վրա հրահրված բախումները, գտումները և վերջապես ցեղասպանությունը է՛լ ավելի են շեշտում արդիականացման նպատակով վերոնշյալ դոկտրինի վերանայման անհրաժեշտությունը, որպեսզի երաշխավորվեն բոլոր քաղաքացիների հավասար իրավունքները:

Գիտակցելով իրենց երկրների ավտորիտար և միակուսակցական քաղաքական համակարգերը բարեփոխելու և այդ երկրների բազմակողմ, բազմամշակույթ իրողությունների հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը՝ մի ստվար խումբ իսլամական մտավորականներ ու գործիչներ (Ռաշիդ Գանուշի, Մուհամմադ Մելիմ ալ Ավա, Յուսուֆ Քարդավի, Մահմուդ Այուբ, Քամալ Աբուլ Մագդ, Ֆահմի Հովեյդի, Աբդուրահման Վահիդ) փորձում են իսլամի ավանդական սկզբունքները հաշտեցնել ժողովրդավարության բազմակուսակցական քաղաքական համակարգի սկզբունքների հետ ու նաև վերանայել ոչ մահմեդական փոքրամասնությունների կարգավիճակին վերաբերող դոկտրինը: Այդ մտավորականներն ու գործիչները խորհրդակցության և փոխհամաձայնության ավանդական հասկացությունները օգտագործում են երկրի ղեկավարների իշխանությունը սահմանափակելու համար, իսկ «կուսակցություն» նշանակող *hhaq* բառը մեկնաբանվում է այնպես, որ այն դրական իմաստ ստանա և նշանակի ոչ թե տարանջատում, այլ հասարակության բարօրության խթանում:

Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում կարևորագույն հիմնախնդիրներից մեկը ավանդական բարոյական նորմերի համատեղելիությունն է մարդու իրավունքների և ազատությունների ժամանակակից սկզբունքների հետ: Այս հիմնախնդրին անդրադարձած իսլամագետները նշում են, որ քրիստոնեական արժեքներից հեռացած Արևմուտքը մարդու իրավունքները շփոթում է «ամեն ինչ թույլատրելի է» դրույթի հետ:

^{*} Ժողովուրդներ, որոնք տեղ են գտել Աստվածաշնչում:

Այս նկատառումներով նոր աշխարհակարգի արժեհամակարգի ձևավորման շրջանակներում ի հայտ են եկել քաղաքակրթական նոր մոտեցումներ, որոնք, կասկածի տակ դնելով մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգը (մասնավորապես՝ 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»), առաջարկում են մարդու իրավունքների այլընտրանքային հայեցակարգեր: Այսպես, 2005 թ. ապրիլին համաշխարհային ռուսական եկեղեցական 10-րդ ժողովում (*Սոբոր*) ընդունվեց «Մարդու իրավունքների և արժանապատվության հռչակագիրը»:

Նման մտայնություն գոյություն ունի նաև իսլամական աշխարհում, որն առաջ է քաշել մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ սեփական հայեցակարգը՝ այն ամրագրելով դեռ 1990 թ. օգոստոսի 5-ին Եգիպտոսում «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ ընդունված «Մարդու իրավունքների Կահիրեի հռչակագրով»²⁸: Վերջինս, հանրագումարելով իսլամի արժեհամակարգը, նշում է, որ մարդկային արժանապատվության, պարտավորությունների և պատասխանատվությունների առումով բոլոր մարդիկ հավասար են և չպետք է խտրականության ենթարկվեն ռասայական, սեռային, կրոնական, քաղաքական, սոցիալական, լեզվական և այլ պատճառներով (հոդ. 1, ա): Բոլոր մարդիկ Աստծո ծառաներն են, և ոչ մեկը մյուսի նկատմամբ գերակայություն չպետք է ունենա (հոդ. 1, բ): Կյանքն Աստծո կողմից շնորհված պարգև է, իսկ ապրելու իրավունքը երաշխավորված է բոլորին: Անհատների, հասարակությունների և պետությունների պարտականությունն է պաշտպանել այդ իրավունքը ամեն տեսակի բռնությունից: Ուստի կյանքից զրկելն անթույլատրելի է՝ բացառությամբ շարիաթով ամրագրված պատճառների (հոդ. 2, ա): Հռչակագրում դատապարտվում է ցեղասպանության իրականացման ամեն մի փորձ (հոդ. 2, բ):

«Մարդու իրավունքների Կահիրեի հռչակագրում» կարևոր տեղ է հատկացված ընտանիքին՝ որպես հասարակական կարևորագույն հաստատության: Միմյանց հետ ամուսնանալու իրավունք ունեն տղամարդն ու կինը, ինչի համար չկա ռասայական կամ ազգային սահմանափակում (հոդ. 5, ա): Գիտելիքի որոնումը պարտադիր է, իսկ կրթության ապահովումը հասարակության և պետության պարտականությունն է: Պետությունը պետք է ապահովի կրթության բազմազանություն՝ հասարակության հետաքրքրությունների շրջանակներում, այնպես, որպեսզի մարդուն հնարավորություն տա ծանոթանալու իսլամին և տիեզերքի իրողություններին՝ ի շահ մարդկության (հոդ. 9, ա): Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են (հոդ. 19):

Համաձայն «Մարդու իրավունքների Կահիրեի հռչակագրի»՝ մարդը պետք է առաջնորդվի իսլամի հիմնարար սկզբունքներով: Մարդու իրավունքների իսլամական հայեցակարգը նպատակահարմար չի համարում նոր աշխարհակարգի արժեհամակարգի կենտրոնում դնել անհատին ու փառաբանել նրան, քանի որ աշխարհը համայնակենտրոն է: Մինչդեռ արևմտյան հայեցակարգում հենց անհատն է ամեն ինչի սկիզբն ու տերը, քանի որ անձնակենտրոնությունը նրան հնարավորություն է

²⁸ См «Политическая мысль. XXI век». Хрестоматия. М., 2005, сс. 450—459:

տալիս «ղավանդելու» արժեքային բազմաչափությունը՝ հաստատվելով տեղեկատվական-հաղորդակցական հնարավոր իրականությունում: Այսինքն՝ մարդն ինքն է որոշում իր անելիքը և, անտեսելով պատմական փորձը, իրականության հաշվառմամբ կողմնորոշվում է լավի և վատի, բարու և չարի, հնարավորի և անհնարինի միջև: Մարդու իրավունքների արևմտյան ըմբռնմամբ նրա հնարավորությունները սահմանափակված չեն, ինչի հետևանքով ձևավորվում է Արևմուտքի հեղուկստական (հաճույքապաշտական)^{*}, զգայական և նյութական մշակույթը: Հատկանշական է, որ «Կահիրեի հռչակագրում» իսլամին առհասարակ մեծ տեղ է վերապահված *անցյալ-ներկա-սպասու* եռաչափության մեջ, իսլամական պետություններում ժողովրդավարական արժեքների հաստատումը դիտարկվում է որպես զարգացման հակոտնյա միտումների և գաղափարախոսությունների միջև մոլորված մարդկությանը բնապահպանական ճգնաժամներից, աղետներից, անցանկալի հեղափոխություններից, տարաբնույթ պատերազմներից հեռու պահելու միակ միջոցը:

Փաստորեն, ժողովրդավարությունը դարձել է իսլամական արդի քաղաքական մտքի և գործելակերպի անբաժանելի մասը: Այն յուրօրինակ լակնուսի թուղթ է, որով ստուգվում է, մի կողմից՝ իշխանությունների հանդուրժողականությունը, մյուս կողմից՝ իսլամական արժեքների արդիականանալու կարողությունը: Այսօր, երբ մենք նոր աշխարհակարգի ստեղծման ճարտարապետության ականատեսն ենք, իսկ Հյուսիսային Աֆրիկայում, Սիչին Արևելքում, Կենտրոնական, Հարավային և Հարավարևելյան Ասիայում միլիոնավոր մարդիկ ձգտում են ժողովրդավարության, իսլամական արժեհամակարգի արդիականացումը բարդ և բազմանշանակ իրողություն է:

^{*} **Հեղոնիզմ** (հուն. հաճույք). այս բարոյափիլիսոփայական համակարգում տառապանքը չարիք է, իսկ հաճույքը՝ բարիք և մարդու գոյության իմաստը: Իր «Ես»-ի նյութականացված ինքնահաստատման առանձնահատկություններով մարդու՝ որպես ատոմար տարրի հիմնախնդիրը, ձևավորվելով Հին Հունաստանում (Էպիկուր և Էպիկուրյան դպրոց)՝ բազմամակարդակ ուսումնասիրության ենթարկվեց Վերածննդի և Լուսավորականության շրջանի փիլիսոփաների կողմից: Գիտատեխնիկական հեղափոխությամբ պայմանավորված հեղոնիզմի կողմնակիցները (Հ. Մարկուզե, Է. Թոֆֆլեր, Ռ. Բեյլ) ձևավորեցին մեխանիկական մարդու գաղափարն ի տարբերություն բարոյական մարդու հայեցակարգից: Ելակետ ընդունելով ժխտման փիլիսոփայությունը՝ հեղոնիստները մարդուն հնարավորություն են տալիս ժամանակի և տարածության մեջ ինքնահաստատվելիս կարևորելու ոչ թե բարոյականության և մարդասիրության սկզբունքները, այլ հաճույքների իրականացման մեխանիզմը:

ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТИКА

**ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ТУРЦИИ С ГРУЗИЕЙ
В 1995—2001 ГГ.**

Г. М. АРШАКЯН

РЕЗЮМЕ

Турецко-грузинское сотрудничество является одним из серьезных факторов, влияющих на безопасность и стабильность в южнокавказском регионе.

После развала СССР Турция предприняла ряд активных шагов не только в направлении сотрудничества с Грузией в политической, экономической и военной сферах, но и по разработке единой стратегии решения многих региональных проблем. Многочисленные встречи руководителей Турции и Грузии и переговоры на высшем уровне (в том числе—с участием президента Азербайджана 29—30 апреля 2002 г. в Трабзоне) позволили Турции основательно укрепить свои позиции в Грузии, особенно в плане военно-политического сотрудничества. Вывод Российских военных баз, являющихся противовесом в регионе турецко-азербайджанскому военно-политическому влиянию, развитие и расширение отношений с НАТО, строительство нефтепровода Баку—Тбилиси—Джейхан и железной дороги Карс—Ахалкалаки—Тбилиси, ведущие к экономической изоляции Армении, могут иметь отрицательные последствия для национальной безопасности и стабильного развития РА.

Грузино-турецкие военные отношения стали особенно интенсивно развиваться в конце 1990-ых гг. По соглашению о военном сотрудничестве от 15 апреля 1998 г. Турция содействует Грузии в вопросе внедрения в ВС Грузии стандартов НАТО, в формировании материально-технической базы и подготовке кадров ВС, модернизации военных аэродромов, в частности—в Марнеули.

С учетом перспектив дальнейшего углубления турецко-грузинского военно-политического и экономического сотрудничества Армения должна эффективно использовать все возможные механизмы влияния на внешнюю политику Грузии для достижения более взвешенного ее подхода к региональным проблемам.

ВЗГЛЯДЫ НА СОВРЕМЕННУЮ ГЛОБАЛИЗАЦИЮ

*К. С. ДАЛЛАКЯН, подполковник, адъюнкт кафедры военной политики
Военного университета МО РФ*

РЕЗЮМЕ

Современная глобализация беспрецедентна как по своим масштабам, так и по формам и разнообразию проявлений. Идея объединения всего мира, диалектического совмещения общечеловеческих и этнических ценностей актуальна и сегодня, однако научно-техническое развитие и продвижение информационных технологий привели к замене исполнителей главных ролей на международной арене. С ростом взаимосвязанности и взаимозависимости

экономик развитых стран угрозы безопасности приняли глобальный характер.

Нарушение экологического баланса в природе чревато катастрофическими последствиями, и защита от этих угроз требует совместных усилий со стороны всех мировых государств. С целью предотвращения глобального экологического кризиса принят ряд международных соглашений.

Расширяя сети своих предприятий в странах с дешевым сырьем и рабочей силой, некоторые транснациональные корпорации по своим капиталам не только превосходят эти нации-государства, но и зачастую оказывают давление на их правительства, вынуждая принимать решения вопреки воле и интересам народа.

Глобализация формирует новый образ жизни с одинаковыми потребностями, унифицируя и стандартизируя разные параметры жизнедеятельности человека, стирая местные, локальные особенности и ценности, не признавая государственных и этнических границ. Она не уместается в границах национальных государств, диктует им новые условия, мало считаясь с их национальными интересами. Глобальные государства, осуществляя широкую экспансию в отношении остального мира, лишают его некоторых функций, однако взамен делегируют им другие, не менее важные. В исторической перспективе неизбежна трансформация государства в более гибкие образования, которые лучше приспособлены к условиям глобального социума, где главенствующими ценностями являются не суверенитет и территориальная целостность, а оперативные интересы и конъюнктурная политика. Такое государственное образование будет более плюралистическим, более сложным, менее централизованным, чем современное бюрократическое государство.

ИСЛАМ ПРИ НОВОМ МИРОПОРЯДКЕ

М. М. МАРГАРЯН, доктор политических наук

РЕЗЮМЕ

Противостояния и столкновения локальных цивилизаций, часто обусловленные глобализационными процессами, требуют новых подходов и методов своего решения.

Исламский мир благодаря своей гибкой системе ценностей и приспособляемости к историческим переменам, и сегодня активно реагирует на вызовы современности, предложив «диалог цивилизаций» как альтернативное решение проблем, стоящих перед человечеством.

Возникнув позже других мировых религий, ислам перенял у них многие идеи и принципы и, трансформируя, включил их в свою политическую идентичность, где наряду с верой во «всемогущего Аллаха» главенствует «мусульманская солидарность».

Исламские страны и сегодня формируют собственную модель модернизации общественных отношений, перенимая многие демократические ценности современной западной модели, но сохраняя собственную идентичность. В условиях нового миропорядка, в отличие от «неограниченной демократии» Запада, «исламская демократия» существенно ограничивает народовластие законами Аллаха и ставит серьезные проблемы перед инакомыслием и плюрализмом, а также статусом этнических меньшинств и свободой слова в

регионах, где мусульманское население составляет большинство. Каирская декларация прав человека, принятая организацией «Исламская конференция» 5 августа 1990 г., в частности, заявляет о недопустимости лишения жизни человека за исключением случаев, предусмотренных шариатом.

Утверждение демократических ценностей в исламских странах в той же Декларации рассматривается как единственное средство спасения человечества от экологических кризисов, катастроф, нежелательных революций и различных войн.

Процесс формирования нового миропорядка, в котором стремление к демократизации характерно для подавляющего большинства человечества, независимо от рас и вероисповеданий, остро ставит вопрос модернизации систем ценностей в идеологиях и религиях народов мира.

DEFENSE-SECURITY POLICY

MILITARY-POLITICAL RELATIONS OF TURKEY WITH GEORGIA IN 1995—2001

G. M. ARSHAKYAN

SUMMARY

The Turkish-Georgian cooperation is one of the serious factors influencing the security and stability in the South Caucasus region.

Once the USSR broke down, Turkey undertook a number of active steps not only in the direction of the cooperation with Georgia in political, economic and military spheres, but for the development of an integrated strategy of solving many regional problems. Numerous meetings of the Turkish and Georgian leaders and high-level negotiations (including the one with the participation of the Azerbaijani president in Trabzon on 29—30 April, 2002) allowed Turkey to fundamentally strengthen its positions in Georgia, especially in the aspect of military-political cooperation. The withdrawal of the Russian military bases, which are the counterbalance to the Turkish-Azerbaijani military-political influence in the region, the development and expansion of relations with NATO, the construction of Baku—Tbilisi—Ceyhan pipeline and Kars—Akhalkalaki—Tbilisi railway, leading to the economic isolation of Armenia, can have negative consequences for the national security and stable development of the RA.

The Georgian-Turkish military relations began to especially intensively develop at the end of 1990s. According to the agreement on military cooperation, 15 April, 1998, Turkey assists Georgia in the issue of NATO standards promotion in the Armed Forces of Georgia, in the formation of material-technical basis and in the training of the Armed Forces staff, modernization of military airdromes, particularly, the one in Marneuli.

Taking into consideration the perspectives of further intensification of the Turkish-Georgian military-political and economic cooperation, Armenia must use in an effective way, all the possible mechanisms of influencing Georgia's external policy to achieve a more weighed approach to the regional problems.

THE VIEWS ON THE CONTEMPORARY GLOBALIZATION

K. S. DALLAKYAN, Lieutenant-Colonel, Adjunct of the Chair of the Military Policy of the Military University of the MoD, RF

SUMMARY

The contemporary globalization is unprecedented both by its scales and by its forms and variety of manifestations. The idea of uniting all the world, of dialectic combining of universal and ethnic values is actual and nowadays, but the Scientific-Technical Development and the promotion of informational technologies led to the change of performers of principal parts at the international arena. With the growth of interconnection and interdependence of the developed countries' economies, the threats to the security got a global nature.

The breach of the ecological balance in the nature is pregnant with catastrophic consequences, and the protection from those threats acquires cooperative efforts by all the world states. A number of international agreements to prevent the global ecological crisis was adopted.

Extending the networks of their enterprises in the countries with cheap raw materials and labour power, some Transnational Corporations in their capitals not only surpass those nations-states, but often influence on their governments to make decisions contrary to the will and interests of their people.

The globalization forms a new mode of life with similar needs, unifying and standardizing different parameters of a man's life activity, erasing local peculiarities and values, without the acknowledgement of state and ethnic boundaries. It does not go in the boundaries of national states, dictates new relations to them, not considering a bit with their national interests. Global states, implementing a wide expansion towards the rest of the world, deprive it of some functions, but in return for that they delegate them other ones, not less important. In the historical perspective it is impossible to avoid the transformation of a state into more flexible entities, which are better adapted to the conditions of global socium, where the leading values are not the sovereignty and territorial integrity, but the operative interests and conjuncture policy. Such a state entity will be more pluralistic, more complex, less centralized than the contemporary bureaucratic state is.

ISLAM IN THE NEW WORLD ORDER

M. M. MARGARYAN, Doctor of Political Sciences

SUMMARY

Confrontations and clashes of local civilizations often caused by globalization processes, require new approaches and methods for their solution.

The Islamic world, thanks to its flexible value system and adaptability to historical changes, nowadays actively responds to the challenges of the present, offering «a dialogue of civilizations» as an alternative solution to the problems facing all the mankind.

Islam, having arisen later than the other world religions, adopted many of their ideas and principles, and undergoing transformations, included them in its

political identity, where «the Muslim solidarity» dominates together with the belief in «Allah Almighty».

The Islamic countries nowadays as well form their own model of modernization of public relations, adopting many democratic values of the contemporary Western model but preserving their own identity. On the assumption of the new world order unlike «the absolute democracy» of the West, «the Islamic democracy» essentially limits the people's power by Allah's laws and sets serious problems to the dissent and pluralism, as well as the status of ethnic minorities and freedom of speech in the regions, where the Muslim population makes up the majority. The Cairo Declaration of Human Rights adopted by the organization «The Islamic Conference» on 5 August, 1990, announces, particularly, the impermissibility of taking a man's life with the exception of the cases stipulated by the Sharia.

The establishment of democratic values in the Islamic countries is considered in the same Declaration as a unique means of saving mankind from ecological crises, catastrophes, undesirable revolutions and various wars.

The formation process of the new world order, where the democratization tendency is peculiar to the overwhelming majority of mankind, irrespective of races and religions, keenly puts a question of modernizing the value system in the ideologies and religions of the world nations.

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՕՍԲՈՒԴՄՄԵՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.

**ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Ձինված ուժերն իրենց վերապահված լիազորություններով ու համապետական առաքելությամբ, կազմակերպվածքով առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պետական կառույցների համակարգում: ՁՈՒ-ի ներպետական գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու բաղադրիչի՝ արտաքին և ներքին: Արտաքին գործունեությունը ՁՈՒ-ի ազդեցությունն է երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա, իսկ ներքինը այն գործունեությունն է, որը ծավալվում է բուն ՁՈՒ-ի համակարգում:

Այս երկու բաղադրիչները սերտորեն փոխկապված են. ՁՈՒ-ի արտաքին գործունեության կառավարելիության ապահովման համար մեծ նշանակություն ունեն ներքին գործունեության կայունությունն ու թափանցիկությունը, իսկ ներքին գործունեության օրինականության պահպանման համար մեծ է ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության դերը: Քանի որ ցանկացած ժողովրդավարական պետության համար հույժ կարևոր է, որ երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա ՁՈՒ-ի ունեցած ազդեցությունը դուրս չգա օրենքով սահմանված շրջանակներից, ապա նման վերահսկողության արդյունավետության ապահովումը և առաջին հերթին ժողովրդավարական հիմնարար արժեքներից մեկի՝ մարդու իրավունքների պաշտպանությունը իրավական-սոցիալական պետության գլխավոր խնդիրներից են¹:

Ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության ապահովման կարևոր օղակներից է մարդու իրավունքների պաշտպանի, կամ օմբուդսմենի, հաստատությունը: Տարբեր երկրներում այն ունի տարբեր անվանումներ. սկանդինավյան պետություններում այն կոչվում է «օմբուդսմեն», Իսպանիայում և Կոլումբիայում՝ «ազգային պաշտպան», Ֆրանսիայում՝ «միջնորդ», Ռումինիայում՝ «ժողովրդական փաստաբան», և այլն²: Օմբուդսմենի հաստատությունը վաղուց իր ուրույն տեղն ունի կայուն ժողովրդավարությամբ մի շարք երկրների իրավական համակարգերում:

Փաստաբանների միջազգային ասոցիացիան ընդունել է «օմբուդսմեն» հասկացության հետևյալ սահմանումը. «Սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության

* Հեղինակը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդակցան է:

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 23:

² Տես «Энциклопедический юридический словарь», 2-ое изд. М., 1998, с. 210:

ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրատիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից ղեկավարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմում-բողոքներ կամ գործում է սեփական նախաձեռնությամբ և իրավասու է հետաքննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդող քայլեր և ներկայացնելու զեկույցներ»³:

Թեև տարբեր երկրներում օմբուդսմենի հաստատությանը վերապահված լիազորությունները տարբեր են, սակայն դրանք ընդհանուր առմամբ կարելի է բավարար համարել հասարակության բոլոր շերտերի իրավունքները պաշտպանելու համար: Որոշ երկրներ, զարգացնելով օմբուդսմենի հաստատության գաղափարը, ստեղծել են դրա մասնագիտացված հաստատությունները: Ահա դրանցից մի քանիսը:

Շվեդիան համարվում է օմբուդսմենի հաստատության հայրենիքը (1809 թ.)⁴: Ջինվորական օմբուդսմենի հաստատությունն (militieombudsman) այնտեղ ստեղծվել է դեռ 1915 թ.: Նշենք, որ զինվորական օմբուդսմենը ընտրվում էր խորհրդարանի կողմից և լիազորված էր վերահսկելու զինվորական վարչարարությունը և զինվորների դիմում-բողոքների հետաքննության գործընթացը: Ջինվորական օմբուդսմենը, գործելով ընդհանուր իրավասության օմբուդսմենի հետ համատեղ, մեծ դեր խաղաց հատկապես առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին: Սակայն պատերազմների ավարտից հետո զինվորական օմբուդսմենին ներկայացվող դիմում-բողոքների քանակի զգալի նվազման պատճառով զինվորական օմբուդսմենի լիազորությունները 1968 թ. հանձնվեցին խորհրդարանական օմբուդսմենին⁵:

ՆԱՏՕ-ին միանալու կապակցությամբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության մեջ (հիմնական օրենքում) կատարված փոփոխությունների*, ինչպես նաև ՋՈՒ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենքի հիման վրա ձևավորվեց խորհրդարանական հանձնակատարի (զինվորական օմբուդսմենի) հաստատություն՝ որպես զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների շահերը պաշտպանող հաստատություն: Այն ունի իրավասությունների լայն շրջան և իր գործունեությամբ նպաստում է խորհրդարանական վերահսկողությանը պաշտպանության ու անվտանգության ոլորտներում: Խորհրդարանական հանձնակատարը նշանակվում է Բունդեստագի նախագահի կողմից, երբ գաղտնի

³ М. С. Башимов. Институт уполномоченного по правам человека за рубежом (http://www.niiss.ru/newdesign/mag17_bashimov.shtml).

⁴ Ств А. А. Пронин. Проблемы прав человека (http://www.hro.org/editions/pronin_1/index.htm):

⁵ Ств Е. А. Лохматов. Генезис и эволюция института омбудсмена в Швеции. 2005 (<http://law.edu.ru/doc/document.asp?docID=1209700>):

* 1956 թ. մարտի 16-ին Գ-Գ-Հ հիմնական օրենքում որպես նոր սահմանադրական դրույթ տեղ գտավ 45ր հոդվածը, որով սահմանվում է խորհրդարանական հանձնակատարի կարգավիճակը: Ըստ այդ հոդվածի՝ «Խորհրդարանական հանձնակատարը պաշտպանում է զինծառայողների հիմնական իրավունքները և աջակցում է Խորհրդարանին (Բունդեստագին) զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկման գործում»:

քվեարկությամբ ստանում է Բունդեստագի անդամների ձայների կեսից ավելին: Հանձնակատարը կարող է գործել ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ Բունդեստագի կամ պաշտպանության կոմիտեի հանձնարարականներով: Նրան կարող է դիմել յուրաքանչյուր զինծառայող⁶:

Զինվորական օմբուդսմենի հաստատություններ են գործում նաև Նիդեռլանդներում, Չեխիայում, Նորվեգիայում և մի շարք այլ երկրներում: Ի դեպ, Նորվեգիայում զինվորական օմբուդսմենի հաստատությունն ստեղծվել էր անգամ նախքան խորհրդարանական օմբուդսմենի հաստատության ստեղծումը⁷:

Զարգացած ժողովրդավարությամբ պետությունների փորձի ուսումնասիրությունը և ընդհանրացումը հնարավորություն են տալիս անելու հետևյալ եզրակացությունները: Սակայն նախապես պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ տարբեր պետությունների իրավական համակարգերի միջև առկա տարբերությունները հնարավորություն չեն տալիս միևնույն հարթությունում դիտարկելու զինվորական օմբուդսմենի հաստատության առանձնահատկությունները: Բացի այդ, կան երկրներ, որտեղ ընդհանուր իրավասության օմբուդսմենի հաստատության զարգացմանը զուգընթաց ձևավորվել են մասնագիտացված զինվորական օմբուդսմենի հաստատության ավանդույթներ, մինչդեռ մի շարք երկրներում զինվորական օմբուդսմենի հաստատության ստեղծման գործընթացները նոր են սկսվում:

Զինվորական օմբուդսմենի հաստատությունը պաշտպանական ոլորտի գործունեության նկատմամբ հսկողական և վերահսկողական գործառնություններ կատարող մարմին է, որը նպաստում է այդ ոլորտում ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների ու արժեքների պահպանմանն ու իրականացմանը: Զինվորական օմբուդսմենը քննում է ՁՈՒ-ում մարդու իրավունքների խախտման հետ կապված բողոքները, ներկայացնում է առաջարկություններ խախտումների ու չարաշահումների վերացման վերաբերյալ: Միևնույն ժամանակ, զինվորական օմբուդսմենը չի մասնակցում ՁՈՒ-ի ընդհանուր քաղաքականության մշակմանը և չի կարող ազդել օպերատիվ բնույթ ունեցող հարցերի լուծման վրա:

Հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունել է զինծառայողների իրավունքների պաշտպանության մասին հանձնարարականներ, որոնցում մասնավորապես նշվում է. «Ստեղծել զինվորական օմբուդսմենի մարմիններ այն պետություններում, որտեղ նման հաստատություն չկա: Այդ մարմինները պետք է համարվեն քաղաքացիական անձանցով և պատասխանատվություն կրեն զինծառայողների հիմնարար իրավունքների ապահովման համար, իրավաբանական օգնություն տրամադրեն նրանց և այլն»⁸:

Զինվորական օմբուդսմենի հաստատության կարևորությունն առաջին հերթին

⁶ Stu Dr. Karl von Gleumes. Der Wehrbeauftragte. Hilfsorgan des Bundestages bei der Ausübung der parlamentarischen Kontrolle. Berlin, 2005 (http://www.bundestag.de/interakt/infomat/schriftenreihen/downloads/wehrbeauftragter_download.pdf):

⁷ Stu «Center for the study of democracy» (<http://www.csd.bg>):

⁸ «Զինծառայողների իրավունքների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ցուցումներ», հմ. 1742 (2006 թ.):

պայմանավորված է նրա իրավասության մաս կազմող հետևյալ լիազորություններով.

- պաշտպանության ոլորտի նկատմամբ վերահսկողություն,
- մասնակցություն ՁՈՒ-ի գործունեության օրինականության ապահովմանը,
- զինվորական մարմինների գործունեության թափանցիկության ապահովում,
- պաշտպանական ոլորտում իրավական գործունեության արդյունավետության ապահովում,

– հասարակության և ՁՈՒ-ի միջև փոխադարձ վստահության աստիճանի բարձրացում, մասնավորապես՝ պետության պաշտպանության կազմակերպման հարցերում:

Բայց արդյո՞ք վերը նշված լիազորությունների շրջանը բավարար է, որպեսզի ՁՈՒ-ի նկատմամբ վերահսկողություն իրականացնող նման հաստատության ստեղծումը համարվի անհրաժեշտություն կամ պաշտպանական ոլորտի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության հույժ կարևոր մեխանիզմ: Կարող է թվալ, թե այս հաստատության ստեղծմամբ բանակը արհեստականորեն կտարանջատվի հասարակությունից, քանի որ զինծառայողների իրավունքների պաշտպանության համար կիրառվում են այլ մեթոդներ և եղանակներ՝ նրանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Խնդրի էությունը պարզելու նպատակով մենք ուսումնասիրել ենք մի շարք երկրներում գործող զինվորական օմբուդսմենի հաստատության գործունեությունը, կուտակված փորձը, վերլուծել այդ հաստատության տարբեր դրսևորումները և հարկ ենք համարում մեր դիտարկումները ներկայացնել ըստ առանձին երկրների⁹:

Շվեդիա. ընդհանուր իրավասության օմբուդսմեն: Այս երկրում զինծառայողների և քաղաքացիական անձանց միջև իրավական տարբերություն չի դրվում, ուստիև զինծառայողների իրավունքների պաշտպանությունը չունի որևէ առանձնահատկություն¹⁰: Օմբուդսմենը միանգամայն անկախ է ՁՈՒ-ի համակարգից, ինչն էլ բացառում է իր նկատմամբ ճնշումների գործադրումը: Սակայն զինվորական օրենսդրության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների անբավարար մակարդակը և զինծառայողների առօրյա գործունեության վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածությունը կարող են խոչընդոտել աշխատանքի արդյունավետությանը:

Կանադա. Ջինված ուժերի կամ պաշտպանության նախարարության կազմում ընդգրկված զինվորական օմբուդսմեն: Կանադայում զինվորական հարցերով օմբուդսմենին նշանակում է պաշտպանության նախարարը հինգ տարի ժամկետով, սակայն օմբուդսմենը չի ենթարկվում նրան¹¹: Ջինվորական հարցերով օմբուդսմենի հիմնական գործառույթն է ազգային պաշտպանության դեպարտամենտի և Կանա-

⁹ Stu Dr. Karl von Gleumes. The Parliamentary Commissioner for the armed forces, His role in exercising parliamentary control over the armed forces and processing petitions from service personnel. Berlin, 2006:

¹⁰ Տես Ե. Ա. Լոխմայրով, նշ. աշխ.:

¹¹ Տես «Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն, սկզբունքներ, լծակներ և գործունեություն»: Խորհրդարանականների ձեռնարկ: Ե., 2003, թիվ 5, էջ 146#

դայի ՁՈՒ-ի զինձառայողների իրավունքների պաշտպանությունը¹²: Այս հարցում օմբուդսմենի մասնագիտական հատուկ պատրաստումը, ՁՈՒ-ի հրամանատարական օղակում նրա ունեցած հատուկ կարգավիճակը և զինվորական կառավարման գործընթացին անմիջականորեն մասնակցելու հնարավորությունն առաջին հայացքից ծանրակշիռ երաշխիքներ են Կանադայում նրա գործունեության արդյունավետության համար: Սակայն, քանի որ նրա կարգավիճակը օրենսդրորեն սահմանված չէ¹³, ՁՈՒ-ի համակարգում ազատ գործելու սահմանափակումները և պաշտպանության նախարարից որոշակի կախումը¹⁴ կարող են զինվորական հարցերով օմբուդսմենի նկատմամբ զինձառայողների անվստահության պատճառ դառնալ:

Գերմանիայի Գաշնային Հանրապետություն. ՁՈՒ-ում չընդգրկված զինվորական օմբուդսմեն: Գերմանիայի խորհրդարանական հանձնակատարը (զինվորական օմբուդսմենը), լինելով ՁՈՒ-ի համակարգից անկախ, իր լիազորություններն իրականացնում է առանց որևէ ճնշումների: Դրանով են պայմանավորված նրա նկատմամբ հասարակական մեծ վստահությունն ու հեղինակությունը: Սակայն այս պարագայում էլ կարող են որոշ խնդիրներ ծագել խորհրդարանական հանձնակատարի և նրա գրասենյակի անձնակազմի հատուկ մասնագիտական պատրաստման տեսանկյունից, քանի որ նրանք, գործելով ՁՈՒ-ի համակարգից դուրս, լիարժեքորեն չեն տիրապետում համակարգում տեղի ունեցող գործընթացներին:

Հիմնվելով կատարված վերլուծության արդյունքների վրա՝ մենք կարծում ենք, որ առավել ընդունելի կարելի է համարել Գերմանիայի ՁՈՒ-ի կազմից դուրս գործող անկախ զինվորական օմբուդսմենի հաստատությունը: Եթե հաշվի առնենք զինվորական ծառայության հատուկ բնույթը¹⁵, կարող ենք պնդել, որ զինվորական օմբուդսմենի մասնագիտացված հաստատության հիմնադրումը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում այս ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության համար:

Մեր կարծիքով՝ ՁՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ստեղծման, ինչպես նաև նրա գործունեության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է.

— այս հաստատության գոյության պահանջը ամրագրել Սահմանադրությամբ կամ օրենքով,

— ՁՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանին լիազորել անկախ և համակարգված ուսումնասիրությունների կատարման իրավունքով,

— զինվորական օմբուդսմենին լիազորել գաղտնի տեղեկությի՞ն ծանոթանալու

¹² Տես *Ս. Ռ. Ալեքիսյան*, Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում: «Օրինակալություն», 2006, հմ. 37:

¹³ Տես «The Geneva Centre for the Democratic Control of Armed Forces» (<http://www.dcaf.ch>):

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես *В. Г. Стрекозова, А. В. Кудашкина*. Военное право. Учебник. М., 2004, с. 167, *նաև*՝ «Զինձառայողների իրավունքների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ցուցումներ», հմ. 1742, (2006 թ.) 1-ին կետը:

իրավունքով և, միևնույն ժամանակ, նրան ներկայացնել խիստ պահանջներ՝ կապված գաղտնիության պահպանման հետ,

— զինվորական օմբուդսմենի գործունեության թափանցիկությունը ապահովելու համար սահմանել նրա ենթահաշվետվությունը խորհրդարանին,

— զինվորական օմբուդսմենի կողմից պետական և զինվորական մարմիններին կոնկրետ առաջարկություններ կատարելու, ինչպես նաև այդ առաջարկությունների կիրառման կամ չկիրառման մասին զինվորական օմբուդսմենին տեղեկացնելու պահանջը ամրագրել օրենքով,

— համապատասխան պայմաններ ստեղծել զինվորական մարմիններից անջատ տեղակայվելու և գործելու համար:

Կարծիք կա, որ զինվորական օմբուդսմենի հաստատությունն առավել անհրաժեշտ է անցումային շրջանում գտնվող երկրներին՝ թե՛ զինված հակամարտությունների հետևանքով զինձառայողների իրավունքների խախտումների հնարավոր աճը կանխելու, թե՛ աստիճանաբար պրոֆեսիոնալ զինվորական ծառայության անցնելու գործընթացը վերահսկելու, թե՛ ՄԱԿ-ի կամ այլ միջազգային կազմակերպությունների հովանու ներքո անցկացվող բազմազգ գործողություններին մասնակցության ժամանակ զինձառայողների միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները պատշաճ կերպով կիրառելու համար¹⁶:

Մենք չենք կարող համաձայնել այս կարծիքի հետ: Գերմանիայի խորհրդարանական հանձնակատարի գործունեության վերլուծությունը վկայում է, որ ժողովրդավարացման անցումային փուլը հաղթահարած երկրներում նույնպես այս մարմնի գործունեությունը ամենևին էլ «սայլի 5-րդ անիվ» չէ և կարող է մեծապես նպաստել ՋՈՒ-ի անձնակազմի բարոյափոխանակական վիճակի բարելավմանը՝ զինձառայողների մեջ առաջացնելով պաշտպանվածության զգացում: Նշենք նաև, որ Գերմանիան, ունենալով խորհրդարանական հանձնակատարի հաստատություն, չունի ընդհանուր իրավասության օմբուդսմեն: Բացի այդ, զինձառայողների իրավունքների պաշտպանության խնդիրը արդեն իսկ դուրս է գալիս պետությունների ներքին օրենսդրական կարգավորման շրջանակներից: Ներկայումս լուրջ խնդիրներ են ծագում արտերկրում զինձառայողների շահերի պաշտպանության հարցում: Երկար ժամանակով պետության տարածքից դուրս ծառայող զինձառայողը գրկվում է իր իրավունքների այլընտրանքային պաշտպանության մեխանիզմներից, և ծառայության հետ (ու ոչ միայն) կապված հարցերը լուծվում են ամբողջովին հրամանատարի հայեցողությամբ: Բնականաբար, զինձառայողը գրկված է հրամանատարի գործողությունները բողոքարկելու գործնական հնարավորությունից:

Սովորաբար նման խնդիրները կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով, մասնավորապես՝ կնքվում են միջազգային պայմանագրեր կամ հղում է կատարվում նախկինում կնքված պայմանագրերին, որոնք, սակայն, միշտ չէ, որ վերաբերում են հատկապես զինձառայողների իրավունքների պաշտպանությանը, և միշտ չէ, որ հետևողականորեն կատարվում են: Այս տեսանկյունից նպատակահար-

¹⁶ Տես «Ժողովրդավարության հետազոտությունների կենտրոն»:

մար է մշակել արտերկրում տեղակայվող ՀՀ զինվորական ստորաբաժանումների զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, ինչն առավել արդյունավետ կերպով կիրականացվի զինվորական օմբուդսմենի հաստատության ստեղծման պարագայում: Բացի այդ, տարբեր պետություններում այս մարմնի պատշաճ գործունեությանը և վերահսկողության լիարժեքության ապահովմանը մեծապես կարող է նպաստել զինվորական օմբուդսմենի հաստատության արդիական մոդելի մշակումը, ինչը հնարավորինս արդյունավետ կդարձնի նրա գործունեության մեթոդները:

Այսպիսով՝ եթե նույնիսկ համարենք, որ բարձր աստիճանի ժողովրդավարություն ունեցող պետությունների զինված ուժերում իրավախախտումների ցուցանիշը նվազագույնի է հասցվել, և զինվորական օմբուդսմենի գործունեությունը, կարծես, անհրաժեշտություն չէ, այդուհանդերձ, մեր կարծիքով՝ այս հաստատությունը կարող է մեծ նշանակություն ունենալ արտերկրում ընթացող միջազգային ռազմական գործողություններում ներգրավված զինվորական անձնակազմի իրավունքների պաշտպանության գործում: Այս տեսակետն ունի իր հիմնավորումը: Չի բացառվում, որ իրենց պետության տարածքում ՁՈՒ-ի նկատմամբ ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների մշտական ազդեցությամբ կաշկանդված հրամանատարները, պետության տարածքից դուրս ձեռքազատվելով այդ վերահսկողությունից, կփորձեն ընդարձակել իրենց լիազորությունների շրջանը, ինչի հետևանքով էլ կխախտվեն զինծառայողների իրավունքները:

Ի մի բերելով վերը ասվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ զինվորական օմբուդսմենի հաստատության առկայությունը չի կարող հանգեցնել հասարակության տարբեր շերտերի իրավունքների պաշտպանության եղանակների երկփեղկվածության: Ավելին. զինվորական օմբուդսմենի գործունեությունը անհրաժեշտ է զինծառայողների իրավունքների հնարավոր սահմանափակումները կանխելու համար: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ զինվորական օմբուդսմենը պետք է գործի ընդհանուր իրավասության օմբուդսմենի գրասենյակի կազմում կամ նրա ենթակայությամբ: Դ-ա, առաջին հերթին, բխում է մարդկանց իրավահավասարության սահմանադրական սկզբունքից: Նման մոտեցումը կնպաստի երկրում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում միարժեք չափանիշների կիրառմանը, քանի որ մարդու իրավունքների պաշտպանի անկախ և անկողմնակալ գործունեությունը բավարար երաշխիք է օրենսդրությամբ այդ մարմնի վրա դրված խնդիրները հստակորեն կատարելու համար¹⁷:

Իսկ ի՞նչ վերաբերմունք է ձևավորվել այս հարցի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Ինչպե՞ս է իրականացվում մարդու իրավունքների պաշտպանությունը ՁՈՒ-ում:

Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ ժողովրդավարական հասարակություն կառուցելու գործում իրենց կողմնորոշիչը Եվրոպան է: Եվրոպական արժեհամակարգում հասարակա-

¹⁷ Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Ռ. Ալեքիսյան*, նշ. աշխ.:

կան-պետական կազմակերպվածքը հիմնվում է անհատի և նրա ազատությունների ու իրավունքների պաշտպանության ու ազատ զարգացման գաղափարի վրա: Ուստի եվրախնտեզրման ուղին ընտրած Հայաստանը նույնպես չէր կարող անմասն մնալ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական իրավական մեխանիզմների ներմուծումից, որոնց թվում մեծ կարևորություն է տրվում մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը: Այդ նպատակով Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ են եղել մարդու իրավունքների պաշտպանի հաստատության օրենսդրական հիմքերի ստեղծմանը: 2003 թ. հոկտեմբերի 21-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի դրույթների համաձայն՝ անխտիր բոլոր ֆիզիկական անձանց իրավունք է վերապահվում դիմելու մարդու իրավունքների պաշտպանին*:

Նշենք, որ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ստորագրված փաստաթղթերում ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության ՁՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության հատուկ մեխանիզմների ստեղծման պահանջները¹⁸: Մասնավորապես՝ ՀՀ—ՆԱՏՕ «Պլանավորման և վերանայման գործընթացի» նպատակների իրականացման ժամանակացույցով նախատեսված էր ստեղծել օմբուդսմենի հաստատություն՝ զինծառայողների բողոքներով զբաղվելու համար: Այդ նպատակով առաջարկվում էր պաշտպանության նախարարությունում ստեղծել զինվորական օմբուդսմենի առանձին մարմին կամ ընդլայնել ընդհանուր իրավասության օմբուդսմենի գրասենյակը՝ ստեղծելով առանձին զինվորական հարցերով տեղակալի հաստիք¹⁹:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համագործակցության շնորհիվ որոշում կայացվեց՝ ստեղծել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդակցականի հաստիք: Այս որոշումն արժանացավ նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության հավանությանը:

Հարցի այսօրինակ լուծումը բխում է ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 83.1 հոդվածի և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից: 83.1 հոդվածի համաձայն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է ՀՀ Ազգային ժողովը, հետևաբար ՀՀ Սահմանադրությամբ չի նախա-

* «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը ՀՀ Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, պաշտպանում է մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, որոնք խախտվել են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Պաշտպանն ընդունում է ազատությունների և իրավունքների խախտման վերաբերյալ բողոքներ, նրան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

¹⁸ Տես «ՀՀ—ՆԱՏՕ «Պլանավորման և վերանայման գործընթացի» նպատակների իրականացման ժամանակացույց», G 0012 ռազմական արդարադատություն, կետ 7.2, «ՀՀ—ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողության ծրագիր»» (ԱԳ-ԳԾ), 1.3 կետ, 1.3.5 ենթակետ, գործողություն 4:

¹⁹ Տես նույն տեղում:

տեսվում հանրային ոլորտում օմբուդսմենի մասնագիտացված հաստատության ստեղծում: Իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը (որը վերաբերում է Պաշտպանի տեղակալին) ուժը կորցրած է ճանաչվել, ինչի հետևանքով զինծառայողների պաշտպանության հարցերով տեղակալի հաստիք ստեղծվել չէր կարող: Ըստ այդմ, խորհրդակցական հաստիքի ստեղծումը այս պահի դրությամբ միակ հնարավոր և ընդունելի տարբերակն էր: Դա նաև համապատասխանում է ՁՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պրակտիկայում ընդունված մեխանիզմներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) 8.2 հոդվածին, որի համաձայն՝ «Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»²⁰: Սակայն, կարծում ենք, որ Հայաստանում զինվորական հարցերով խորհրդակցական հաստիքի ստեղծումը միայն այն դեպքում կնպաստի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործունեության արդյունավետության մեծացմանը, եթե ստեղծվեն ՁՈՒ-ի գործունեության վերահսկման արդյունավետ մեխանիզմներ, և զինվորական հարցերով խորհրդակցական լիազորությունների շրջանը չսահմանափակվի միայն խորհրդատվական գործառույթով:

²⁰ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն» (փոփոխություններով), հոդ. 8.2: Ե., 2005:

ВОЕННОЕ ПРАВО

ИНСТИТУТ ВОЕННОГО ОМБУДСМЕНА: РОЛЬ И ОСОБЕННОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ

А. Р. АВЕТИСЯН*

РЕЗЮМЕ

Одним из органов демократического гражданского контроля над соблюдением законности в вооруженных силах многих стран является институт военного омбудсмена, или защитника прав военнослужащих. Проведенное автором исследование международного опыта свидетельствует о высокой эффективности его деятельности.

Формирование института военного омбудсмена создает наиболее благоприятные условия для защиты прав военнослужащих в странах, переживающих переходный период, и является атрибутом демократизации государства и общества, в том числе—вооруженных сил.

Армения, избравшая путь демократического развития и построения правового социального государства придает первостепенное значение защите

* Автор является советником Защитника прав человека РА по военным вопросам и вопросам военнослужащих.

прав человека, и в законе РА «О защитнике прав человека» предусмотрено право обращения к омбудсмену для всех без исключения физических лиц. Учреждение института советника омбудсмана по военным вопросам повысит эффективность защиты прав военнослужащих только в том случае, если будут созданы действенные механизмы контроля над деятельностью в ВС, и его компетенция не будет ограничена только консультативными полномочиями.

MILITARY LAW

THE MILITARY OMBUDSMAN INSTITUTION: THE ROLE AND PECULIARITIES OF ACTIVITY

A. R. AVETISYAN*

SUMMARY

One of the bodies of democratic civil control over the legality observance in the armed forces in many countries is the institution of a military ombudsman or servicemen's rights defender. The study of the international experience, carried out by the author, testifies to the efficiency of his activity.

The formation of the institution of a military ombudsman creates more favourable conditions for servicemen's rights protection in the countries experiencing a transitional period and is an attribute of the democratization of a state and the society, including the armed forces as well.

Armenia, which has chosen the path of the democratic development and the formation of law-governed and social state attaches a paramount importance to the human rights protection, and the RA's law «On the Human Rights Defender» provides for the right to apply to an ombudsman for all the physical persons without exception. The establishment of the institution of the ombudsman's military consultant would increase the efficiency of servicemen's rights protection only provided that operative mechanisms for the activity control in the Armed Forces are set up, and his competence is not limited only by advisory powers.

* The author is the Adviser of the Human Rights Defender of the RA on military and military servicemen's issues.

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

Ա. Մ. ՀԱՄԲԱՐՅԱՆ, կապիտան

Միջազգային անվտանգությունը մի հասկացություն է, որը բնորոշում է միջազգային հարաբերությունների այնպիսի վիճակ, երբ ապահովված են պետությունների ու նրանց բլոկների, դաշինքների և ամբողջ համաշխարհային ընկերակցության կենսագործունեությունը, համագործակցությունն ու փոխգործողությունը՝ տարբեր վտանգներից նրանց կենսականորեն կարևոր շահերի երաշխավորված պաշտպանվածության պայմանով¹: Միջազգային անվտանգությունը նաև ներառում է մեծամասշտաբ ահաբեկչությունների, բնական ու տեխնածին աղետների, մահաբեր համաճարակների տարածման նախականիման և դրանց հետևանքների նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների համակարգը: Միջազգային անվտանգության ապահովման միջոցների ու մեթոդների, ռազմաքաղաքական ու իրավական բովանդակության, ազգային անվտանգության հետ փոխկապվածության բնույթի վերաբերյալ պատկերացումների ձևավորման վրա էական ազդեցություն է ունեցել միջազգային հարաբերություններում իրավունքի և ուժի հարաբերակցության հարցը: Միջազգային անվտանգությունը սերտորեն կապված է նաև ազգային անվտանգության հետ և ուսումնասիրվում է վերջինիս հետ համատեղ:

Հաճախ որպես հոմանիշներ օգտագործվող ազգային անվտանգություն և պետական անվտանգություն հասկացությունները այն կատեգորիաներից են, որոնք չունեն համընդհանուր ճանաչում ստացած հստակ ու սպառիչ սահմանում: Այսպես, ըստ լեի գիտնական Մ. Դոբրոսելսկու՝ անվտանգության հասկացության համընդգրկուն սահմանման ցանկացած փորձ սկզբից ևեթ դատապարտված է անհաջողության, քանի որ անհնար է կանխատեսել ու հաշվի առնել այն բոլոր տարրերը, կառույցներն ու ընթացակարգերը, որոնք երաշխավորում են անվտանգության բոլոր հնարավոր իրավիճակները²: Էյդեն նույնպես գրել է, որ «ազգային անվտանգություն» հասկացությունը չունի կոնկրետ սահմանում³:

Այս գնահատականներն անվիճելի չհամարելով՝ նշենք, որ ինչ չափով ներպետական օրենսդրությունում օգտագործվում են անձնական անվտանգություն և

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», Հավելված: «ՀԲ», 2006, հմ. 2:

² Տես *Մ. Դոբրոսելսկի. Вопросы теории и практики мирного сосуществования*. М., 1977, с. 93:

³ Տես «The new humanitarian law of armed conflicts». Ed. by Cassese. Naples, 1979, P. 21:

պետական անվտանգություն կատեգորիաները՝ բավարարվելով դրանց ընդհանուր բնութագրմամբ, նույն չափով էլ արդարացված է անվտանգության հասկացության օգտագործումը պետության՝ որպես միջազգային հարաբերությունների մասնակցի ու միջազգային իրավունքի սուբյեկտի նկատմամբ: «Անվտանգություն» հասկացության իմաստն այս բոլոր դեպքերում արտահայտվում է այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են «պաշտպանվածությունը» և «ապահովվածությունը»: Հենց միջազգային իրավունքի սուբյեկտի «պաշտպանվածությունն» ու նրա գոյության «ապահովվածությունն» են, որ առավել հստակ արտահայտում են «անվտանգություն» հասկացության իմաստը⁴:

Անվտանգությունը՝ որպես պաշտպանվածության և ապահովվածության վիճակ, ենթադրում է, որ պետության արտաքին ու ներքին միջավայրում առկա է որոշակի հավասարակշռություն, իսկ պետությունն ինքը ունակ է հաղթահարելու իր դեմ ուղղված ցանկացած բացասական ազդեցություն՝ իր սեփական ռեսուրսների հաշվին*:

Պետությունը ապահովում է ինչպես սեփական, այնպես էլ իր քաղաքացիների անվտանգությունը: Առաջին դեպքում որպես սպառնալիքի աղբյուր հանդես են գալիս այլ պետությունները կամ նրանց դաշինքները (արտաքին համաչափ սպառնալիք), միջազգային ահաբեկչական կազմակերպություններն ու այլ պետությունների առանձին կառույցները (արտաքին անհամաչափ սպառնալիք), ինչպես նաև ինքնիշխանության ու պետական կարգի դեմ ուղղված ոտնձգություններ ձեռնարկող ներքին ուժերը (ներքին անհամաչափ սպառնալիք): Երկրորդ դեպքում սպառնալիքն ուղղված է լինում քաղաքացիների կյանքի, սոցիալական կարգավիճակի, բարեկեցության, հոգևոր-մշակութային և այլ արժեքների դեմ:

Հայտնի միջազգայնագետ Է. Վատելը համարում է, որ ազգի պահպանությունը նրա ձևավորած քաղաքական միության գոյատևումն է: Ազգի զարգացման գրավականը քաղաքացիական հասարակության նպատակների հասնելու նրա կարողությունն է. ազգի վիճակը կատարյալ է, երբ նա ունի անհրաժեշտ ամեն ինչ այդ նպատակին հասնելու համար⁵:

Անվտանգության՝ որպես իրեն արտաքին սպառնալիքից պաշտպանելու պետության ֆիզիկական ունակության, իշխանության առավել կարևոր հատկանիշների և այդպիսով այլ պետությունների կողքին իր գոյության ապահովվածության ընկալումը այսօր էլ մնում է հրատապ: «Ազգային անվտանգություն» հասկացությունը առաջին

⁴ Տես Ե. Ի. Տկաչուով. *Международно-правовые гарантии безопасности государств.* М., 1983, с. 5:

* Որպես անվտանգության մեր տեսակետից առավել հաջողված սահմանում՝ բերենք հետևյալ ձևակերպումը. «Հնարավոր վնասից պաշտպանվածության վիճակ, վտանգավոր ներգործությունները զրպելու կամ հետ մղելու, ինչպես նաև հասցված վնասն արագ կերպով համակշռելու կարողություն, համակարգի կողմից կայունության, հաստատունության և ինքնազարգացման հնարավորության պահպանում» («Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», Հավելված: «ՀԲ», 2006, հմ. 2):

⁵ Տես Ե. Բատտել. *Право народов, или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов.* М., 1960, кн. II, с. 54:

անգամ պաշտոնական քաղաքական շրջանառության մեջ է դրվել 1904 թ. Ամերիկայում՝ նախագահ Թ. Ռուզվելտի կողմից, և մինչև ազգային անվտանգության մասին օրենքի ընդունումը (1947 թ.) օգտագործվել է բացառապես ինքնապաշտպանության իմաստով: Այնուհետև ԱՄՆ-ի «Ազգային անվտանգության դոկտրինում» ձևակերպված այսպես կոչված ընդհանուր ազգային նպատակն էր «ազգի, նրա հաստատությունների և հզորության աղբյուրների պաշտպանությունը ներքին և արտաքին թշնամիներից», այսինքն՝ իր արտաքին առումով անվտանգությունը նույնացվում էր ինքնապաշտպանության հետ⁶:

Խորհրդային ժամանակաշրջանի գրականության մեջ շեշտվում էր, որ պետության ազգային անվտանգության շահերի ապահովումը նախ և առաջ նշանակում է նրա անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սահմանների անխախտելիության, ներքին գործերին միջամտության կանխման երաշխավորում: Այդ պատճառով էլ պետության անվտանգությունը ավանդաբար կապվում էր ռազմական առումով անվտանգության հետ⁷: Անվտանգության նման ըմբռնմամբ այդ կատեգորիան դիտվում էր որպես պետության գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը:

Պաշտպանական գործառույթի իմաստով պետության անվտանգությունը ներառում է ինչպես պետության արտաքին ռազմական գործողությունները՝ իր դեմ զինված ագրեսիան և դրա նախապատրաստումը կասեցնելու ու խափանելու ուղղությամբ, այնպես էլ տնտեսական, սոցիալ-քաղաքական, պաշտպանական, գիտատեխնիկական և այլ բնույթի լայն միջոցառումների իրականացումը, ինչով կապահովվի պետության պատրաստությունը և ունակությունը՝ կանխելու զինված հարձակումը կամ դիմակայելու նրան: Այդ իմաստով պետության պաշտպանվածությունը և նրա գոյության հուսալիությունը, ըստ էության, կախված են ամբողջ պետական մեխանիզմի գործառնման արդյունավետությունից, պետության կողմից բոլոր ուղղություններով իրականացվող քաղաքականության փոխհամաձայնեցվածությունից: Այդ հանգամանքով է բացատրվում, թե ինչու անվտանգության հայեցակարգը, նպատակաուղղված լինելով պետության կողմից իր կենսական շահերի համալիր ըմբռնմանը և ապահովմանը, առանձին պետություններում ստանում է դոկտրինի կամ ռազմավարության նշանակություն:

Այդուհանդերձ, անվտանգության հասկացությունը, վերցված միայն պաշտպանական գործառույթի իմաստով, ժամանակակից բազմաթիվ պետությունների համար սպառնիչ է (մասնավորապես այն պետությունների համար, որոնք ունեն ավելի մեծ ռեսուրսներ, ավելի մեծ տարածք, ավելի բարձր պաշտպանունակություն և այլն): Այս ամենը հանգեցնում է նրան, որ, ինչպես գրում է Ջ. Ստարկը, «մի պետություն օգտվում է ավելի մեծ իշխանությունից ու անկախությունից, քան մյուսները»⁸, քանի որ

⁶ Տես *В. Ф. Петровский. Доктрина национальной безопасности в глобальной стратегии США. М., 1980, сс. 15—47:*

⁷ Տես *Է. Բ. Սկալկունով, նշ. աշխ., էջ 23:*

⁸ *J. G. Starke. Introduction to International Law. Los Angeles, 1977, P. 113.*

անվտանգության ապահովման տեսակետից թվարկված և այլ նյութական պարամետրներ պետությունների համար ունեն ռազմավարական նշանակություն. մի դեպքում մեծացնում են վտանգի աստիճանը, մեկ այլ դեպքում՝ նվազեցնում այլ պետությունների կողմից ցուցաբերվելիք դիմադրության հնարավորությունը: Իհարկե, պետությունների փաստացի անհավասարությունը, որը պաշտպանական գործառույթի իրականացման պարագայում նրանց օբյեկտիվորեն դնում է միանգամայն տարբեր հարթություններում, ամենևին էլ չի նշանակում, թե միջազգային հարցերի լուծման ժամանակ գերակա են դառնում աշխարհաքաղաքական գործոնները⁹:

Միջազգային հարաբերություններում պետությունները համագործակցության միջոցով ձգտում են ինքնիշխանության պահպանման, կենսագործունեության ու զարգացման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը: Ուստի միջազգային հարաբերությունների համակարգի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ապակենտրոնացված կառուցվածքը և ձևականորեն միմյանց չենթարկվելը, կարծես հաստատում են, որ պետությունների փոխգործության ընթացքում նրանց նյութական չափանիշները, ուժային կարողությունները վճռորոշ են: Այստեղից էլ «*si vis pacem para bellum* («ուզում ես խաղաղություն՝ պատրաստվիր պատերազմի»)» հայտնի կարգախոսը:

Նման մոտեցման բնութագրիչ գծերն են սեփական շահերի ֆեռտիչացումը և այլոց անվտանգության շահերի թերագնահատումը կամ անգամ արհամարհումը, բախման ժամանակ ուժի կիրառմանն ապավինելը: Դա է անվտանգության ուժային մոդելի էությունը, որի դասական բնութագիրը 1943 թ. տվել է ամերիկացի ՌԻ. Լիպմանը. «Պետությունը գտնվում է անվտանգության վիճակի մեջ, եթե ստիպված չէ պատերազմից խուսափելու համար զոհաբերել իր օրինական շահերը, և երբ ի վիճակի է անհրաժեշտության դեպքում այդ շահերը պաշտպանելու պատերազմի միջոցով»¹⁰:

Անվտանգության պրոբլեմի մասին սկզբունքորեն այլ պատկերացում կձևավորվի այն դեպքում, եթե որպես առաջնային դիտվի պետության փոխգործությունը այլ պետությունների հետ: Այդ փոխգործությունը կարող է իրականացվել ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ՝ բազմակողմ (մասնակցություն միջազգային անվտանգության ապահովման գանձազան կառույցներին ու համակարգերին, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՀԱՊԿ-ը, ՆԱՏՕ-ն և այլն): Միջազգային հարաբերությունների՝ որպես դինամիկորեն զարգացող համակարգի ըմբռնումը պայմանավորում է պետությունների անվտանգության շահերի փոխկապվածությունը, որը ենթադրում է դրանց ապահովման ուղղությամբ միջազգային համագործակցության ծավալում: Դա իր հերթին նվազեցնում է առանձին պետությունների ռազմական հզորությունը, դեռ ավելին, նախատեսում է զինաթափման հնարավորություն՝ դրանով իսկ նվազեցնելով պետությունների փաստացի անհավասարությունը: Միջազգային հարաբերությունների՝ որպես ամբողջական համակարգի նկատմամբ մոտեցումը ենթադրում է յուրաքանչյուր

⁹ Stu C. Waters. States and international order. Chicago, 2006, P. 18:

¹⁰ U. Lipmann. Maintaining state security. New York, 1943, P. 19.

պետության կողմից իր անվտանգության հարցերի լուծում «միջազգային անվտանգության մոդելի» շրջանակներում, այսինքն՝ այնպիսի հարաբերությունների ձևավորման միջոցով, որոնք ցանկացած պետության հնարավորություն տալին չվախենալու այլ պետության կողմից ագրեսիայի ձեռնարկումից, երաշխավորելին նրա անկախ ու անվտանգ գոյության հնարավորությունը՝ առանց արտաքին ճնշումների: Հենց դա է միջազգային անվտանգության մոդելի էությունը, ըստ որի մի պետության անվտանգության խախտումը նշանակում է ամբողջ միջազգային անվտանգության համակարգի խաթարում: Այստեղից էլ բխում է պետությունների պարտավորությունը՝ համագործակցել միջազգային անվտանգության բնագավառում, ինչպես նաև այն հիմնարար դրույթը, որ ոչ մի պետություն չի կարող իր անվտանգությունը կառուցել այլ պետությունների անվտանգության հաշվին:

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե ինչ կարգի սպառնալիքների են պետությունները բախվում այսօր: Յուրաքանչյուր գործընթաց կամ իրադարձություն, որը կհանգեցնի մեծ թվով զոհերի, կասկածի տակ դնելով կամ խաթարելով պետության՝ որպես միջազգային համակարգի բաղկացուցիչ մասի գոյությունը, անհրաժեշտ է դիտել որպես միջազգային անվտանգության և խաղաղության համար սպառնալիք:

Այս կատեգորիայի սպառնալիքներն են.

1. տնտեսական և սոցիալական սպառնալիքները, ներառյալ՝ աղքատությունը և համաճարակները,

2. միջազգային բախումներն ու զինված հակամարտությունները,

3. բռնության ներպետական դրսևորումները, ներառյալ՝ քաղաքացիական պատերազմները և ցեղասպանությունը,

4. կազմակերպված միջազգային հանցավորությունն իր բոլոր դրսևորումներով հանդերձ՝ վերազգային ահաբեկչությունը, զանգվածային ոչնչացման զենքի և թմրանյութերի տարածումն ու տարանցումը, մարդկանց առևտուրը (թրաֆիկինգ)¹¹:

Պետությունների անվտանգության շահերի փոխկապվածության գաղափարը օրգանապես միահյուսվում է միջազգային անվտանգության մոդելի հետ, որը հնարավորություն է տալիս հեռանալու այն ավանդական պատկերացումից, թե պետության գոյության պահպանման միակ աղբյուրը նրա ռազմական հզորությունն է:

Նախ պետությունը կարող է արտաքին վտանգի և դրան դիմակայելու միջև հավասարակշռությանը հասնել ոչ միայն սեփական, այլև դաշնակիցների ռազմական հզորության հաշվին: Բացի այդ, պետությունները կարող են խուսափել հակամարտություններին անմիջական մասնակցությունից՝ սահմանափակվելով դիվանագիտական ակտիվությամբ, ձգտելով իրենց վարած քաղաքականության համար ապահովելու միջազգային աջակցություն:

Այն միջազգային հարաբերությունները, որոնք նվազեցնում են անվտանգության

¹¹ Տես Kofi A. Annan. Courage to fulfil our responsibilities. «The Economist», 2004, 2 December, *ևսև*՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18—19:

դեմ ուղղված սպառնալիքները, պետության համար հավասարագոր են անհրաժեշտ ռազմական հզորությանը: Այդպիսի հարաբերություններ կարող են հաստատվել միայն պետությունների համատեղ ջանքերի շնորհիվ, այսինքն՝ արտաքին քաղաքականության միջոցներով, այդ թվում՝ դիվանագիտության: Դրանք ձևավորում են անվտանգության ապահովման գերակա ուղղությունը՝ նվազեցնելով ռազմական հզորության նշանակությունը: Այսպիսով «անվտանգություն» հասկացության բովանդակությունն ընդլայնվում է և դուրս գալիս իր սկզբնական՝ ռազմական միջոցներով պաշտպանության իմաստի սահմաններից, թեև ռազմական բաղադրիչը միշտ էլ կլինի այդ կատեգորիայի անկյունաքարը:

Պետության արտաքին անվտանգության խնդիրը դիտարկելիս կարելի է խոսել պետությունների անվտանգության ապահովման ընդհանուր մեխանիզմների՝ որպես այնպիսի պայմանների ամբողջության մասին, որոնք երաշխավորեն նրանց միասնական պաշտպանությունը: Այլ պետությունների հետ հարաբերություններում տվյալ պետության անվտանգության ապահովման մեխանիզմը հստակեցվում է հետևյալ հարցերի լուծմամբ.

1. Ինչի՞ հետ կապել անվտանգության խնդիրը,
2. Ի՞նչ միջոցներով ապահովել անվտանգությունը,
3. Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ:

Երկրորդ հարցի պատասխանը կարծես թե պարզ է. անվտանգության ապահովման միջոցներն են ռազմական ուժը և դիվանագիտությունը: Ճիշտ նույն կերպ, երբ խոսքը վերաբերում է պետության անվտանգությանը, ռազմական և դիվանագիտական միջոցների կիրառման օբյեկտ են դառնում անվտանգության շահերը: Պետությունը, իր այս կամ այն պահանջմունքը անվտանգության շահերի կատեգորիայի շարքը դասելով, ընտրում է դրա ապահովման միջոցները: Ակնհայտ է, որ անվտանգության շահերի ձևակերպումը անվտանգության ապահովման ամբողջ մեխանիզմի գործունեության վճռորոշ փուլն է: Այստեղից բխում են այն պնդումները, որ պետությունների համար հիմնական շարժառիթ են նրանց անվտանգության շահերը, որ հանրության յուրաքանչյուր անդամի գլխավոր շահը անվտանգությունն է, քանի որ առանց անվտանգության որևէ ոլորտում առաջընթաց լինել չի կարող:

Անվտանգության շահերի ձևակերպումը՝ որպես անվտանգության ապահովման մեխանիզմի գործողության սկզբնական փուլ, փաստորեն, պետության քաղաքական կամքի ձևավորման գործընթացն է: Յուրաքանչյուր պետություն, առավելապես կողմնորոշվելով դեպի անվտանգության ուժային մոդել կամ միջազգային անվտանգության մոդել, որոշակի ուղղվածություն է տալիս իր ռազմական ու դիվանագիտական միջոցների, ինչպես նաև իր համապատասխան ռեսուրսների կիրառմանը:

Պետության կողմից իր անվտանգության շահերի հստակեցումը և ձևակերպումը արտահայտվում են միջազգային ասպարեզում այդ պետության կողմից իր վարքագծի սկզբունքների ու նպատակների հռչակման միջոցով, իսկ այդ սկզբունքներն ու նպատակները կոնկրետ իրավիճակներում կատարում են պրակտիկ գործունեության

ուղեցույցի դեր* : Հետևաբար քաղաքականության նորմատիվության մասին խոսելիս շեշտում են պետության կամքի օբյեկտիվ պայմանը, որը, մասնավորապես, դրսևորվում է նրա արտաքին քաղաքականության սկզբունքների ու նպատակների, սոցիալ-տնտեսական պայմանների մեջ:

Առանձին պետությունների քաղաքականության մեջ նորմատիվության աստիճանական կուտակումը նրանց հնարավորություն է տալիս շտկումներ կատարելու անվտանգության ոլորտում ծավալվող փոխգործության մեջ՝ կարգավորելով իրենց շահերի միջև հակասությունները:

Քաղաքականությանը ներքնապես բնորոշ նորմատիվության հատկանիշը պայմաններ է ստեղծում, որպեսզի արդեն անվտանգության շահերի ձևակերպման ժամանակ գերակայեն միջազգային հարաբերությունների զարգացման ու գործունեության այնպիսի միտումներ, որոնց շրջանակներում շահերի հակասությունները լուծվում են մասնակիցների կարգավորիչ ներազդեցության միջոցով: Այլ կերպ ասած՝ շահերի իրականացումը կապված է միջազգային հարաբերություններում կամայականության սահմանափակման հետ, ինչն արտահայտվում է այդ հարաբերությունների մասնակիցների վարքագծի կանոնների հստակեցման ձևով: Պետությունների փոխգործության կարգավորումը նրանց անվտանգության նորմատիվ ապահովման փուլում իրականացվում է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների միջոցով, որոնց ձևավորմամբ կարծես ավարտվում է պետությունների քաղաքականության մեջ նորմատիվության կուտակումը, և սկսվում է միջպետական հարաբերությունների վրա նրա հետադարձ ազդեցության գործընթացը:

Պետությունների կողմից իրենց անվտանգության պրոբլեմների դիտարկումը պետական շահերի լույսի ներքո ենթադրում է անվտանգության ապահովման մեխանիզմի միջազգային իրավական կարգավորման հնարավորություն առաջին հերթին նորմատիվ ապահովման փուլում, ինչի շնորհիվ պետությունները կարող են ընտրություն կատարել ուժային մոդելի կամ միջազգային անվտանգության մոդելի միջև:

Իր անվտանգության ապահովման ուղղությամբ պետության քաղաքական գործունեությունը կազմակերպվում է նախօրոք, եթե կանխատեսվում է այլ պետությունների անվտանգության շահերի հետ բախման հնարավորություն, այսինքն՝ այն դեպքերում, երբ այդ շահերը չեն իրականացվել դրանց ապահովման նորմատիվ փուլում՝ հանդիպելով այլ պետությունների կողմից դիմադրության: Հենց անվտանգության շահերի հակասության փուլում է, որ յուրաքանչյուր պետություն կանգնում է իր անվտանգության պահանջմունքների բավարարման կազմակերպական խնդրի առջև՝ այդ նպատակով օգտագործելով մյուս կողմի վրա ազդեցություն գործելու

* Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում» ձևակերպված է. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղեցույց պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ներկայացնելու համար»:

համար ռազմական կամ դիվանագիտական միջոցների դիմելու հնարավորությունը: Անվտանգության պահպանման կազմակերպական փուլի կառուցվածքը, նրա ուղղվածությունը (ռազմական կամ դիվանագիտական միջոցների ընտրություն), բնականաբար, կախված են տվյալ պետության անվտանգության ոլորտում ստեղծված իրավիճակից:

Պետության անվտանգության ապահովման կազմակերպական փուլի էությունը հենց իր շահերի պաշտպանության համար օգտագործվող դիվանագիտական և ռազմական միջոցների միջև հավասարակշռության որոնումն է, ինչն արվում է տվյալ պահին գոյություն ունեցող նորմատիվ բազայի հիման վրա (այդ բազան հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների արտացոլում պետական իրավունքի նորմատիվային դաշտում): Իրենց հերթին դիվանագիտական և ռազմական միջոցները, լինելով պետության քաղաքականության արտահայտման տարբեր մեթոդներ և անվտանգության ապահովման ոլորտում կատարելով տարբեր գործառնություններ, հիմնվում են տարբեր ռեսուրսների վրա¹²:

Պետության անվտանգության ապահովման ռազմական միջոցների նյութական աղբյուրը նրա պաշտպանական ներուժն է՝ նրա պաշտպանունակությունը: Հենց պաշտպանունակության անհրաժեշտ աստիճանն է պետություններին հնարավորություն տալիս օգտագործելու իրենց ռազմական միջոցները այն սպառնալիքի չեզոքացման համար, որը չի կանխվել դիվանագիտական միջոցներով: Քանի որ դիվանագիտական միջոցների գործառնությունը պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքի նվազեցումն ու լրիվ վերացումն է, ապա դրանց նյութական ռեսուրսի, նյութական երաշխիքի դերում հանդես է գալիս զինաթափումը, այսինքն՝ այն միջոցները, որոնք ուղղված են պետության ռազմական ներուժի վերացմանը: Այդ պատճառով պետությունների ռազմական ներուժի վրա ազդում է ինչպես պաշտպանունակության ամրապնդման միտումը, որը համապատասխանում է պետության ռազմական անվտանգության ապահովման գործում ռազմական միջոցների դերին, այնպես էլ դրա կրճատման ու վերացման միտումը, որն արտահայտում է անվտանգության կազմակերպման դիվանագիտական մեթոդների նշանակությունը և կշիռը: Դրա համար էլ այնքանով, որքանով անվտանգության ապահովման կազմակերպական փուլում դիվանագիտական միջոցները հարաբերակցվում են ռազմական միջոցների հետ, այդ չափով էլ զինաթափումը անվտանգության նյութական փուլում գնահատվում է որպես այլընտրանք պետությունների պաշտպանունակությանը: Հետևաբար, զինաթափումը համարվում է անվտանգության ապահովման նյութական միջոցներից մեկը, և դրա նշանակությունը անվտանգության ապահովման միջազգային մոդելի շրջանակներում մեծանում է անվտանգության ապահովման դիվանագիտական միջոցների նշանակության աճմանը զուգընթաց: Եվ ընդհակառակը՝ պետությունների անվտանգության ապահովման դիվանագիտական միջոցների դերի ու նշանակության մեծացումը (ռազմականի համեմատ) կարող է նպաստել զինա-

¹² Stu «Международное право». Под ред. А. А. Ковалева, С. В. Черниченко. М., 2007, с. 487:

թափմանը, ինչը կնվազեցնի պետությունների անվտանգությանն ուղղված սպառնալիքները:

Զինաթափումը՝ որպես միջազգային անվտանգության ապահովման գործուն միջոց, էական դեր է խաղում նաև ահաբեկչության կանխարգելման գործում և այդ խիստ բացասական երևույթից մարդկության պաշտպանության ռազմավարության բաղկացուցիչ և անօտարելի մասն է: Ահաբեկչությունը նոր երևույթ չէ, նոր են նրա տարատեսակները, ծավալները և սպառնալիքի աստիճանը: Մասնավորապես՝ «Ալ-Զաիդա» ահաբեկչական կազմակերպությունը մի քանի տարիների ընթացքում հարվածներ է հասցրել ՄԱԿ-ի անդամ ավելի քան 10 պետությունների: Բացի այդ, աննախադեպ վտանգ է ստեղծում ահաբեկիչների կողմից զանգվածային ոչնչացման զենքի ձեռքբերման հնարավորությունը: ՌԻստի հույժ կարևոր են չկայացած պետությունների և ահաբեկչական խմբերի կողմից միջուկային, քիմիական և կենսաբանական միջոցների կիրառման կանխարգելմանը, այդ միջոցների չտարածմանը նպատակաուղղված միջոցառումները:

Միջազգային անվտանգության ապահովման գործում հետզհետե ավելի կարևոր դեր են ստանում այնպիսի միջազգային կազմակերպություններն ու կառույցները, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԱՊՀ-ն, Եվրամիությունը, ՀԱՊԿ-ը, ՆԱՏՕ-ն, Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԳ-ԱՏԷ-ն: Մասնավորապես՝ վերջին շրջանում զգալիորեն մեծացել է հակամարտությունների կարգավորման նպատակով ՄԱԿ-ի կողմից ձեռնարկված խաղաղարարական ու խաղաղապահական օպերացիաների թիվը: Առճակատումների թուլացման առումով մեծ է ՆԱՏՕ-ի, ՀԱՊԿ-ի, ԵԱՀԿ-ի դերը, մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առաքելությունն ստանձնել է ԵԱՀԿ Մինսկի խումբը, զինաթափման ու սպառազինությունների մրցավազքի կասեցման համար էական նշանակություն ունի ԵԱՀԿ-ի շրջանակներում կնքված Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը, Վիեննայի փաստաթուղթը: Այդ կառույցների շրջանակներում ծավալվող գործունեությունը միտված է միջազգային անվտանգության ամրապնդմանը, դրա ապահովման հաստատուն երաշխիքների ստեղծմանը: ՌԻստի և պետության արտաքին անվտանգության ապահովման մեխանիզմը ներկայումս ընկալվում է միայն միջազգային անվտանգության շրջանակներում, քանի որ դրա այլընտրանքային՝ ուժային, մոդելը դուրս է մնացել միջազգային հարաբերությունների համակարգից:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ անվտանգության ապահովման նպատակով պետությունների համագործակցության ոլորտի ընդլայնմամբ մեծանում է միջազգային իրավունքի՝ որպես հարաբերությունների կարգավորիչ գործոնի դերը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ավագ լեյքենանկր

Ներկայումս մարդու իրավունքները ճանաչվում են որպես բարձրագույն արժեք: Դրանց պաշտպանությունը առաջին հերթին յուրաքանչյուր պետության պարտականությունն է: Մակայն միջազգային հարաբերությունների զարգացման արդի ժամանակաշրջանում մարդու իրավունքների պաշտպանությունը դարձել է ոչ միայն առանձին պետությունների, այլև ամբողջ միջազգային հանրության հոգածության առարկա: 1945 թվականի հունիսի 26-ին ընդունված Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 1-ին հոդվածում, որտեղ թվարկված են այդ կազմակերպության նպատակները, նշվում է. «Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը»¹: Բացի այդ, Կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ՄԱԿ-ը իրականացնում է միջազգային համագործակցություն՝ ուղղված տնտեսական, սոցիալական, մշակութային և հումանիտար բնույթի պրոբլեմների լուծմանը, ինչպես նաև «անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից» մարդու հիմնական ազատությունների և իրավունքների նկատմամբ հարգանքի տարածմանը և խրախուսմանը²:

1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 30-րդ հոդվածը սահմանում է. «Մույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետությանը, խմբին կամ առանձին անհատներին ընձեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատություններն ի չիք դարձնելուն»³: 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական համաձայնագրի 1-ին հոդվածը սահմանում է. «Բարձր Պայմանավորվող կողմերը պարտավորվում են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող անձանց կողմից կոնվենցիայում նշված իրավունքների և ազատությունների իրականացումը»⁴: Կարող ենք բերել մարդու իրավունքների պաշտ-

¹ «ՄԱԿ-ի կանոնադրություն», հոդված 1-ին: Ե., 2005:

² Steu «Международное право: сборник документов». М., 2000, с. 111:

³ «Մարդու իրավունքների միջազգային բիլլ»: Ե., 2005:

⁴ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (<http://www.coe.int>):

պանությանը վերաբերող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք ի վերջո վկայում են, որ մարդու իրավունքների պաշտպանությունը դուրս է եկել ներպետական շրջանակներից և դարձել է միջազգային հոգածության առարկա:

Մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծվել են բազմաթիվ մեխանիզմներ, որոնցում ներառվում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային առյաններ: Մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական համաձայնագրին համապատասխան ստեղծվել է Եվրոպական դատարանը, որը կոչված է պաշտպանելու անհատի իրավունքները պետության ոտնձգություններից:

Չնայած մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող բազմաթիվ քայլերին, դեռ չեն վերացել այնպիսի երևույթները, ինչպիսիք են զանգվածային սպանություններն ու իրավունքների այլ ոտնահարումները: Այդպիսի դեպքերի օրինակներ են Սիեռա Լեոնեի, ՌԻգանդայի, Ռուանդայի, նախկին Հարավսլավիայի դեպքերը: Այդ խախտումների համար պատասխանատու են պետության ղեկավարները, որոնք հաճախ իրենք են կազմակերպում մեծ ռազմարժույթուններ կամ համապատասխան միջոցներ չեն ձեռնարկում դրանք կանխելու համար:

Միջազգային իրավունքի զարգացման ներկա պայմաններում, երբ մարդը ճանաչվում է բարձրագույն արժեք, միջազգային հանրությունը, բնականաբար, չի կարող լինել դիտորդի դերում: Այդ երևույթների դեմ պայքարելու միջոց է, մասնավորապես, միջազգային տրիբունալների ստեղծումը, ինչպիսիք ստեղծվեցին նախկին Հարավսլավիայի, Ռուանդայի դեպքերի քննության և մեղավորների պատժի ենթարկելու համար:

1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրման համար բացվել է նաև Հռոմի քրեական դատարանի կանոնադրությունը*, որին համապատասխան ստեղծվելու է Միջազգային քրեական դատարան՝ որպես մշտապես գործող դատական մարմին: Նա քննելու է մարդկության դեմ ուղղված հանցագործությունները՝ ագրեսիան, ռազմական բախումները և ցեղասպանությունը: Դատարանի նպատակն է պատասխանատվության ենթարկել մեծան հանցագործությունները պլանավորող և կատարող անձանց: Ընդ որում, այդ գործերը քննվելու են ոչ թե բողոքների (ինչպես, օրինակ, Եվրոպական դատարանում), այլ համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա: Անձի բողոքը կարող է հիմք համարվել հետաքննություն անցկացնելու համար, որի արդյունքների հիման վրա կարող է գործ հարուցվել:

Միջազգային իրավունքում ևս նկատվում է հանրային և մասնավոր մեղադրանքի տարանջատում: Ներկայումս դրա համար հիմք է ծառայում մարդու իրավունքների ոտնահարման զանգվածայնությունը և այն, թե որքանով են այդ հանցագործությունները սպառնալիք ստեղծում միջազգային անվտանգության համար: Օրինակ՝ Եվրոպական համաձայնագրով նախատեսվում են մարդու

* Կանոնադրությունն ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ին: ՀՀ-ն այն ստորագրել է, սակայն մինչ օրս չի վավերացրել:

կյանքի իրավունքը, անձի անձեռնմխելիության իրավունքը, որոնք պաշտպանելու համար նա կարող է դիմել Եվրոպական դատարան: Միևնույն ժամանակ, Հռոմի քրեական դատարանի կանոնադրությունը ևս պատասխանատվություն է նախատեսում մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարելու համար, որոնք, անկասկած, ներառում են նաև մարդու կյանքի իրավունքի ոտնահարումները: Թեև գործի քննությունը քրեական դատարանում չի խոչընդոտում նաև դրա քննությանը Եվրոպական դատարանում, այնուամենայնիվ, հարց է առաջանում, թե արդյոք Եվրոպական դատարանում, օրինակ, մարդու կյանքի դեմ ուղղված գործողությունների վերաբերյալ գործի քննությունը կարող է առիթ լինել Միջազգային քրեական դատարանում գործ հարուցելու համար:

Մարդկության դեմ հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով դատարանների ստեղծումը իր հերթին առաջացնում է մի շարք հարցեր, որոնց պատասխանները միջազգային իրավունքի զարգացման ներկա փուլում հակասությունների և վեճերի պատճառ են դառնում: Մասնավորապես, պատկերացնենք մի իրավիճակ, երբ որևէ պետությունում տեղի են ունենում մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումներ: Համաձայն գործող միջազգային իրավունքի նորմերի՝ իրավախախտները պետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց կատարած հանցագործությունների համար: Սակայն ակնհայտ է, որ իշխանության գլուխ կանգնած անձը հեշտությամբ չի զիջի իր դիրքերը, հատկապես՝ եթե դրանից հետո նա պետք է պատասխանատվության ենթարկվի: Ինչպե՞ս վարվել այդ դեպքում:

Այս ուղղությամբ ներկայումս միջազգային իրավունքում նկատվում է մի դրկտրինի զարգացման միտում: Այն հայտնի է որպես *մարդասիրական (հումանիտար) ինտերվենցիա*: Ներկայումս այն իրականացվում է, մասնավորապես, այլ պետություններում ժողովրդավարության հաստատման⁵, դրանց քաղաքացիների իրավունքների պաշտպանության⁶ նպատակով: Միևնույն ժամանակ մարդասիրական ինտերվենցիայի գլխավոր նպատակներից է մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների կատարման մեջ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկումը:

Նախ՝ պարզենք, թե որքանով է իրավաչափ ժողովրդավարություն տարածելու նպատակով պետության վրա հարձակում գործելը: Հայտնի քաղաքագետ Հական Տունկին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Իրաքի դեմ ռազմական գործողությունների վերսկսման չորս հիմնական պատճառների թվում նշում է նաև այդ երկրում ժողովրդավարության ապահովման անհրաժեշտությունը՝ իր ժողովրդի դեմ նոր հանցագործությունների կանխման համար⁷:

Անշուշտ, ոչ մի պետության ղեկավար իրավունք չունի բռնաճնշումների են-

⁵ Տես *C. B. Черниченко. Теория международного права. М., 1999, т. 2, с. 465:*

⁶ Տես *Conor Fitzgerald. The Iraqi conflict* (<http://media.www.maroon-news.com/media/storage/paper742/news/2004/11/19/News/Causes.Of.War.The.Iraqi.Conflict-811392.shtml>):

⁷ Տես նույն տեղում:

թարկելու իր ժողովրդին: Սակայն, մյուս կողմից, ակնհայտ է, թե ինչ վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ մարդասիրական ինտերվենցիաների պրակտիկայի տարածումը աշխարհում: Մասնավորապես՝ «Հարավսլավիան ընդդեմ ԱՄՆ-ի» գործում նշվում էր, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ազատ ընտրելու իր քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգը: Դժվար չէ պատկերացնել, որ առանձին պետություններին մարդասիրական ինտերվենցիայի իրավունքի վերապահումը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ, եթե խստագույնս չի սահմանափակվում միջազգային իրավունքի նորմերով և չի կատարվում համաձայն միջազգային անվտանգության ապահովման ճանաչված մարմինների (առաջին հերթին՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի) որոշման: Օրինակ՝ որպես ժողովրդավարական համակարգ չլինելու հանգամանք կարող է դիտվել ընտրողական ցեղգի սահմանափակումը, կամ կարող են ռազմական գործողություններ ծավալվել այսպես կոչված «չկայացած պետությունների» դեմ*։ Այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, մնան պատճառաբանությամբ զինված ուժի կիրառումը պետք է ընդունելի համարվի մեծ վերապահությամբ: Մասնավորապես՝ ռուս միջազգայնագետները հիմնականում դեմ են մարդասիրական ինտերվենցիայի գաղափարին⁸:

Կարծում ենք նաև, որ ներկայումս ժողովրդավարությունը, դուրս գալով զուտ քաղաքական-պետական համակարգի սահմաններից ու թափանցելով պետության, հասարակության և անհատի կենսագործունեության բոլոր ոլորտները, վերածվել է նոր ձևի կեցության, քաղաքակրթության: ՌԻստի սխալ կլինի պահանջել, որ բոլոր ազգերը միարժեքորեն ընդունեն նրա արևմտյան մոդելը, որը եվրոպական մտածողության, աշխարհայացքի արգասիքն է:

Ինչպես արդեն նշվեց, մարդասիրական ինտերվենցիան կիրառվում է նաև այսպես կոչված մարդասիրական աղետները կանխելու նպատակով: Այս առումով դոկտրինի կիրառման անհրաժեշտությունը պրակտիկայում առավել ակնհայտ դարձավ Կոսովոյում ՆԱՏՕ-ի զինված գործողություններից հետո, երբ ՆԱՏՕ-ի անդամ-պետությունները, ի պատասխան կենտրոնական իշխանության կողմից էթնիկական ալբանացիների բռնի տեղափոխումներին, իրականացրեցին 78-օրյա օդային ռմբակոծություններ՝ առանց իրենց գործողությունների համար միջազգային իրավունքի նորմերին համապատասխանող պատշաճ հիմնավորում ներկայացնելու⁹:

* Չկայացած պետություն են համարվում այն պետությունները, որոնք ի վիճակի չեն լրիվ կերպով իրականացնելու ինքնիշխանական իրավունքներն իրենց ամբողջ տարածքում և միջազգային հարաբերություններում հանդես գալու որպես ճանաչված արտաքին-քաղաքական սուբյեկտ (տես «ՀԲ», 2006, հմ. 2):

⁸ Տես, մասնավորապես, «Международное публичное право». Под ред. К. А. Бекяшева. М., 2007, с. 358, *ibid.*՝ В. С. Крылов. Международное право на защите демократии. М., 2006, с. 133:

⁹ Տես «Программа углубленного изучения вопросов безопасности» (<http://www.marshallcenter.org/site-graphic/lang-ru/static/xdocs/coll/static/pass/pass-overview-ru.pdf>):

Մարդասիրական ինտերվենցիայի դոկտրինը հատկապես ակտիվորեն պաշտպանվում էր Մեծ Բրիտանիայի կողմից: Որպես հիմնավորում առաջ է քաշվում այն փաստարկը, որ ՄԱԿ-ի կանոնադրության՝ միջազգային հարաբերություններում ուժի կիրառմանը կամ այն կիրառելու սպառնալիքից ձեռնպահ մնալուն վերաբերող 2.4 հոդվածի մեկնաբանությունը ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվել, և միջազգային իրավունքը պետք է փոփոխվի դրան համապատասխան:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Տոնի Բլերը 1999 թվականի ապրիլի 22-ին Չիկագոյի Տնտեսական ակումբում իր ելույթի ժամանակ նշեց, որ Հարավսլավիայի ռմբակոծությունները կատարվել են ոչ թե տարածքային հավակնությունների պատճառով, այլ այնտեղ կարգուկանոն հաստատելու և բացառապես համամարդկային արժեքներ արմատավորելու նպատակով: «Այս դարում մենք երկու անգամ ականատես ենք եղել, որ անգործությունը նման հարցերում չի օգնում: Այսօր անգործության մատնվելով՝ մենք վաղը ավելի շատ արյուն ենք թափելու և միջոցներ ենք ծախսելու՝ այդ չարիքին վերջ տալու համար»¹⁰: Մեծ Բրիտանիայի վարչապետն առաջ է քաշում այսպես կոչված «Միջազգային համայնքի դոկտրինը» (*Doctrine of international community*): Նման մոտեցումը միանշանակ կերպով վկայում է, որ այժմ միջազգային անվտանգության անկյունաքար դարձել է մարդու իրավունքների պաշտպանությունը: Շեշտադրվում է հատկապես այն, որ համընդհանրացումը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ու անվտանգային երևույթ է:

Անշուշտ, պետք է համաձայնվել վերը հիշատակված դրույթների հետ: Իրոք, և՛ առաջին, և՛ երկրորդ համաշխարհային պատերազմներին նախորդել են մարդու իրավունքների ոտնահարումները, որոնց նկատմամբ անտարբերությունը հանգեցրել է պատերազմների: Սակայն որքանով է նման պայմաններում զինված ուժի կիրառումը համապատասխանում ժամանակակից միջազգային իրավունքի նորմերին: ՄԱԿ-ի կանոնադրությունը, որը այսօր կանոնակարգում է զինված ուժի կիրառման հետ կապված հարցերը, որևէ դրույթ չի նախատեսում առանձին պետությունների կամ պետությունների խմբերի կողմից մարդու իրավունքների պաշտպանության նպատակով զինված ուժի կիրառման վերաբերյալ: Ընդհակառակը, միանշանակ կերպով սահմանվում է, որ զինված ուժի կիրառում հնարավոր է միայն Անվտանգության խորհրդի համաձայնության դեպքում: Բացի այդ, 1949 թ. դեկտեմբերի 6-ին ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից ընդունված «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին հռչակագրի» 9-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ուժի միջոցով այլ պետության տարածքային անձեռնմխելիությունը խախտելուց¹¹: Հարց է ծագում նաև, թե արդյոք մարդասիրական ինտերվենցիան ուղղված չէ պետությունների ինքնիշխանության դեմ: Սա կարող է առանցքային հարց լինել այն առումով, որ ՄԱԿ-ի կանոնադրության 2.4 հոդվածը արգելում է զինված ուժի կիրառումը՝ ուղղված միջազգային հարաբերություններում պետու-

¹⁰ «The Blair doctrine by Tony Blair». «Public broadcasting service», 1999, 22 April.

¹¹ Տես «Международное право: сборник документов». М., 2000, с. 32:

թյան տարածքային անձեռնմխելիության և քաղաքական անկախության դեմ:

Այս կապակցությամբ արտահայտվում են ամենատարբեր տեսակետներ: Մասնավորապես՝ ֆրանսիական «Լաբել Ֆրանսե» ամսագրին տված հարցազրույցում ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշել է, որ ինքն ավելի ու ավելի է հանգում այն մտքին, որ քաղաքացիական բնակչության և առանձին անհատների կողմից կառավարությունների վրա գործադրվող ճնշումները կնպաստեն, որպեսզի այդ հարցերում հրաժարվեն պետական ինքնիշխանության անձեռնմխելիության սկզբունքից՝ հոգուտ մարդասիրական միջամտության¹²: Քաղաքագետ Մ. Ռեյսմանը փաստարկում է, որ միջազգային իրավունքը դեռևս պաշտպանում է ինքնիշխանությունը, սակայն վերջինս ընկալվում է նորովի՝ ոչ որպես ընդհանրապես անկախ պետության իշխանություն, այլ որպես անկախ պետության *օրինակյալ* իշխանություն, որն իր լիազորություններն ստացել է իշխանության միակ կողմի՝ ժողովրդի կողմից¹³: Ներկայումս գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններն ընդունում են, որ իշխանության աղբյուրը և ինքնիշխանության կրողը ժողովուրդն է¹⁴: Փաստորեն, մարդասիրական ինտերվենցիա ձեռնարկելով, պետությունները ձգտում են զինված ուժով պաշտպանելու ինքնիշխանության աղբյուրը¹⁵:

Սեր կարծիքով՝ առավել ընդունելի է երկրորդ տեսակետը, քանի որ, իրոք, ներկայումս հենց ժողովուրդն է ինքնիշխանության կրողը: Պետությունը, հանձինս առանձին անհատների, իշխանությունն ստանալով ժողովրդից, չպետք է արհամարհի նրան, առավել ևս՝ խախտի նրա իրավունքները: Այլ հարց է, թե որքանով է արդարացված առանձին պետությունների միջամտությունը այդ ոտնահարումները վերացնելու համար: Մենք հակված ենք այն կարծիքին, որ դա անթույլատրելի է այն առումով, որ հզոր տերություններին փաստորեն իրավունք է վերապահվում որոշելու, թե ոտնահարվում են արդյոք տվյալ պետություններում մարդու իրավունքները, և հետևաբար հարձակում գործելու այդ պետության վրա՝ առանց հաշվի առնելու միջազգային հանրության կարծիքը: Սա կնշանակեր, որ իր գոյության իմաստն է կորցնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որն ստեղծվել է որպես անվտանգության համաժողով¹⁶: Այս առումով, մեր կարծիքով, վճռորոշ դերը պատկանում է ՄԱԿ-ին և հատկապես՝ նրա Անվտանգության խորհրդին, որը, ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան, պետք է որոշի, թե արդյոք ստեղծված իրավիճակը պարունակում է միջազգային անվտանգության համար սպառնալիք, և ձեռնարկի դրանից բխող բոլոր անհրաժեշտ միջոցները: Ուստի, հազիվ թե ընդունելի կարելի է համարել Մեծ Բրիտանիայի վարչապետ Տոնի Բլերի այն պնդումը, թե ՄԱԿ-ի կանոնադրության 2.4 հոդվածի մեկ-

¹² Տես «Label France». 1998, December, № 34:

¹³ Տես Michael W. Reisman. Sovereignty and human rights in contemporary international law. «The American journal of international law». 1990, Vol. 84, № 4, October:

¹⁴ Տես «ՌԳ՝ Սահմանադրությունը»:

¹⁵ Տես Mathew Wilson. Guarding state sovereignty. 2006, P. 208:

¹⁶ Տես Thomas M. Franck. Fairness in international law and institutions. Oxford, 1995, P. 219:

նաբանությունը ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվել, և միջազգային իրավունքը պետք է համապատասխանաբար արձագանքի այդ փոփոխություններին:

Ինչ վերաբերում է պետության կողմից իր քաղաքացիների պաշտպանության նպատակով կատարվող միջամտությանը, որը, ըստ Ս. Վ. Չեռնիչենկոյի, մարդասիրական ինտերվենցիայի մի ձև է, ապա միջազգային իրավունքում այն շատ հաճախ նույնացվում է ինքնապաշտպանության հետ, քանի որ այս դեպքում գործում է ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, համաձայն որի՝ պետությունը իր վրա կատարված զինված հարձակման դեպքում իրավունք ունի դիմելու ինքնապաշտպանության: Այս պնդումը ևս վիճելի է, առաջին հերթին, այն առումով, որ միջազգային իրավունքը հստակ պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչը պետք է լինի զինված հարձակման օբյեկտ: Արդյո՞ք զինված հարձակում պետք է դիտել մի պետության կողմից մեկ այլ պետության սահմանների խախտումը, ինչպես դա եղավ, ասենք, Իրաքի կողմից Քուվեյթ ներխուժման ժամանակ, թե՞ մի պետության տարածքում մեկ այլ պետության քաղաքացիների նկատմամբ կատարված ոսնձգությունները, ինչպես դա եղավ Իրանում ԱՄՆ-ի քաղաքացիներին պատանդ վերցնելու ժամանակ: Կարծում ենք՝ միանգամայն արդարացի է Ն. Կռիլովը, երբ նշում է, որ այլ պետության տարածքում որևէ երկրի քաղաքացիների վրա զինված հարձակումը (այդ հարձակման մասշտաբների հաշվառմամբ), համարվում է այդ պետության վրա զինված հարձակում: Քաղաքացիները պետության բարձրագույն արժեքն են, մինչդեռ տարածքը միայն ինքնիշխանության գույտ նյութական նախապայմանն է: Ըստ նրա՝ արդարացի չէր լինի բաց ծովում սեփական նավատորմի վրա հարձակումը դիտել որպես պետության վրա զինված հարձակում, իսկ քաղաքացիների վրա հարձակումը՝ ոչ¹⁷: Այսպիսով՝ գալիս ենք այն եզրակացության, որ պետությունը իր քաղաքացիների վրա հարձակումը կարող է հիմք համարել ոչ թե մարդասիրական ինտերվենցիայի, այլ ինքնապաշտպանության համար և այն իրականացնել ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան:

Անփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ միջազգային հարաբերությունների զարգացման ներկայիս պայմաններում առանձին պետություններում մարդու իրավունքների ոտնահարումը կարող է միջազգային անվտանգության համար ստեղծել սպառնալիք: Անշուշտ, դրան պետք է արձագանքեն ոչ թե առանձին պետություններ, այլ ամբողջ միջազգային հանրությունը: Չինված ուժի ցանկացած կիրառում, որը դուրս է ինքնապաշտպանության շրջանակներից, պետք է կատարվի բացառապես կենտրոնացված կարգով՝ փոխհամաձայնեցված միջազգային հանրության մյուս անդամների հետ: Եվ այս կանոնից որևէ բացառություն, մեր կարծիքով, անընդունելի է:

¹⁷ Տես *Н. Крылов. Защита сограждан, находящихся в опасности за рубежом. «Международная жизнь», 1995, № 1:*

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

**ВОЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ ГОСУДАРСТВ
В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОЙ БЕЗОПАСНОСТИ
В СВЕТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА**

А. М. АМБАРЯН, капитан

РЕЗЮМЕ

Военная безопасность определяется как способность государства предотвратить или нейтрализовать внешнюю вооруженную агрессию собственными силами и часто считается основной составляющей национальной безопасности. Такие особенности системы международных отношений, как децентрализованная структура и формальная неподчиненность государств друг другу, часто приводят к тому, что силовые возможности и экономическая мощь одного государства позволяют ему обеспечивать собственную военную безопасность, не считаясь с интересами других, более слабых стран. Подобная модель является силовой.

Альтернативой силовой модели является интегрирование государства в систему международной безопасности, где взаимоотношения между государствами регулируются на основе современного международного права, и дипломатические методы решения противоречий превалируют над военными. Сотрудничество стран в области обеспечения международной безопасности, где угроза безопасности одной из стран отражается на остальных странах сообщества, позволяет не только существенно сократить военные расходы, но и повысить эффективность борьбы с глобальными угрозами современности: международным терроризмом, распространением оружия массового поражения, организованной преступностью и другими вызовами.

**ПРАВОВЫЕ ОСНОВЫ ГУМАНИТАРНОЙ ИНТЕРВЕНЦИИ
В СОВРЕМЕННОМ МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ**

В. А. ХАЧАТРЯН, старший лейтенант

РЕЗЮМЕ

В современном мире защита прав человека и гражданина вышла за пределы компетенции отдельных государств и, став одной из главных задач международного сообщества, юридически обеспечивается такими международными организациями, как Европейский и Римский уголовные суды.

Согласно международным правовым нормам, нарушители прав человека должны нести ответственность за свои преступления. Нападения на своих граждан государство может считать основанием для самозащиты, которая должна осуществляться согласно статье 51 Устава ООН. Вооруженное вторжение на территорию государства, где происходят массовые нарушения прав человека, с целью предотвращения гуманитарной катастрофы, получило название гуманитарной интервенции. Противоречие между доктриной гумани-

тарной интервенции и суверенитетом отдельного государства, в котором происходят массовые нарушения прав граждан, кажущееся, т. к. согласно современным представлениям, именно народ является носителем суверенитета своего государства.

ООН, Совет безопасности которого в ряде случаев разрешает гуманитарную интервенцию, в своем Уставе не предусматривает подобной акции со стороны отдельного государства или группы государств.

На современном этапе развития международных отношений нарушение прав человека в отдельных государствах может стать угрозой международной безопасности в целом, и ее нейтрализация, являясь задачей всего международного сообщества, должна осуществляться взаимосогласованно и централизованно.

INTERNATIONAL LAW

MILITARY SECURITY OF THE STATES IN THE CONTEXT OF THE INTERNATIONAL SECURITY IN THE LIGHT OF THE INTERNATIONAL LAW

A. M. HAMBARYAN, Captain

SUMMARY

The military security is determined as the capability of a state to prevent and neutralize external armed aggression by its own forces, and it is often considered as the basic component of the national security. Such peculiarities of the system of international relations, as the decentralized structure and formal insubordination of states to each other, often lead to such an extent that the force potential and economic power of a state allow it to ensure its own military security without considering the interests of other, weaker countries. Similar model is the force one.

An alternative of the force model is the integration of a state into the international security system where the interrelations among states are regulated on the basis of the contemporary international law, and the diplomatic methods of conflict resolution prevail over the military ones. The cooperation of countries in the sphere of ensuring international security, where the threat to the security of one of the countries is reflected on the other countries of the community, allows not only to essentially reduce the military expenditure, but also to increase the efficiency of the struggle against global threats of the contemporary time: international terrorism, proliferation of weapons of mass destruction, organized crime and other challenges.

LEGAL PRINCIPLES OF HUMANITARIAN INTERVENTION
IN THE CONTEMPORARY INTERNATIONAL LAW

V. A. KHACHATRYAN, *Senior Lieutenant*

SUMMARY

In the contemporary world the protection of rights of individuals and citizens has come out of the boundaries of separate states' competence and, becoming one of the key tasks of the international community, is legally supported by such international organizations as European and Rome criminal courts.

According to the international legal standards, the infringers of human rights should bear the responsibility for their crimes. A state can take the assaults on its citizens as grounds for self-defense, which must be carried out in accordance with the Article 51 of the UN Charter. The armed invasion into the territory of a state, where mass violations of human rights take place, to prevent humanitarian catastrophe, is named «a humanitarian intervention». The contradiction between the doctrine of the humanitarian intervention and a separate state's sovereignty, where mass violations of the human rights take place, is seeming, as according to the contemporary ideas, it is the people who is the bearer of its state's sovereignty.

The UNO, the Security Council of which permits the humanitarian intervention in a number of cases, makes no provisions in its Charter for such an action by a separate state or a group of states.

At the contemporary stage of developing the international relations, human rights violation in separate states can be a threat to the international security on the whole, and its neutralization, being a task of the whole international community, must be carried out in an interconsistent and centralized way.

**ՀԱՎԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ժամանակակից պատերազմը ոչ միայն զինված բախում է, այլև բարոյական ոգու, հայացքների, սկզբունքների պայքար: Կարևոր գործոն է հասարակական գիտակցության ոլորտում հաղթանակի ձեռքբերումը: Հոգեբանական պայքարը մղվում է մինչև մարտական գործողությունները և շարունակվում ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ դրա ավարտից հետո: Հիմնական խնդիրը հակառակորդի խմբային գիտակցության վրա ներգործության միջոցով սեփական կամքի պարտադրումն է՝ հասարակության, այդ թվում նաև ՋՈՒ-ի անձնակազմի գիտակցության կառավարման ու բռնակառավարման նպատակով¹:

Նկատի ունենալով հարավկովկասյան տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը և Հայաստանի դեմ Ադրբեջանի վարած տեղեկության պատերազմը՝ չի կարելի անտեսել այդ գործընթացների հոգեբանական գործոնները, որոնք հզոր քաղաքական և դիվանագիտական զենք են: Այս կապակցությամբ նպատակահարմար ենք գտնում մեջբերել Ադրբեջանի Միլի Մեջլիսի 2006 թ. աշնանային նստաշրջանի բացման ժամանակ Իլհամ Ալիևի ելույթից հետևյալ արտահայտությունը. «Մենք արդեն սկսել ենք տեղեկության գրոհը, այժմ պետք է սկսենք տնտեսական գրոհը: Մինչև հայկական կողմը չզգա նման ճնշում, նա դժվար թե ինքնակամ լքի զավթած հողերը»²:

Ինքնին հասկանալի է, որ Ալիևի այս արտահայտությունը պատահական չէ: Նրա նպատակն է միջազգային հանրությանը և եվրոպական համապատասխան ատյաններին ներկայացնել ոչ թե այն հանգամանքը, որ Ադրբեջանը, բացի տեղեկության գրոհից, պետք է սկսի նաև տնտեսական գրոհ (և՛ տեղեկության, և՛ տնտեսական գրոհը նրանք վաղուց են սկսել), այլ Հայաստանը համաշխարհային հանրությանը ներկայացնել իբրև ագրեսորի: Դա Ադրբեջանի համար խիստ կարևոր հանգամանք է: Այն ենթադրում է միջազգային կարծիքի միջոցով մեզ վրա ներգործություն,

¹ Հոգեբանական պայքարի և հոգեբանական օպերացիաների մասին հանգամանորեն տես Վ. Հ. Մարգարյան, Հոգեբանական օպերացիա. նպատակները և միջոցները: «ՀԲ», 2001, հմ. 4, *նույնի*՝ Ջինդառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: «ՀԲ», 2002, հմ. 3, ինչպես նաև այդ հոդվածներում նշված գրականությունը:

² Տես «Баку зачехляет пушки». «Еженедельное приложение к «Независимой газете», 27 октября—2 ноября 2006 г., № 39 (497):

ինչը շատ ավելի ազդու է, քանի որ հակառակորդի կողմից տարածվող տեղեկույթի նկատմամբ այս կամ այն չափով ցուցաբերվում է քննադատողականություն, մինչդեռ միջազգային հանրության կարծիքը նման խոչընդոտի հարաբերականորեն քիչ է բախվում: Անշուշտ, ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ միջազգային հանրության կարծիքը նույնպես պետք է քննադատաբար ընկալվի, քանզի միշտ չէ, որ այդ կարծիքը կարող է օբյեկտիվ լինել և համապատասխանել ազգային շահերին:

Հոգեբանական օպերացիաների ոլորտում իրականացվող գործունեության արդյունավետության չափանիշներից մեկը համապատասխան կառույցների կողմից միջազգային կարծիքի ձևավորման ունակությունն է: Պետք է նշել, որ անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու առումով Հայաստանի Հանրապետությունը կարևորում է իր ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտում, Հայաստանի և հայության մասին ճշմարտության արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու քարոզչությանը³:

Համաշխարհային հանրության կարծիքի ձևավորման, ինչպես նաև հակառակորդի գործերի ու հասարակության վրա տեղեկութահոգեբանական ներգործության ապահովման նպատակով ՋԼՄ-ների կիրառման առավել բնորոշ և վառ օրինակներից են 1999 թ. ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունները Հարավսլավիայում: Տվյալ հարցին վերաբերող նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռուստա- և ռադիոընկերությունները, թերթերը և «Ինտերնետ» համացանցը ակտիվորեն մասնակցում էին ՆԱՏՕ-ի տեղեկութային ռազմարշավին: Ռազմավարական մակարդակում ռազմարշավի նվազագույն նպատակն էր ձևավորել համաշխարհային այնպիսի կարծիք, որը չխոչընդոտեր ՆԱՏՕ-ի զինված միջամտությանը, իսկ առավելագույնը՝ ապահովել միջազգային հանրության աջակցությունը կամ գոնե՝ համակրանքը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության գործողություններին: Իհարկե, պետք էր նաև չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել Ռուսաստանի, Չինաստանի և այլ երկրների ազդեցությունը, որոնք դեմ էին Հարավսլավիայում ՆԱՏՕ-ի ռազմական գործողություններին: Հարկ է նշել, որ ՆԱՏՕ-ի կողմից ձեռնարկված գործողությունների մեծ արդյունավետությունը պայմանավորված էր ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում տեղեկութահոգեբանական ապահովման հստակ կառավարմամբ⁴:

Կոսովոյում ՆԱՏՕ-ի «Դաշնակցային ուժեր» (1999 թ. մարտ–հունիս) օպերացիայի ընթացքում տեղեկութահոգեբանական ներգործության նպատակով կիրառվել է խստիվ կարգավորված մի մեխանիզմ, որը փորձարկվել էր 90-ական թթ. ԱՄՆ-ի ՋՈՒ-ի ռազմական օպերացիաների պատրաստման և վարման ընթացքում («Փոթո-

³ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 28:

⁴ Տես A. Гусев. Сотрудничество органов психологической борьбы ВС США со СМИ при освещении конфликта в Косово. «ЗВО», 2007, № 7:

րիկ անապատում»՝ Իրաքում, «Աջակցություն ժողովրդավարությանը»՝ Հաիթիում, խաղաղարարական օպերացիա ԻՖՈՐ-ՍՖՈՐ*՝ Բոսնիայում և Հերցեգովինայում⁵:

Արտասահմանյան փորձագետները համարում են, որ Կոսովոյում հակամարտության լուսաբանման հստակ կազմակերպումը, որը ՉԼՄ-ների հետ համատեղ կատարեցին ԱՄՆ-ի ՉՈՒ-ի հոգեբանական պայքարի ուժերը, ապահովեց անհրաժեշտ հոգեբանական արդյունք: Վերը նշվածից հետևությունը մեկն է. ՉԼՄ-ների կողմից իրադարձությունների մեկնաբանումը կամ լուսաբանումը պետք է պարտադիր կերպով կատարվի հոգեբանական օպերացիաների տեսանկյունից, իսկ դա ենթադրում է ՉԼՄ-ների և հոգեբանական օպերացիաների հատուկ ստորաբաժանումների համակարգված ու համադասված աշխատանք⁶: Չինված հակամարտության ժամանակ, ինչպես նաև զինադադարից հետո ՉԼՄ-ների հետ պետական և ռազմական կառավարման մարմինների ակտիվ աշխատանքի անհրաժեշտությունը ապացուցված է համաշխարհային ռազմական պրակտիկայով: Որպես վառ օրինակ կարելի է ներկայացնել Իրաքում 2003 թ. մարտին ԱՄՆ-ի ՉՈՒ-ի իրականացրած օպերացիան, որի պատրաստման ու վարման ընթացքում ՉԼՄ-ների հետ պետական և ռազմական կառավարման մարմինների աշխատանքում ցայտունորեն արտահայտվեցին մի շարք նոր կառավարային ու ստեղծագործական լուծումներ: Ի դեպ, Ռ-Դ համապատասխան մարմինները վերլուծեցին առաջին չեչենական պատերազմի ժամանակ (1994 թ. դեկտեմբեր–1996 թ. օգոստոս) ՉԼՄ-ների հետ աշխատանքում թույլ տրված կոպիտ սխալները և միանգամայն այլ մոտեցում դրսևորեցին երկրորդ չեչենական պատերազմի ակտիվ մարտական գործողությունների փուլում (1999 թ. սեպտեմբեր–2000 թ. հոկտեմբեր)⁷:

Հոգեբանական պատերազմը մեծ ֆինանսական ծախսեր չի պահանջում, հարաբերականորեն մարդասիրական է և միևնույն ժամանակ՝ արդյունավետ: Տեղեկութահոգեբանական գործողությունները հիմնված են զանգվածների գիտակցության նպատակային կառավարման, այդ թվում՝ նպատակաուղղված ապատեղեկատվության, միջոցով այդ գիտակցության մեջ սխալ պատկերացումների ձևավորման եղանակների կիրառման վրա:

Այսօր Ադրբեյջանի կողմից օգտագործվող տեղեկատվական միջոցները, այդ թվում նաև «Ինտերնետ» համացանցը, որն իր արագագործության շնորհիվ շատ արդյունաբար միջոց է, մեծ ծավալների տեղեկույթ են հաղորդում: Բավական է նշել

* ԻՖՈՐ (*IFOR—Implementation Force*)՝ հաշտության համաձայնագրի կատարման գծով ուժեր, ՍՖՈՐ (*SFOR—Stabilisation Force*)՝ կայունացնող ուժեր (տես «Справочник НАТО». Брюссель, 2001, сс. 494, 509):

⁵ Տես նույն տեղում, *tiuli*՝ *С. Гриняев*. Эксперты корпорации «РЭНД» об информационной стратегии. «ЗВО», 2001, № 10:

⁶ Տես, օրինակ, Վ. Հ. *Մարգարյան*, Տեղեկատվական դաշտի վերահսկողությունը հոգեբանական օպերացիաների տեսանկյունից: «ՀԲ», 2004, հմ. 2:

⁷ Տես *В. Сафонов*. Оценка специалистами США эффективности психологических операций в Ираке. «ЗВО», 2005, № 6, *tiuli*՝ *В. И. Тимофеев*. О работе органов военного управления со средствами массовой информации в период вооруженного конфликта. «Военная мысль», 2007, № 6:

մի քանի ինտերնետային կայքեր, մասնավորապես՝ www.azertag.com, www.azerbaijantoday.com, www.today.az, <http://Azerbaijan.aznet.org>, www.human.gov.az, որոնք իրականությունն այնպես են աղավաղում ու հոգեբանական ներգործության տեսանկյունից այնպես ներկայացնում, որ ռեալ իրողությանը անձանոթ մարդիկ կարող են կեղծիքն ընկալել որպես ճշմարտություն*։ Ստեղծված իրադրության զարգացման վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ Հայաստանին անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ուղղված հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության չեզոքացմանը, հասարակության, այդ թվում նաև զինձառայողների պաշտպանությանը։ Կա՞ն արդյոք դրա համար նախադրյալներ, և որո՞նք են դրանք։

Այս հարցերին պատասխանելու համար նպատակահարմար ենք գտնում վերլուծել չեչենական առաջին պատերազմի պայմաններում ՌԴ ԶՈՒ-ի առանձին իրամասնատարների, շտաբների և դաստիարակչական մարմինների առջև ծառայած խնդիրները՝ կապված հակառակորդի տեղեկութահոգեբանական ներգործության նվազեցման և յուրային անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի պատշաճ մակարդակի պահպանման հետ, ինչը գորքերի մարտունակության կարևոր բաղադրիչներից մեկն է։ Այդ խնդիրների լուծումը բարդանում էր մի շարք էական պրոբլեմների պատճառով։

Առաջին. Չեչնիայում ռազմական օպերացիաների սկզբնական փուլում բավական երկար ժամանակ չկար դաշնային զորքերի կողմից ծավալվող գործողությունների հստակ ու համոզիչ հիմնավորում, ինչը չէր կարող բացասաբար չազդել զինձառայողների բարոյահոգեբանական վիճակի վրա։ Այս տեսանկյունից միանգամայն այլ ռազմավարություն էր վարում Դուդակը։ Նրա զինված կազմավորումներում գործում էին հոգեբանական օպերացիաների ոլորտի 60-ից ավելի մասնագետներ, որոնք տեղեկության ներգործության միջոցներից կարևորում էին տպագիր քարոզչությունը։ Դա է վկայում այն փաստը, որ մինչև դաշնային զորքերի մարտական գործողություններ սկսելը արդեն թռուցիկներ էին տարածվել՝ նենգադուլի, Չեչնիայի տարածքում մարտական խնդիրների կատարումից հրաժարվելու կոչերով։

Դուդակյան քարոզչության համար նաև հզոր «զենք» էին Ռուսաստանի որոշ կենտրոնական հրատարակություններ։ Դաշնային զորքերի համար միայն առաջին՝ ամենադժվար, ամսվա ընթացքում երեք թերթերում («Արգունենտի ի ֆակտի», «Բզվեստիա», «Մոսկովսկի կոմսոմոլեց») տպագրվեցին բազմաթիվ հակաբանակային նյութեր։ Այդ նույն ժամանակահատվածում ՌԴ համապատասխան կառույցների կողմից Չեչնիայում զարգացող իրադարձությունների մասին պաշտոնական տեղեկույթի ծավալը կազմում էր ամբողջ հաղորդումների միայն 5 %-ը։ Ինչ վերաբերում է դուդակյան ռադիոքարոզչությանը, ապա այն նույնպես արդյունավետ էր, և դաշնային զորքերի առանձին զինձառայողներ ընկնում էին դրա ազդեցության տակ, ինչի հետևանքով էլ նրանց մեջ երկմտություն էր առաջանում։ Օրինակ՝ 80-հազարանոց

* Հարկ է նշել, որ նման քաղաքականությունը արտացոլվում է ադրբեջանական ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական կայքերում։

դաշնային գործադիր մարման անձնակազմի 42 %-ը բարոյապես անկայուն էր և կասկած ու անվստահություն էր տածում մարտական գործողությունների վարման օրինականության նկատմամբ (շարքայինների և սերժանտների 76 %-ը, կրտսեր սպայական կազմի 62 %-ը): Ըստ Ռ-Գ ՋՈՒ-ի դաստիարակչական աշխատանքի գլխավոր վարչության տվյալների՝ յուրաքանչյուր երկրորդ զինվոր ու սպա մինչև մարտական օպերացիաները խորը մտորումների մեջ էր ընկնում, թե հանուն ինչի են իրենք իրենց կյանքը վտանգի ենթարկում⁸:

Գաշնային զորքերի վրա տեղեկության և ներգործության կարևոր միջոց էին նաև հեռուստատեսությունը և բանավոր քարոզչությունը (մագնիսաձայնային ժապավենատուփերի տարածում): Այստեղ հարկ ենք համարում նշել, որ դուրանյան մասնագետների կողմից մեծ աշխատանք էր կատարվում ինչպես հակառակորդի զորքի բարոյաքմամբ, այնպես էլ յուրային զինված կազմավորումների մարտական ոգու բարձրացման, նրանց թվում եղած տարբեր ազգերի ներկայացուցիչների բարոյահոգեբանական միասնության ապահովման ուղղությամբ: Հետաքրքրականն այն է, որ և՛ քարոզչությունը, և՛ հոգեբանական ներգործությունը իրենց հիմքում ունեին այն նույն սկզբունքը, որը կիրառվել էր Աֆղանստանում խորհրդային զորքերի դեմ պայքարին մոջահեդների պատրաստման ժամանակ⁹:

Երկրորդ. դաշնային զորքերում և դաշնային գործադիր իշխանության բոլոր մակարդակներում չեչենական պատերազմի տեղեկութահոգեբանական ապահովման սկզբնական փուլում տեղ գտան կոպիտ սխալներ, որոնք, իհարկե, պայմանավորված էին ոչ միայն բանակային համապատասխան կառույցների աշխատանքի թերություններով: Պատճառները շատ ավելի խորն էին. մի կողմից՝ պետությունում, այդ թվում նաև ՋՈՒ-ում, քաղաքական-գաղափարախոսական մարմինների համակարգի քայքայումը, և մյուս կողմից՝ համապատասխան տեղեկութաբարոզչական հայեցակարգ չլինելու հանգամանքը: Պետք է նշել, որ զորքերում տեղեկութաբարոզչական համակարգը փլուզվեց երկրում ամբողջ կուսակցական-գաղափարախոսական կառույցների հետ մեկտեղ, ինչի հետևանքով էլ հոդս ցնդեց քարոզչական աշխատանքի այն հսկայական փորձը, որը երկրում և, մասնավորապես, զորքերում կուտակվել էր տասնյակ տարիների ընթացքում (երկրորդ համաշխարհային պատերազմ, Աֆղանստանում խորհրդային զորքերի սահմանափակ թվակազմի մարտական գործողություններ և այլն): Այս հանգամանքների հաշվառմամբ հոգեբանական օպերացիաների ոլորտի դուրանյան մասնագետները հատուկ նշանակություն էին տալիս անհատահոգեբանական ներգործությանը, որի նպատակն էր ռուս զինձառայողին կաշառել, շանտաժի ենթարկել, վախեցնել, հրահրել նենգադուլի և հիվանդությունների կեղծագործման, անդամախեղության, նրանց կողմնորոշել դեպի խուսափում մարտից և այլն: Բացի այդ, մշակված էր հոգեբանական ներգործության մեկ այլ եղանակ ևս: Չեչենական դիպուկահարները աշխատում էին

⁸ Տես *М. Севастьянов, П. Фоменко. Не проиграть информационную войну. «Ориентир», 2004, № 2:*

⁹ Տես Հ. Ս. *Քոթլիցյան*, Մոջահեդի բարոյահոգեբանական կողմնորոշումների հարցի շուրջ: «ՀԲ», 1996, հմ. 1:

հրաձգության ժամանակ գնդակով խոցել ընտրված զոհի ոտքերը: Երբ օգնություն ցույց տալու համար վիրավորին մոտենում էին նրա զինակիցները, նրանց էլ էին վիրավորում ոտքերից, իսկ հետո՝ մեթոդաբար ոչնչացնում: Այս ամենը զինծառայողների շրջանում անվստահության ու վախի զգացում էր առաջացնում, ինչը ռազմական կառավարման մարմինների համար մարտական գործողությունների կազմակերպման գործում պրոբլեմներ էր ստեղծում:

Հոգեբանական ներգործության համալիրի մյուս բաղադրիչներն էին դիվերսիաների կազմակերպումը, հանկարծակի հարձակումները, որոնք հանգեցնում էին խուճապի, մեծ թվով մարդկային զոհերի ու նյութական կորուստների:

Դուրանյան մասնագետները մեծ տեղ էին հատկացնում նաև ահաբեկչական գործողություններին. ճանապարհի առավել բանուկ տեղամասերում տեղադրվում էին տարբեր տեսակի ականներ (ական-թակարդներ, ական-անակնկալներ): Դա հնարավորություն էր տալիս «ընտրելու» անհրաժեշտ նշանակետ-զոհին, ինչը դաշնային զորքերի ստորաբաժանումների զինծառայողների շրջանում առաջացնում էր հոգեբանական ռեզոնանս: Հաճախ դուրանյան զինված կազմավորումները հմտորեն կիրառում էին պարտիզանական պայքարի այլ մեթոդներ, ինչը խիստ բացասական հոգեբանական ներգործություն էր ունենում դաշնային զորքերի վրա:

Երրորդ. դաշնային զորքերի կողմից մարտական գործողությունների պատրաստման և վարման ընթացքում հակառակորդի հոգեբանական գործողություններին հակազդման գործընթացը համակարգված չէր: Հակառակորդի հոգեբանական գործողությունների կանխատեսումը, կանխարգելումը և չեզոքացումը, հետևանքների վերացումը դաշնային զորքերի հրամանատարության կողմից կատարվում էին ոչ արհեստավարժորեն, կռահողաբար և քառսայնորեն: Որպես անձնակազմի հոգեբանական պատրաստության կարևորության թերագնահատման օրինակ կարելի է ներկայացնել հետևյալ փաստը: Մինչև թռիչքը գնդերից մեկի անձնակազմին (Մոսկվայի զինվորական օկրուգ) զուլացրեցին. «Թռչում եք Խաբարովսկ»: Մի քանի ժամ անց ինքնաթիռը վայրէջք կատարեց Մոզդոկում, ապա գունդը ներգրավվեց մարտական գործողություններում, որոնց սկզբնական շրջանում գնդի անձնակազմի հոգեծին (պսիխոզեն) կորուստը* 80 %-ից ավելի էր¹⁰:

Հարկ է նշել նաև, որ դաշնային զորքերում համապատասխան մասնագետներ չլինելու պատճառով լիարժեքորեն չէին կիրառվում քարոզչական աշխատանքի վարման տեխնիկական միջոցները¹¹:

Այսպիսով՝ չեչենական առաջին պատերազմի մարտական իրադարձություն-

* Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հոգեծին և ֆիզիկական կորուստների հարաբերակցությունը կազմել է 36:100, Լիբանանում պատերազմի ժամանակ իսրայելական բանակի առանձին ստորաբաժանումներում՝ 86:100, «Փոթորիկ անապատում» օպերացիայի ժամանակ անգլիական բանակի զինծառայողների հոգեծին կորուստները էապես գերազանցեցին ֆիզիկական կորուստները, ինչի պատճառով պահանջվեց անցկացնել երկարատև հոգեբանական վերականգնողական միջոցառումներ:

¹⁰ Տես Մ. Մուսայրյանով, Պ. Յունենկո, նշ. աշխ.:

¹¹ Տես նույն տեղում:

ների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղեկութահոգեբանական ներգործությանը հակազդման ՌԴ ՁՈՒ-ի համակարգն ուներ լուրջ թերություններ: Քարոզչության հայեցակարգի մշակումը, տեղեկատվական նյութերի պատրաստումը, լրագրողների հետ նպատակային աշխատանքը, գորքերում բարոյահոգեբանական մթնոլորտի գնահատումը և քարոզչական աշխատանքի համար հրահանգների մշակումը, բարենպաստ հասարակական կարծիքի ձևավորումը տեղեկութահոգեբանական (տեղեկութաքարոզչական) բնույթի այն խնդիրներն էին, որոնք միշտ չէ, որ իրենց արտացոլումն էին ստանում ռազմական կառավարման մարմինների գործունեության մեջ, ինչն էլ բարդացնում էր մարտական խնդիրների կատարումը:

Հետաքրքրական է, որ ներկայումս, օրինակ, չինացի փորձագետներից շատերը հոգեբանական օպերացիաների վարման ոլորտում շեշտը դնում են մարդու արժեհամակարգի վրա, հենց որի վրա էլ հիմնված են մարդու գործողությունների շարժառիթները: Նրանց կարծիքով՝ հոգեբանական պատերազմի առավել կարևոր ռազմավարական նպատակներին կարելի է հասնել հակառակորդի գաղափարախոսական համակարգի քայքայման միջոցով՝ խաթարելով արժեքների այն համակարգը, որը որդեգրել է տվյալ ժողովուրդը*:

Այդ իսկ պատճառով Չինաստանում հոգեբանական օպերացիաների ոլորտում կատարվող գիտական հետազոտությունների մեծ մասը վերաբերում է պետության տեղեկութահոգևոր անվտանգության ապահովմանը, ինչը Չինաստանում պետական անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից մեկն է:

ՌԻՀագրավ է, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ներկայիս ռազմաքաղաքական ղեկավարությունը ձեռնարկում է լուրջ քայլեր՝ ուղղված տեղեկութահոգեբանական ոլորտում իրենց շահերը պաշտպանելու արդյունավետ ռազմավարության մշակմանը: Նա համարում է, որ այդ ռազմավարությունը պետք է նպաստի Չինաստանի քաղաքացիների գիտակցության տեղեկութահոգեբանական արդյունավետ պաշտպանությանը, ինչը պետք է հիմնվի Չինաստանի ամբողջ բնակչության «ինունացման» վրա: Այդ գործընթացը ենթադրում է, մի կողմից, արտաքին աշխարհից փոխառված գաղափարների հետ հաղորդակցման արգելքի վերացում, և, մյուս կողմից, այդ գաղափարների սխալականության ու վտանգավորության պարզաբանում: Հոգեբանական օպերացիաների վարման ոլորտում մասնագետները հենց այսպես են առաջարկում ձևավորել ՉԺՀ բնակչության «ինունիտետը»: Իսկ դա նշանակում է տեղեկատվական դաշտի խստագույնս վերահսկում հոգեբանական օպերացիաների տեսանկյունից, ինչն էլ իր հերթին ենթադրում է հոգեբանական պատերազմի վարման ռազմավարության մշակում և համապատասխան կառույց-

* Օրինակ՝ գաղտնիք չէ, որ ԽՍՀՄ փլուզման ժամանակ, այլ գործոնների հետ մեկտեղ, կարևոր դեր խաղացին նաև «սառը պատերազմի» շրջանում ԱՄՆ-ի կողմից տեղեկութահոգեբանական ոլորտում իրականացված նպատակային գործողությունները, որոնք նախատեսված էին դեռ 1945 թ. Ա. Դալեսի կողմից մշակված ծրագրով (տես *С. Н. Конопатов, В. В. Югин. Традиционный смысл «война» устарел. «Военная мысль», 2001, № 1, март` в. Հ. Մարգարյան, Չինաստանյոների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: «ՀԲ», 2002, հմ. 3):*

ների առկայություն: Օրինակ՝ Չինաստանի ժողովրդասագատագրական բանակի համար պատերազմի վարման ժամանակակից հայեցակարգերի շրջանակներում որոշված են հոգեբանական օպերացիաների ռազմավարության հետևյալ հիմնական ուղղությունները.

– գորքերի ու կառավարման մարմինների ուսուցման ընդհանուր ծրագրի շրջանակներում հարձակողական և պաշտպանական բնույթի հոգեբանական օպերացիաների վարման համար անհրաժեշտ գիտելիքների սերմանում,

– հոգեբանական օպերացիաների վարման համար անհրաժեշտ ուժերի ու միջոցների լիարժեք լրակազմի ծավալում,

– տեղեկութահոգեբանական ներգործության ոլորտում գիտական հետազոտությունների համապատասխան համակարգի ստեղծում,

– հոգեբանական օպերացիաներ իրականացնող մարմնի ներուժի զարգացում, այդ ոլորտի մասնագետների պատրաստման որակի բարձրացում¹²:

Ի մի բերելով առաջավոր երկրների փորձը՝ մենք ժամանակին մշակել էինք բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից զինծառայողների պաշտպանության ուղղությամբ կոնկրետ միջոցառումների համալիր¹³: Հաշվի առնելով արդի փուլում այդ միջոցառումների անցկացման անընդմեջ աճող անհրաժեշտությունը և հոգեբանական օպերացիաների ոլորտում ռացիոնալ քաղաքականություն վարելու կարևորությունը՝ նպատակահարմար ենք համարում ամփոփ ձևով ներկայացնել դրանք:

Միջոցառումների առաջին բլոկը կազմում են զինծառայողների դաստիարակության կազմակերպման հետ կապված այն միջոցառումները, որոնցում հաշվի են առնված երիտասարդության շրջանում առկա արժեքային կողմնորոշումները, և որոնք միաված են հայրենասիրության, արիության, զինծառայության նկատմամբ հարգանքի սերմանմանը:

Երկրորդ բլոկը ներառում է հետևյալ միջոցառումները.

1. բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստում հետևյալ տեղեկութավերլուծական աշխատանքները կատարելու համար՝

ա) տեղեկութային պատերազմի ոլորտում հավանական հակառակորդի հնարավորությունների վերաբերյալ տվյալների հավաքում և վերլուծում,

բ) հակառակորդի կողմից իրականացվող հոգեբանական օպերացիաների էություն, նպատակների, խնդիրների պարզաբանում զինծառայողներին, բնակչությանը՝ հակառակորդի կողմից հաղորդված տեղեկույթի նկատմամբ քննադատական ընկալման կողմնորոշում ձևավորելու նպատակով,

2. զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վերահսկողության ուժեղացում՝

¹² Տես *А. Авраменко, А. Старунский. Психологические операции Народно-освободительной армии Китая. «ЗВО», 2005, № 4:*

¹³ Տես *Վ. Հ. Մարգարյան, Չինծառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: «ՀԲ», 2002, հմ. 3:*

ա) զորամասերի և ստորաբաժանումների տեղաբաշխման շրջաններում տիրող բարոյահոգեբանական իրադրության վերլուծություն,

բ) հակառակորդի քարոզչության և հոգեբանական ներգործության նկատմամբ յուրային զորքի ընկալունակության աստիճանի գնահատում,

3. հասարակության, մամուլի, նախագորակչային տարիքի երիտասարդության շրջանում կատարվող աշխատանքների համադասում:

Խիստ կարևոր ենք համարում շեշտել այն հանգամանքը, որ զորքերի կենսագործունեության կարևոր խնդիրներից մեկն է զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի պատշաճ մակարդակի ապահովումը: Գործնականում բոլոր ժամանակակից բանակներում կարևորում են ՁՈՒ-ի անձնակազմի բարձր բարոյահոգեբանական պատրաստության և ազգային շահերը պաշտպանելու նրանց պատրաստակամության դերը¹⁴: Առանց բոլոր կատեգորիաների զինծառայողների համապատասխան տրամադրվածության, առանց ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու նրանց հոգեբանական պատրաստության հնարավոր չէ հասնել հաջողությունների: Մարդու հոգևոր-բարոյական արժեքների, անձնային դիրքորոշման, սոցիալական ինքնազգացողության գերակայության հաստատումը ցանկացած սոցիալական, այդ թվում նաև զինվորական, գործունեության հաջողության որոշիչ պայմանն է¹⁵: Որպես հայրենիքի, ազգի նկատմամբ վերաբերմունքի դրսևորման օրինակ կարելի է ներկայացնել 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ երկու ազգերի ներկայացուցիչների վարքը:

Ճապոնական ամբողջ ժողովուրդը գիտակցում էր Ռուսաստանի հետ պատերազմի անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր ճապոնացու հոգեհարազատ էր այն գաղափարը, որ երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական հետագա զարգացման համար հարկավոր են նոր հողեր, և դրանք կարելի է ձեռք բերել միայն նվաճումների միջոցով: Նման մտածելակերպի, գաղափարական մղումների, հետևաբար և վարքի հիմքերը ճապոնացիների մեջ կերտվել էին վաղուց, ինչի վկայությունն է, մասնավորապես, հետևյալ փաստը. երբ 1895 թ. եվրոպական տերությունների միջամտությունը Ճապոնիային ստիպեց հրաժարվելու Չինաստանի նկատմամբ իր տարած հաղթանակի գլխավոր նվաճումից՝ Պորտ-Արթուրից, քառասուններեք ճապոնացի սպա, հայտարարելով, որ ի վիճակի չեն համակերպվելու իրենց հայրենիքի ստորացման փաստի հետ, ինքնասպան եղան: Բուն պատերազմի ժամանակ ժողովրդի ջերմ համակրանքը մշտապես ուղեկցում էր ճապոնական բանակին: Նրա ամեն մի հաջողություն առաջ էր բերում հրճվանքի պոռթկում, իսկ ամեն մի անհաջողություն սուր ցավ էր առաջացնում ամբողջ երկրում: Պատերազմի նկատմամբ այս վերաբերմունքն էլ հենց ճապոնական հաղթանակների բանալին էր: Դրանից էր բխում ճապոնացի մարտիկի ձգտումը հաղթանակի, դրանով էր լիովին պայմանավորված այն

¹⁴ Տես *М. Ю. Зеленков*. Морально-психологическая подготовка войск в зарубежных армиях. «Военная мысль», 2001, № 1:

¹⁵ Տես *В. М. Азаров, С. М. Бурга*. Оценка морально-психологического состояния военнослужащих. «Военная мысль», 2001, № 3:

ուժը, որը յուրաքանչյուր մարտիկի մղում էր «Ծագող արևի» երկրի դրոշը կանգնեցնելու ռուսական դիրքերում:

Միանգամայն հակադիր պատկերն էր Ռուսաստանում: Պատերազմի գաղափարը օտար էր մարտիկներին: Ժողովրդական լայն զանգվածները հետաքրքրվում էին այդ անհասկանալի պատերազմով միայն այնքանով, որքանով նա ազդում էր ընտանեկան ու տնտեսական շահերի վրա, իսկ կրթված հասարակության մեծ մասը միանգամայն անտարբեր էր պատերազմի նկատմամբ և հանգիստ զբաղվում էր իր առօրյա գործերով: Այս ամենը հանգեցրեց Ռուսաստանի պարտությանը¹⁶:

Այստեղից հստակ երևում է, թե որքան կարևոր է երկարատև և պլանաչափ աշխատանքը՝ ուղղված աճող սերունդների բարոյական ոգու ամրապնդմանը, ազգային շահերին համահունչ մտածելակերպի և գաղափարական մղումների, պատասխանատվության զգացումի, տեղեկության նկատմամբ քննադատողականություն դրսևորելու ունակության և մի շարք այլ հատկությունների ձևավորմանը, որոնք էլ ինչպես բնակչության, այնպես էլ զինծառայողների բարոյահոգեբանական կայունության հիմքն են:

Հետևաբար, հակառակորդի կողմից իրականացվող տեղեկութահոգեբանական ներգործությանը հակազդման արդյունավետությունը մեծացնելու համար չպետք է սահմանափակվել միայն նրա տեղեկութահոգեբանական ներգործությանը օպերատիվ հակազդմամբ, անհրաժեշտ է հեռանկարի տեսանկյունից պլանավորել ու իրագործել աճող սերունդների դաստիարակության խնդիրները: Դաստիարակության գործընթացը անձի զարգացման տարբեր փուլերում պետք է կազմակերպվի այնպես, որ երիտասարդության շրջանում «Հայրենասիրություն», «Արիություն», «Ինքնագոհություն» և մի շարք այլ հասկացությունների մասին պատկերացումները ամրագրված լինեն ենթագիտակցականի մակարդակում և գործեն անձի զգացումների ու հույզերի հարթության մեջ: Դա նշանակում է, որ այդ ուղղությամբ անհրաժեշտ է հետևողական աշխատանք վարել և ոչ թե մեկ, այլ մի քանի սերնդի հետ, այսինքն՝ այդ աշխատանքը պետք է շարունակական բնույթ կրի: Դա այն կարևոր համագագային խնդիրներից է, որի անտեսումը կարող է բացասական հետևանքներ ունենալ ապագայում: Այս հանգամանքը էլ ավելի կարևոր է դարձնում զինծառայողների և առհասարակ բնակչության ճիշտ դաստիարակության, նրանց բարոյահոգեբանական կայունության ապահովման ուղղությամբ համապետական քաղաքականության մշակումը, աշխատանքների կշռադատված, խելամիտ պլանավորումն ու կազմակերպումը: Ինչ վերաբերում է հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը օպերատիվ հակազդման արդյունավետությանը, ապա այն, ինչպես ցույց են տալիս տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունները, կարող է ապահովվել հոգեբանական օպերացիաների հատուկ ստորաբաժանման ստեղծմամբ և, ելնելով հարավկովկասյան տարածաշրջանում տիրող բարդ ռազմաքաղաքական իրավիճակից, ՀՀ ՁՈՒ-ի հոգեբանական օպերացիաների վարման ռազմավարության մշակմամբ:

¹⁶ Տես Ն. Ն. *Գոլովին*, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1-2:

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

К ВОПРОСУ О ЗАЩИТЕ ОТ НЕГАТИВНОГО
ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКОГО
ВОЗДЕЙСТВИЯ ВЕРОЯТНОГО ПРОТИВНИКА

В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент

РЕЗЮМЕ

Рассмотрены примеры психологических операций. Показана эффективность применения теле- и радиопрограмм, газет и глобальной системы «Интернет» в информационных кампаниях НАТО по формированию соответствующего мирового общественного мнения и воздействию на население и личный состав армии конфликтующей стороны.

На примере чеченского военного конфликта 1994—1996 гг. проанализированы задачи, стоявшие перед командирами, штабами и органами воспитательных структур МО РФ по нейтрализации информационно-психологического воздействия и сохранению морально-психологической устойчивости войск на уровне, обеспечивающем их боеспособность. Выявлены основные недостатки и просчеты в работе по информационно-пропагандистскому обеспечению войск в локальных войнах.

Рассмотрены также основные стратегии психологических операций в рамках современных концепций ведения войны Народно-освободительной армии Китая. Показаны необходимость и важность обеспечения высокого уровня морально-психологической устойчивости войск. В связи с этим предложен комплекс мероприятий по защите военнослужащих от негативного информационно-психологического воздействия.

Обоснованы необходимость нацеленной на перспективу планомерной работы по военно-патриотическому воспитанию подрастающих поколений армянской молодежи, а также неотложность создания в системе МО РА специального подразделения психологических операций и разработки продуктивной стратегии их ведения с учетом все нарастающей интенсивности информационно-психологического воздействия Азербайджана.

MILITARY INFORMATICS

TO THE ISSUE OF THE PROTECTION FROM
THE NEGATIVE INFORMATIONAL AND PSYCHOLOGICAL
INFLUENCE BY A POTENTIAL ADVERSARY

V. H. MARGARYAN, Colonel, Candidate of Psychological Sciences, Docent

SUMMARY

Examples of psychological operations are examined. The efficiency of using TV and radio studios, papers and the «Internet» global system in NATO's information campaigns while shaping a world public opinion and influencing the population and army personnel of a conflicting party is shown.

The tasks on the neutralization of the information-psychological influence and the preservice of moral-psychological stability of troops at the level that guarantees their fighting capacity, which the commanders, headquarters and the organs of training structures of the MoD, RF faced, have been analyzed by the examples of the Chechen military conflict of 1994—1996. The main mistakes and shortcomings in providing the troops in local wars with information and propaganda are revealed.

The basic strategies of psychological operations in the framework of contemporary conceptions of war waging by the People's Liberation Army of China were also examined. The necessity and significance of ensuring a high level of moral-psychological stability of troops is indicated. In connection with that a complex of measures on the protection of servicemen from the negative informational and psychological influence is proposed.

The necessity of the perspective-oriented systematic work on the military-patriotic training of the rising generations of the Armenian youth, the urgency of the creation of a special sub-unit for psychological operations and the development of a productive strategy for conducting them in the system of the MoD, RA, taking into account the growing intensiveness of Azerbaijan's informational and psychological influence are grounded.

**ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ
ՈԱԶՄԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

*Ա. Է. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ա. Մ. ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ,
բժշկական գիտությունների դոկտոր*

Զինվորական ծառայությունը գործունեության առանձնահատուկ ոլորտ է, որը բնութագրվում է առօրյա աշխատանքի խիստ կանոնակարգվածությամբ, ամենօրյա ֆիզիկական, հոգեբանական, տեղեկության մեծ ծանրաբեռնվածությամբ, զգալի հոգեհուզական լարվածությամբ: Այս տեսանկյունից գերակա խնդիրներ են գորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի ու նրանց մասնագիտական աշխատունակության բուժվերահսկման միջոցառումների կատարելագործումը, նյարդահոգեկան խանգարումների և հոգեմարմնական հիվանդությունների կանխարգելման նպատակով հոգեբանական շտկման ու վերականգնման մեթոդների մշակումը:

Մասնագիտական գրականության մեջ չկան բավարար տվյալներ գորակոչիկների և զինծառայողների հոգեկան ախտաբանության, դրա տարածվածության, հոգեկան խանգարումների կառուցվածքի վերաբերյալ: Մինչդեռ գորակոչվող անձանց հոգեկան խանգարումների հայտնաբերումը հատկապես կարևոր է բանակում իրավախախտումների կանխարգելման առումով: Եվ քանի որ նախագորակոչային ու գորակոչային տարիքի պատանիները մի շարք պատճառներով խուսափում են հոգեբուժական հիմնարկներ դիմելուց, ապա հենց ռազմաբժշկական փորձաքննական հանձնաժողովները պետք է լուծեն տվյալ տարիքային խմբում հոգեկան ախտաբանությամբ տառապող անձանց հայտնաբերման հույժ կարևոր խնդիրը:

Բանակում գորակոչիկը հայտնվում է առանձնահատուկ սոցիալ-հոգեբանական պայմաններում, որոնց ոչ բոլորին է հաջողվում արագ հարմարվել իրենց հոգեկան առողջության վիճակի բերումով: Ըստ մի շարք հետազոտությունների՝ հոգեկան հիվանդությունները հիմք են ծառայում շուրջ 40 % նորակոչիկների ու զինվորների զինծառայությանը ոչ պիտանի ճանաչելու և գորացրելու համար¹: Ըստ Ռ-Դ պետական վիճակագրական տվյալների՝ աճում է հոգեկան խանգարումներով այն մարդկանց թիվը, որոնք հայտնաբերվում են գորակոչման ժամանակ²: Հայաստանում նման հետազոտություններ չեն կատարվել: Զինծառայողների շրջանում բոլոր հիվանդությունների վիճակագրական ուսումնասիրությանը նվիրված միակ աշխատության մեջ

¹ Տես *С. Ю. Палатов*. Психические расстройства у призывников и солдат (клинико-эпидемиологическое исследование). «Журнал неврологии и психологии», 1999, № 8:

² Տես «Государственный доклад «О состоянии здоровья населения Российской Федерации в 1993 году»». «Здравоохранение РФ», 1995, № 1, сс. 7—15:

նշվում է, որ հոգեկան խանգարումների շարքում մեծ տեղ են զբաղեցնում օլիգոֆրենիան և էպիլեպսիան:

Այսպիսով՝ գորակոչիկների հոգեկան առողջության հետազոտության պատասխանատվությունը հիմնականում ընկնում է ռազմաբժշկական հանձնաժողովների վրա: Մակայն միայն կարճ ժամանակամիջոցում կատարված կլինիկական հետազոտությունները միշտ չէ, որ կարող են լիարժեք պատկերացում տալ նրանց հոգեկան առողջության վերաբերյալ: Այդ իսկ պատճառով հոգեբուժական հանձնաժողովների փորձագիտական աշխատանքի կատարելագործման համար էական նշանակություն ունեն ոչ միայն հոգեկան խանգարումների կլինիկական ախտորոշումը, այլև հետազոտվողների անձնային առանձնահատկությունների որոշումը, ինչը հնարավորություն է տալիս կանխատեսելու նրանց վարքն ու միջանձնային հարաբերությունները ծառայության ժամանակ: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր անձնավորության հոգեկանի մասին լիարժեք տվյալներ ստանալու համար կլինիկական-հոգեախտաբանական հետազոտությունները անհրաժեշտ է համալրել հոգեախտորոշումային մեթոդիկաներով:

Անձնային առանձնահատկությունների պարզումն ու հաշվառումը անհրաժեշտ են այս կամ այն գորատեսակում ծառայությանը պիտանիության աստիճանը որոշելու, ծառայության պայմաններում որոշակի սահմանափակումներ մտցնելու, ծառայության հատկապես առաջին վեց ամիսների ընթացքում զինծառայողների ապահարմարման գործընթացը կանխելու համար: Անձնային առանձնահատկությունների իմացությունը կարևոր է նաև զինվորական ստորաբաժանումներում միջանձնային հարաբերությունները ճիշտ ձևավորելու, հակաիրավական գործողությունները և իրավախախտումները կանխելու համար:

Մեր կարծիքով՝ հոգեբուժական փորձաքննության ժամանակ պետք է հաշվի առնվեն փորձաքննվողի կողմնորոշումները և ուղղվածությունը, նրա ներգոյակակությունը (ինտրովերտություն) և արտագոյակակությունը (էքստրովերտություն): Այս տեսանկյունից նպատակահարմար է կազմակերպել գորակոչիկների ու զինծառայողների ոչ միայն բժշկական, այլև հոգեբանական փորձաքննություն: Այս առումով կանխատեսումային փորձաքննությունը մեկ քայլ առաջ կգնա և կարող է որոշիչ լինել փորձաքննվողի հետագա զինծառայության ժամանակ առանձնահատուկ դրսևորումների կանխատեսման գործում: Անձնավորության հոգեկերտվածքի ճիշտ ըմբռնման, հետևաբար և ճիշտ անձնային մոտեցման շնորհիվ կարելի է խուսափել զինծառայության ընթացքում մի շարք հնարավոր խախտումներից:

Մեր հետազոտության նպատակն էր ուսումնասիրել ՀՀ զինկոմիսարիատների կողմից հոգեբուժական փորձաքննության ուղարկված գորակոչիկների հոգեկան խանգարումների հիվանդաբանական կառուցվածքը, ինչպես նաև որոշել նրանց անձնային առանձնահատկությունները: Նշենք, որ անձնային առանձնահատկությունների հաշվառումը կնպաստի ինչպես ախտորոշման ճշգրտմանը, այնպես էլ պատանիների՝ բանակում զինծառայության պայմաններին հարմարման հետ կապված պրոբլեմների լուծմանը:

շումային նշանակությունը իր հետազոտությունների շնորհիվ՝ դրանով իսկ գրավելով հոգեբանների և բժիշկների ուշադրությունը: Պետրենկոն, Կուչերենկոն, Շվարցը⁵ հայտնաբերեցին գունային զգայունակության կախումը նաև հուզական վիճակից, այն է՝ դրական հույզերի դեպքում կարմիր և դեղին գույների նկատմամբ զգայունակությունը մեծանում է, իսկ կապույտ և կանաչ գույների նկատմամբ՝ նվազում, բացասական հույզերի դեպքում՝ հակառակը: Այս և մի շարք այլ հետազոտություններով հայտնաբերվեց գույնի և հույզի միջև, գունային նախընտրությունների և մարդու բնավորության միջև փոխադարձ կապը⁶:

Մի շարք հեղինակների տվյալներով՝ տարբեր հոգեկան հիվանդությունների դեպքում գույնի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի հետազոտմամբ հաստատվել է գույնի և մարդու հոգեվիճակի միջև փոխադարձ սերտ կապի առկայությունը: Այն հետազոտվել է շիզոֆրենիայի, երկբևեռ պսիխոզի, ալկոհոլիզմի, էպիլեպսիայի, ընկճվածության, ներոզների, ԿՆՀ-ի օրգանական ախտահարումների, մարմնական հիվանդությունների դեպքում⁷:

ԼԳԹ-ի և կլինիկահոգեախտաբանական մեթոդների կիրառմամբ մեր կատարած հոգեբանական թեստավորման տվյալները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

ԱՆՏՈՐՈՇՈՒՄԱՅԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ Գ-1, Գ-2, Գ-3 ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԱՆԴԱՐՏ ՇԵՂՈՒՄԸ (Տ)

Գործոններ	Օրգանական հոգեկան խանգարում (n=12)	Անձնավորության խանգարում (n=28)	Մտավոր թերզարգացածություն (n=10)	Ներոտիկ խանգարում (n=15)	Առողջ՝ բնավորության շեշտվածությամբ (n=37)	Առողջ (n=45)
Գ-1, %	36,46	35,04	41,25	32,08	25,51	31,94
Տ	28,31	22,33	25,38	23,13	19,95	19,27
Գ-2, %	60,67	62,17	50,00	52,71	64,95	61,32
Տ	17,09	19,60	15,80	20,49	20,39	17,31
Գ-3, %	35,07	37,82	25,00	29,72	38,50	31,30
Տ	23,40	19,20	20,97	26,11	25,14	19,49
n=147						

Եվ այսպես. Լյուշերի թեստի կիրառմամբ ուսումնասիրվեց հուզական ծանրաբեռնվածության դեպքում հակվածությունը վարքի խանգարմանը, որը դրսևորվում է գույների ընտրության անկայունությամբ, այսինքն՝ Գ-1 գործոնով: Անհրաժեշտ է նշել, որ վարքի խանգարմանն առավել մեծ հակվածություն է դիտվում մտավոր թերզարգացածության դեպքում:

В. М. Нестеренко. Экспресс-методика для оценки эффективности аутотренинга и прогноза успешности деятельности человека. «Личность и деятельность», 1982, вып. 11:

⁵ *Տես В. Ф. Петренко, В. В. Кучеренко. Взаимосвязь эмоций и цвета. «Вестник МГУ», 1988, № 1:*

⁶ Տես նույն տեղում:

⁷ *Տես H. Walneiffer. Stress and autogenes Training. «Therapiewoche», 1985:*

գացածությամբ անձանց շրջանում: Առողջ, ընդ որում, բնավորության շեշտվածությամբ անձանց շրջանում այն ավելի ցածր է, քան մյուս խմբերում: Ըստ այս ցուցանիշի՝ ոչ պսիխոտիկ բնույթի հոգեկան խանգարումներով անձանց շրջանում հուզական ծանրաբեռնվածությունների դեպքում նկատվում է առողջների համեմատությամբ հավաստի մեծ հակվածություն վարքի խանգարմանը:

Ինքնաձին նորմից շեղման գործոնը (Գ-2) վկայում է, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում (գորակոչ, հոգեբուժական հիմնարկում գտնվելը և այլն) ոչ արգասաբեր նյարդահոգեկան լարվածության դեպքում առաջանում է անբարեհարմարության զգացում: Հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոնկրետ իրավիճակում ոչ արդյունավետ նյարդահոգեկան լարվածությունը (անբարեհարմարության զգացումը) առավել մեծ է առողջ հոգեկանով, մասնավորապես՝ բնավորության շեշտվածությամբ, անձանց շրջանում, իսկ հոգեկան խանգարումներով անձանց շրջանում այն նվազում է, և ամենացածր արժեքին հասնում է մտավոր թերզարգացածների շրջանում:

Եվ, վերջապես, տագնապայնության գործոնի (Գ-3) ցուցանիշը առավել բարձր է բնավորության շեշտվածությամբ անձանց շրջանում (38,5 %): Ինչպես երևում է աղյուսակից, այն առավել ցածր է մտավոր թերզարգացածների շրջանում:

Կատարված հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Ինքնաձին նորմից շեղումը հանգեցնում է տագնապայնության աստիճանի բարձրացմանը, ինչն էլ հանգեցնում է աշխատունակության նվազմանը,
2. Ինքնաձին նորմից առավել արտահայտված շեղում նկատվում է բնավորության շեշտվածությամբ և անձնավորության խանգարումներով խմբերում,
3. վարքի խանգարմամբ արտահայտված հակազդումը հուզական ծանրաբեռնվածությանը հատկապես ցայտուն կերպով է դրսևորվում մտավոր թերզարգացածների խմբում:

Այսպիսով՝ կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ ԼԳԹ-ի կիրառումը հնարավորություն է տալիս կանխատեսելու գորակոչիկի վարքի փոփոխությունը տարբեր իրավիճակներում: Թեստի դերը հատկապես մեծ է զինվորական ծառայության առաջին վեց ամիսների ընթացքում, մասնավորապես՝ անձնային առանձնահատկություններ (բնավորության շեշտվածություն և այլն) ունեցող նորակոչիկների համար, քանի որ այդ առանձնահատկությունները ավելի բարենպաստ պայմաններում համակշռված ու քողարկված են լինում:

Նշված գործոնների ուսումնասիրության հիման վրա կարելի է կազմել գորակոչիկի կամ զինծառայողի անհատական-անձնային բնութագիրը, ինչը կլինիկական հետազոտման հետ մեկտեղ հնարավորություն կտա ավելի հիմնավոր կերպով հստակեցնելու նրանց անհատական առանձնահատկությունները:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

**КОМПЛЕКСНОЕ ОБСЛЕДОВАНИЕ ПРИЗЫВНИКОВ
ПРИ ВОЕННО-ПСИХИАТРИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ**

*А. Э. МЕЛИК-ПАШАЯН, кандидат медицинских наук, доцент,
А. М. ПАРСАДАНЯН, подполковник м/с, доктор медицинских наук*

РЕЗЮМЕ

Важной предпосылкой для обеспечения боеспособности войск является комплектование подразделений ВС РА здоровым контингентом. В связи с этим приоритетными задачами являются совершенствование медицинского контроля за состоянием здоровья призывников и военнослужащих и их профессиональной работоспособности, разработка способов психологической коррекции и реабилитации лиц для предупреждения возникновения нервно-психических расстройств и психосоматических заболеваний.

Клиническим обследованием за короткий промежуток времени не всегда можно выявить полные данные о психическом здоровье обследуемых. С этой точки зрения обоснована необходимость выявления личностных особенностей призывников путем применения психодиагностических методик в работе психиатрических комиссий.

Клинико-психопатологическим методом с использованием цветового теста Люшера (ЦТЛ) обследовано 147 призывников в возрасте 17—22 лет. При психологическом тестировании исследовались следующие факторы: нестабильность выбора, отклонение от аутогенной нормы и тревожность.

Результаты исследования показывают, что применение ЦТЛ позволяет выявить скомпенсированные в более благоприятных условиях личностные особенности, что в свою очередь дает возможность с большой достоверностью прогнозировать возможные изменения поведения призывников в различных ситуациях и своевременно предотвращать правонарушения в армии.

MILITARY MEDICINE

**THE COMPLEX EXAMINATION OF DRAFTEES
AT THE MILITARY-PSYCHIATRIC EXPERTISE**

*A. E. MELIK-PASHAYAN, Candidate of Medical Sciences, Docent,
A. M. PARSADANYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences*

SUMMARY

An important premise for ensuring the combat readiness of troops is the recruitment of sub-units of the RA Armed Forces with a healthy contingent. In connection with that the priority issues are the improvement of medical control over the health state of draftees and servicemen, and their working capacity; the elaboration of methods of psychological correction and rehabilitation of persons so as to prevent the rise of neuro-psychic disorders and psychosomatic diseases.

The clinical examination in a short period of time can not always reveal full statistics on the psychic health of the examined. From that point of view the necessity of revealing personal peculiarities of draftees through psychodiagnostic methods in the activities of psychiatric commissions is justified.

147 men at the age of 17—22 called up for military service were examined through the clinicopsychopathologic method of Luscher's color test (LCT). The following factors were analyzed at the psychological testing: instability of the choice, deviation from the autogenic norm and anxiety.

The results of the study show that the use of the LCT allows to reveal compensated in more favourable conditions personal peculiarities, and this, in its turn, gives a possibility with great certainty to prognose possible changes in the conduct of draftees in various situations and prevent infringements of law in the army in time.

ԽԱՂԽԱՂԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (450 Թ.)

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաղխաղի ճակատամարտը կարևոր և առանձնահատուկ դեր ունի Վարդանանց պատերազմում (450-451թթ.): Եթե այն ավարտվեր Վարդան Մամիկոնյանի զորաբանակի պարտությամբ, ապա էսպես կթուլանային պարսից տիրապետության դեմ ապստամբության կողմնակիցների դիրքերը, և հայ քաղաքական ուժերը՝ ի դեմս մարզպան Սյունու և այլոց, Բյուզանդական կայսրությունից օգնություն ստանալու հույսը վերջնականապես կորցնելով և լուր չստանալով հոներից, ստիպված կլինեին մտածել պարսից արքունիքի հետ համաձայնության եզրեր գտնելու մասին, ինչպես որ ավելի ուշ տեղի ունեցավ, երբ Թեոդոս Փոքր կայսեր մահից հետո գահ բարձրացած Մարկիանոսը ոչ միայն բացահայտ կերպով մերժեց օգնել հայերին, այլև պարսից արքունիքին տեղյակ պահեց հայերի ծրագրերի մասին: Սակայն Բյուզանդական կայսրության մերժումը դեռ չէր ստացվել, իսկ Խաղխաղի ճակատամարտն ավարտվեց հայերի փայլուն հաղթանակով՝ զարմացնելով և միաժամանակ ծանր կացության մեջ դնելով պարսից արքունիքին: Մեր սկզբնաղբյուրները ընդամենը երկուսն են, և երկուսն էլ՝ թե՛ Եղիշեի, թե՛ Ղազար Փարպեցու երկերը, իրենց վրա կրում են միակողմանիության կնիքը, ուստի դեպքերի իրական ընթացքը պատկերացնելու համար անհրաժեշտ է մեզ հասած նյութը ենթարկել համադրական քննության: Անշուշտ, մեր ոչ բոլոր եզրակացություններն են, որ կարող են ընդունվել որպես անվերապահ ճշմարտություններ, սակայն մենք առավել քան համոզված ենք, որ դրանք ամենահավանականն են, թեկուզ և հիմնված են միանգամայն միակողմանի սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա:

Պարսից արքունիքն ամենայն ուշադրությամբ հետևում էր դեպքերի զարգացմանը Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանություններում: Կամենալով ապստամբական շարժումը խեղդել իր բնում՝ պարսից հրամանատարությունը, օգնական ուժեր ուղարկելով, կարգադրեց ճորա մարզպանին խաղաղեցնել Աղվանից մարզպանությունը¹, ինչն ստիպեց աղվաններին դիմելու հայերի օգնությանը²: Ստեղծված ռազմական իրադրությունն ստիպեց հայոց հրամանատարությանը իր ուժերը բաժանել երեք զորաբանակի, ինչի մասին Եղիշեն գրում է. «Եւ զամենայն զօրսն յերիս զունդս բաժանէին:

Զգունդն առաջին տային ցՆերշապուի Ռմբոսեան, և զունարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Արրպարական աշխարհին:

¹ Տես «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Սիմասեան: Ե., 1957, էջ 74:

² Տես «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան: Տիֆլիս, 1904, էջ 63:

Եւ զգունդն երկրորդ տային ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից:

Իսկ զգունդն երրորդ տային ի ձեռս Վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ ի բաց կացեալ էր յուխարէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոցն իւրոց:

Ընտրեաց և էառ ընդ իւր՝ զորոց գիտէր զթուլութիւն հաւատոց նոցա.

Չիշխանն Բագրատունեաց զօրօքն իւրովք:

Չիշխանն Խորխոռունեաց զօրօքն իւրովք:

Չիշխանն Ապահունեաց զօրօքն իւրովք:

Չիշխանն Վահուանեաց զօրօքն իւրովք:

Չիշխանն Պալունեաց զօրօքն իւրովք:

Չիշխանն Գաբեղենից զօրօքն իւրովք:

Չիշխանն Ուրծայ զօրօքն իւրովք:

Եւ զայլ բազում զօրս յարքունի տանէն արկ յինքն, և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ: Եւ խորամանակ խաբէութեամբ դարանամուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին, ի պատճառս կեղծաւորութեան՝ եթէ ընդ ճապուկ անդր անցանէ ի վերայ գնդին Պարսից՝ հալածականս առնել յաշխարհէն Աղուանից (ընդգծումը մերն է.–Բ. Հ.)³:

Եղիշէի սույն հաղորդումը նշանավոր է նրանով, որ, թեև հայոց բանակը երեք զորագնդի է բաժանվել բոլորի կամքով, սակայն հետագա շարադրանքից պարզվում է, որ, այնուամենայնիվ, բաժանման գործի հեղինակը Վասակ Սյունին էր:

Մի քանի տասնյակ տարիներ հետո իր աշխատությունը գրած Ղազար Փարպեցին փոքր-ինչ այլ կերպ է մատուցում դեպքերը. «... (ապստամբները) քանզի լուան, թէ Միհրներսեհ Արեաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝ գունդ կազմէ և ընդ Աղուանս արձակէ ի Հայս, զոր և Աղուանից ազատքն, որ ուխտակիցք էին Հայոց՝ ստեպ փութացուցանէին հասանել առ ինքեանս և անդէն յԱղուանս ի դիմի հարկանել նոցա պատերազմաւ»⁴: Միակ եզրակացությունն այն է, որ պարսից արքունիքը հավելյալ ուժեր է տրամադրում Սեբուխտին աղվանից ուժերի դեմ պայքարելու համար:

Ղազար Փարպեցու հետագա շարադրանքից պարզվում է, որ «...զայս համբաւ լուեալ ի կողմանցն Աղուանից՝ ստիպէր զերանելի սպարապետն Հայոց Վարդան զտէրն Մամիկոնից իշխանն Սիւնեաց Վասակ՝ գնալ պատահել նոցա գնդաւ. և զինքն մնացուցանէր անդէն պատճառանօք, ասելով, թէ «Ես աստէն պատրաստիմ. գուցէ, ասէր, այլ ինչ իմացեալ չարախորհուրդն Միհրներսեհ՝ զործիցէ ընդ մեզ»⁵: Այնուհետև Ղազար Փարպեցին Եղիշէի նմանությամբ կամ նրան հետևելով հայտնում է, որ «Այլ ինքն Վասակ զխաբէութեան ճանապարհն կազմեալ նիւթեր ի սրտի իւրում, ունելով կամակիցս և այլ աստուածանենգ արս խորհրդոցն իւրոց՝ յազատացն Հայոց»⁶, իսկ Վարդան Մամիկոնյանը պահանջում է Վասակ Սյունուց, որ մինչև

³ Եղիշէ, նշ. աշխ., էջ 74:

⁴ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 63:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

Աղվանից մարզպանություն իր գնալը դեսպաններ ուղարկվեն կայսրին⁷: Ստացվում է, որ գորքի բաժանումը կատարել էր Վասակ Սյունին, քանի որ Վարդան Մամիկոնյանին հրամայել էր գնալ օգնության աղվաններին, իսկ, թե այդ ժամանակ Վասակ Սյունին արդեն դավաճանել էր ապստամբական գործին, թե ո՛չ, կանդրադառնանք ստորև:

Այս բոլոր հաղորդումները կրում են հետագա ժամանակների կնիքը, քանի որ, հենց Ղազար Փարպեցու մեկ այլ տեղեկության համաձայն, ապստամբները պարսից արքունիքում մեղադրում էին Վասակ Սյունուն, թե նա վերադարձրեց Հունաց աշխարհ, այսինքն՝ Բյուզանդական կայսրություն, փախչող Վարդան Մամիկոնյանին և նրա հարազատներին՝ նրան նամակ գրելով. «Ձի՞ ես փախուցեալ, և կամ զի՞նչ է երկիւղդ քո, յորմէ դուդ երկնչիս, և ինչ ոչ յայտնեցեր. արդ մի՛ փախչիր և մի՛ երկնչիր յումեքէ. զի թէ յԱրեաց տեսնեն և ի նորին ուժոյ զարհուրեալ ես՝ մի՛ երկնչիր. դարձիր, և նամակ առնեմք առ կայսր, և զանձինս մեր ի նմա ի ծառայութիւն տամք. և նա հաւատայ, թէ զայսպիսի մեծ աշխարհի նմա մեր կամաւ ի ծառայութիւն տամք՝ խնդութեամբ և կամաւ յանձն առնու, և զօր տայ մեզ. և նորա և մեր միաբանեալք՝ միշտ աշխատ ունիմք զտերն Արեաց և զԱրիս: Ապա թէ կայսր այլազգագոյնս ինչ խորհի և չճանաչէ զիր օգուտսն՝ և ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Ադուանից յիմում ձեռին էր՝ բազում զօրագլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ, և այսօր նովին երդմամբ երթնեկեն առ իս. և հարկքս ամենայն աշխարհիս Հայոց առ իս են, և գործակալք ամենայն յիմում ձեռին են, և այլ ևս բազում կարասի, զոր ի պարսիկ գործակալացն հանի՝ որ աստ ի Հայս էին, և յիմում զանձի կայ. յորմէ թէ զմի մասն Հոնաց տամ տանել՝ անտի այնչափ սաստիկ հանեմ Հոնս, որչափ զի հողն Պարսից չբախցէ նոցա յաւարի»⁸:

Ինչպես ցույց են տալիս հետագա դեպքերը, ապստամբական շարժման առաջնորդը սկզբնական փուլում անվերապահորեն Վասակ Սյունին էր, որն էլ գորքերը բաժանել էր երեք գորաբանակի և Վարդան Մամիկոնյանին էլ ուղարկել էր Աղվանից մարզպանություն՝ կռվելու Սեբուխտի գորքերի դեմ և օգնելու աղվան ապստամբներին: Եվ եթե գերի ընկած ապստամբ նախարարները Վասակ Սյունուն մեղադրում էին կայսրին և հոների նամակներ գրելու մեջ, ըստ որում՝ մեջտեղ բերելով նամակների պատճենները, ապա տարակույս չկա, որ նամակները գրել էր Վասակ Սյունին՝ առանց Վարդան Մամիկոնյանի հորդորների: Նման պայմաններում կասկածներ է հարուցում պատմիչների այն միտքը, որ Վարդան Մամիկոնյանին Աղվանից մարզպանություն ուղարկելով՝ Վասակ Սյունին իբր այդ մասին տեղյակ էր պահել ճորա մարզպան Սեբուխտին, թե՛ «զգունդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱդուանս՝ սակաւածեռն և ոչ բազմաթիւ: Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ ինչ զանգիտեր ամեննին տալ պատերազմ, զիտեմ՝ զի ի պարտութիւն մատնին առաջի քոյոյ մեծի զօրութեանդ»⁹: Կամ, ըստ Ղազար Փարպեցու, Վասակ Սյունին պարսիկներին

⁷ Տես նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 83:

⁹ Եղիշե, նշ. աշխ., էջ 75, նաև՝ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 64:

հայտնել էր, թե «Դուք, ասէ, անհոգ լերուք յեկելոցդ ընդ Վարդանայ ի վերայ ձեր, եւ մի՛ ինչ զարհուրիք. վասն զի շատք այն են՝ զորս ես աստէն պահեցի առ իս. և զայս բազումս ընդ այսր ընդ այնր ցրուեցի. և դա յոյժ սակաւութ է և ոչ բազմութ»¹⁰: Չնայած երկու մամիկոնյանամետ պատմիչների հաղորդումներն էլ փաստորեն նույն բովանդակությունն ունեն, այնուամենայնիվ, հետագա դեպքերը պարզորոշ ցույց են տալիս, որ հազիվ թե Վասակ Սյունին այդպիսի նամակ գրած լինէր:

Եթե իրոք Վարդան Մամիկոնյանի բանակը սակավամարդ էր, և Վասակ Սյունին էլ տեղյակ էր պահել հայկական զորաբանակի գալու, զինված ուժի թվաքանակի և երթուղու մասին, ապա առավել քան տարօրինակ է, որ այդ զորաբանակը հաղթեց Սեբուխտի ավելի մեծաքանակ պարսկական զորաբանակին: Նախ. չմոռանանք, որ առանց Վասակ Սյունու նամակի էլ պարսիկներն իրենց հետախույզների միջոցով կարող էին իմանալ Վարդան Մամիկոնյանի՝ դեպի Աղվանից մարզպանություն ձեռնարկվելիք արշավանքի մասին: Ուստի Սեբուխտը պարզապես ընդառաջ գնաց հայոց սպարապետի զորքերին: Եղիշեն այս առնչությամբ գրում է. «Իսկ նա (Սեբուխտը) իբրև լուաւ զայս ամենայն զբաջալերս ի Վասակայ, և ստուգեալ հաստատեաց ի միտս իւր, եթէ սակաւաձեռն զնդաւ զայ սպարապետն Հայոց ի վերայ նորա, ոչ եկաց մնաց ի կողմանս Ճորայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն, և պատահէր մնա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից: Անցանէր բաւանդակէր ամենայն զօրօք իւրովք. ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր. զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ զնդին Հայոց»¹¹: Եղիշեի հետագա տեղեկություններից հստակ երևում է, որ պարսիկներն արդեն դիրքեր էին գրավել Խաղխաղ քաղաքի հանդէպ, երբ ժամանեց հայոց զորաբանակը, ինչը հակառակ է Ղազար Փարպեցու հաղորդման, թե պարսիկներն իմացան Վարդան Մամիկոնյանի զորաբանակի գալստյան մասին վերջինիս Աղվանից մարզպանություն մուտք գործելուց հետո և անցնելով «ընդ գետն մեծ, զոր Կուր գետն կոչեն, և ընդ առաջ եկին նոցա մինչև ի գետն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից»¹²: Սակայն պատմիչի հետագա շարադրանքից պարզվում է, որ պարսիկները բանակ էին դրել Խաղխաղ գյուղի և ոչ թե քաղաքի մերձակայքում, երբ հայտնվեցին հայկական զորամասերը, և Վարդանը համոզվեց, որ պարսիկները թվով գերազանցում են հայերին:

Այժմ փորձենք պարզել, թե ի՞նչ կատարվեց, և թե ի՞նչ հանգամանքներ նպաստեցին մեծաթիվ պարսկական զորքին հաղթելուն: Սկսենք այն բանից, որ, մեր կարծիքով, ճիշտ են այն բոլոր ուսումնասիրողները, որոնք Խաղխաղը տեղադրում են ներկայիս Ղազախ քաղաքի տեղում կամ մերձակայքում: Հասկանալի է, որ ռազմավարական տեսակետից պարսիկներն սպասելու էին հայոց հարձակմանը Աղստևի ձորահովտով, որտեղով անցել է և այժմ էլ անցնում է Հայաստանի ներքին

¹⁰ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 64:

¹¹ Եղիշե, նշ. աշխ., էջ 75:

¹² Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 65:

շրջանները Կուրի տափարակին կապող հիմնական մայրուղին: Եթե իրոք Վասակ Սյունին տեղյակ պահած լիներ Սեբուխտին, թե Վարդան Մամիկոնյանն Աղվանք է շարժվում Վրաց մարզպանության վրայով, ապա պարսից գորաբանակը, ինչպես հաղորդում է Եղիշեն, դիրքեր չէր զբաղեցնի Խաղխաղ քաղաքի հանդեպ, իրողություն, որ շատ կարևոր է հետագա քննության համար: Խաղխաղ քաղաքի հանդեպ դիրքեր գրավելը նշանակում էր, որ պարսից գորաբանակն իր ուժերը դասավորել էր Աղստև գետի ստորին հոսանքի շրջանում՝ դիմացն ունենալով Խաղխաղ քաղաքը, այլ խոսքով՝ սպասելով, թե ե՞րբ և ինչպե՞ս են հայերը գալու և ընկնելու իրենց պատրաստած ծուղակը: Հետևաբար, եթե Վասակ Սյունին տեղյակ պահած լիներ վրաց մարզպանության վրայով Վարդան Մամիկոնյանի արշավանքի մասին, ապա պարսիկներն իրենց գորաբանակը կդասավորեին ո՛չ թե Խաղխաղ քաղաքի մոտ, այլ հայկական գորաբանակի սպասվելիք արշավանքի երթուղուն դեմ հանդիման: Ստացվում է, որ պարսկական մեծաթիվ գորաբանակը, ամենայն հավանականությամբ (ինչպես ընդունված էր այդ ժամանակներում) բաժանված լինելով աջ ու ձախ թևերի, կենտրոնի և պահեստագործի, հայտնվեց իր համար վերին աստիճանի անբարենպաստ կացության մեջ, քանի որ դիրքեր էր գրավել ոչ թե հայկական գորաբանակին դեմ հանդիման, այլ՝ դեպի Աղստևի ձորը, ինչի հետևանքով հայկական գորաբանակի դեմ կարող էր քիչ թե շատ մարտնչել միայն պարսկական գորաբանակի աջ թևը, և այն էլ միայն ռազմական դասավորությունը փոխելուց հետո:

Որ դեպքերն, իրոք, այդպես են զարգացել, ցույց կտրվի ստորև: Իսկ այժմ ուսումնասիրենք հայկական գորաբանակի դասավորությունը և հրամանատարական կազմը: Վարդան Մամիկոնյանը, իր ուժերով հայտնվելով պարսկական գորաբանակի աջ թևի դիմաց, խորապես գիտակցեց ռազմի աստծո՝ իրեն պարզևած հաղթանակի հնարավորությունը, ուստի, գորաբանակը բաժանելով երեք մասի, աջ թևի հրամանատար կարգեց Արշավիր Կամսարականին, որը իր փեսան էր՝ ամուսնացած էր իր դստեր հետ, նրան օգնական տալով ավագ սեպուհ Մուշ Դիմաքսյանին, ձախ թևի ղեկավարությունը հանձնեց Խորեն Խորխոռունուն՝ օգնական կարգելով Հմայակ Դիմաքսյանին, իսկ ինքն ստանձնեց կենտրոնի հրամանատարությունը՝ հեծելագործի նշանակալից ուժերով¹³: Անհնար է կարծել, որ Վարդան Մամիկոնյանը գորաբանակի մի մասը չի թողել որպես պահեստագործ, չնայած հենց սկզբից էլ պարզ էր, որ երկու գորաբանակների նման դասավորության պայմաններում հայոց փոքրաթիվ ուժերը մեծ առավելություն էին ստանում պարսից անհամեմատ մեծաթիվ ուժերի նկատմամբ: Սակայն Եղիշեի նկարագրությունից պարզ է դառնում, որ հայերը «...զաջ թևն քեկեալ՝ զձախոյ կողմամբն արկեալ, սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին. և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լուինասս գետոյ: ՈՒր ընդդէմ դարձեալ թագաւորազանց ոմանց Բաղասական արքայի, ընկեցին զոմն ի ծիոյ ի նախարարացն Հայոց, ի գնդէն Դիմաքսենից զՄուշ սպանին, և զԳագրիկ վիրաւորեցին:

Յայնմ տեղոջ գետակն ի վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի, գոչէր

¹³ Տես նույն տեղում:

առիժաբար և յարձակելի վարագաբար, հարկանելի և սատակելի գժուրկն քաց զեղբայր թագաւորին Լփնաց, և բագում համհարզս նորին ընդ նմին սատակելի: Եւ այնպէս ամենեքեան առհասարակ այր գախոյեան իւր յերկիր կործանել»¹⁴:

Նման նկարագրությունից պարզ է դառնում, որ հայերի հարձակման հետևանքով թշնամու աջ թևը ջախջախվեց, իսկ կենդանի մնացած զինվորները փախուստի դիմեցին ձախ թևի ուղղությամբ՝ հալածվելով հայկական զորամասերից: Թշնամու զինվորների մի մասը ստիպված եղավ ապաստան փնտրել Լոփնաս գետի մերձակա մայրիների անանցանելի անտառներում:

Բնականաբար հարց է ծագում, թե ո՞րն է պատմիչի հիշատակած Լոփնաս գետը, որն ուսումնասիրողները սովորաբար նույնացնում են Աղստևի հետ, ինչը հեռու է պատմական ճշմարտությունից: Հայկական զորամասերը, ջախջախելով պարսից զորաբանակի աջ թևը, սրընթաց շարժվեցին շփոթահար թշնամու կենտրոնի և ձախ թևի ուղղությամբ՝ հարվածելով նրանց և ստիպելով նահանջել դեպի Կուր գետը կամ Լոփնաս գետի անառիկ անտառոտ ավերքը: Հետևաբար՝ հենց ճակատամարտի սկզբից պարսից զորամասերի համար անհնարին դարձավ դեպի Աղստևի ձորը փախչելը: Առավել հավանական է, որ Լոփնաս գետ ասելով պետք է հասկանալ Աղստևից դեպի արևելք հոսող ներկայումս Հախում կոչվող ոչ մեծ վտակը: Եվ, ընդհանրապես, տարօրինակ կլիներ կարծել, որ Աղստև գետի անունը կարող էր մի ինչ-որ ժամանակ փոխարինվել Լոփնասով և այնուհետև վերականգնվել:

Անդրադառնալով այս դեպքերին՝ Ղազար Փարպեցին նշում է, որ Արշավիր Կամսարականն ու Մուշ Դիմաքսյանը, անձանոթ լինելով տեղանքին, հայտնվեցին թանձրախոր ճահճուտներում, որտեղ նրանց երիվարներն ընկան տիղմի մեջ: Այդ պատճառով թշնամիներին հաջողվեց սպանել Մուշ Դիմաքսյանին, իսկ Արշավիր Կամսարականը, իջնելով մտույզից և հետիոտն մարտնչելով, սպանեց Լփնաց թագավորի եղբայր Վուրկին: Հայոց խիզախ իշխանը կարողացավ ոչ միայն ճահճուտից դուրս բերել իր մտույզը, այլև, սարսափեցնելով թշնամիներին, փախչել հայկական զորամասերի դիրքերը: Հայկական զորքերին հաջողվեց փախուստի մատնել թշնամիներին՝ կեսին թրատելով, իսկ մյուս կեսին՝ թափելով Կուր գետը կամ թշելով Լոփնաս գետի անտառոտ անառիկ վայրերը¹⁵:

Եղիշեի հաջորդ հաղորդման համաձայն՝ «Եւ առ յոյժ յանդուզն յարձակմանն յոլովագոյն այն էր գոր գետամոյնս առնէին քան զանկեալսն սրոյ ի ցամաքի: Եւ ի բագմութենէ դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարին դառնային, և ոչ գտանէր որ ամենևին ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն: Բայց մի ոմն ի գորականէ թշնամեացն՝ զինու հանդերձ ելեալ ի նիս երիվարին անցանէր ընդ մեծ գետն, մագապուր պրծեալ ի պատերազմէն՝ գոյժ տանէր ի մնացեալ բուն բանակն, որք փախստական անկանէին ի մեծ շահաստանն:

Յայնմ ժամանակի գորքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին՝

¹⁴ Եղիշե, նշ. աշխ., էջ 76—77:

¹⁵ Տես Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 65—66:

դիակապուտ դառնային, ժողովելին զբազում աւար բանակին, և կողոպտելին զանկեալ դիակունսն. և կուտէին բազում արծաթ և ոսկի, զզէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց»¹⁶:

Եղիշեն, անշուշտ, կամենում է գովերգել Հայոց զորաբանակի և նրա սպարապետ Վարդան Մամիկոնյանի հաղթանակը, սակայն՝ չափազանցելով, ինչպես տեսնում ենք, հայտարարում է, թե միայն մի զորական է փրկվել՝ անցնելով գետը, պարտության լուրը իբր հասցնելով բուն բանակին: Այդ առումով ավելի ճշմարտապատում է Ղազար Փարպեցու հաղորդումը, թե «ոմանք յաւագորերոյ Պարսից ելեալք ի նաւ»՝ յայնկոյս գետոյն մեծի փախստեայք լինել ճեպէին: Որ և զԿամսարականն Արշաիր զիշխանն Արշարունեաց ստիպով փութացուցանէր երանելի զօրավարն Հայոց Վարդան՝ զկնի փախստէից նաւացն տեսածից լինել, ի հաստատածութիւն և յանվրէպ դիպողութիւն առնն վատահեալ: Իսկ Կամսարականն Արշաիր, որպէս և միշտ կամակատար էր բանի սրբոյ զօրավարին, վաղվադակի հաւանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն և փախստէիցն նետածից լինէր: Եւ իտցեալ զնաւավարսն և զայլ բազումս ի նաւսն՝ կարէւերս առնէր, որոց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն. և բազումք ի նաւավարացն և ի գլխաւորացն Պարսից գետատոյգ եղեալ կորնչէին: Եւ այսպէս շնորհեալ նոցա զյաղթութիւն վերին օգնութեանն՝ դառնային ի բանակս իւրեանց, գոհանալով և օրհնելով՝ զԱստուած»¹⁷:

Հիշյալ դեպքերին անդրադարձել է նաև Մովսես Կաղանկատվացին. «(հայերը) յերիս բաժանեալ զօրսն Հայոց, զառաջինն տան ցՆերշապուհ Ռմբոսեան պահապան Ատրպատական կողմանն, և զերկրորդ գունդն տան ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Չորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից:

...(Մերսեբուխտ՝ իմա՝ Միհրսեբուխտ, կամ Սեբուխտ.–Բ. Հ.) փութանակի գայ անցանէ ընդ գետն մեծ Կուր և պատահէ նմա ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից:...

...Խումբ արարեալ յարձակէին քաջքն Հայոց և զաջ թնն բեկեալ զճախոյ կողմամբն արկանէին և սրոյ ճարակ զամենեսեան առնէին ընդ երեսս դաշտին. փախստականս արկանէին յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւք Լուբնաս գետոյ, ուր ընդդէմ դարձեալ թագաւորագանց ոմանց Բաղասական արքայի. անդ ընկեցին ի ձիոյ գոմն ի նախարարացն Հայոց ի զնդէն Դիմաքսենից, զՄուշն սպանին, զԳագրիկն վիրաւորեցին: Յայնմ տեղոջ գղէտակն ի վեր ամբառնայր Արշաիրն Արշարունի, գոչէր առիւծաբար և յարձակէր վարազապէս. սատակէր զՎուրկն քաջ՝ զեղքայր թագաւորին Լփնաց և զայլս անհամարս, զորս յայսմ տեղոջ սատակէր: Եւ այնպէս ամենեքին այր զընկեր իւր ախոյեան կործանէր. առ յոյժ յանդուզն յարձակմանէն բազումք այն էին, զոր գետատոյգ առնէին, քան զանկեալսն սրով ի ցամաքի: Եւ ի բազմութենէ անկեղոցն յստակ ջուր գետոյն յարիւն դառնայր. և ոչ գտանէր ոք ի նոցանէ ամեննին ապրեալ և թաքուցեալ յանտառախիտ մայրիսն

¹⁶ Եղիշէ, նշ. աշխ., էջ 77:

¹⁷ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 66:

դաշտաց: Իսկ մի ոմն ի գորացն թշնամեաց զինու հանդերձ ելեալ ի նիս երիվարին՝ անցանէր ընդ մեծ գետն մագապործ գերծեալ գոյժ տանէր ի բուն բանակն, որք փախստեայ անկանէին ի մեծ շահաստանն»¹⁸: Ինչպես տեսնում ենք, Մովսես Կաղանկատվացու հաղորդումը շարունակելն այլևս ոչ մի իմաստ չունի, քանի որ այն ամբողջությամբ արտագրված է Եղիշեից՝ Ղազար Փարպեցու երկից որոշ աննշան տվյալների հավելմամբ:

Խաղխաղի ճակատամարտն ավարտվեց հայկական զորքի փայլուն հաղթանակով, ինչի շնորհիվ, անշուշտ, բարձրացավ Վարդան Մամիկոնյանի հեղինակությունը: Թերևս կարելի էր այստեղ վերջակետ դնել, սակայն կա մի կարևոր իրողություն, որը լուսաբանման կարիք ունի: Խնդիրն այն է, որ մինչ Վարդան Մամիկոնյանը ջախջախում էր պարսիկներին Խաղխաղի մատույցներում և այնուհետև, պարսիկներից մաքրելով Աղվանից մարզպանությունը, փորձում էր կապ հաստատել հոների հետ և նրանցից օգնություն ստանալ¹⁹, Բյուզանդական կայսրությունը մերժեց օգնություն ցույց տալ հոներին և ավելին, ինչպես ասվեց, պարսից արքունիքին տեղյակ պահեց հայերի ծրագրերի մասին²⁰: Հարկ է նշել, որ Եղիշեն փաստերն այնպես է մատուցում, թե իբր դա տեղի է ունեցել մինչև Խաղխաղի ճակատամարտը: Սակայն, եթե հաշվի առնենք, որ պատվիրակությունն ուղարկվել է ըստ էության Խաղխաղի ճակատամարտի նախօրյակին, ապա դժվար չէ տեսնել, որ մերժումը ստացվել է այն ժամանակ, երբ հայերը պատերազմում էին Աղվանից մարզպանությունում կամ Հոնաց սահմաններում: Վասակ Սյունին, անշուշտ, չգիտեր Վարդան Մամիկոնյանի և հոների բանակցությունների մասին, սակայն Բյուզանդիայի մերժողական պատասխանը և հոներից երկար ժամանակ պատասխան չստանալը նրան սարսափեցրեցին: Նրա կարծիքով՝ հետագա ապստամբությունը կարող էր ճակատագրական լինել հայ ժողովրդի համար, ուստի նա որոշում է մի կերպ լեզու գտնել պարսիկների հետ և թույլ չտալ, որ Հայաստանը ենթարկվի պարսկական բանակի ավերիչ արշավանքին: Այսպիսով այս երկու նշանավոր գործիչների ճանապարհները բաժանվեցին, քանի որ Վարդան Մամիկոնյանն իր հաջողությունը տեսնում էր ապստամբության հետագա խորացման մեջ: Դա էլ ի վերջո, այդ երկու նշանավոր գործիչների առճակատման պատճառ դարձավ, չնայած երկուսն էլ ձգտում էին վերականգնելու Հայոց թագավորությունը:

Ավարայրի ճակատամարտին, այնուամենայնիվ, չնայած համընդհանուր ճանաչում գտած տեսակետի, Վասակ Սյունին չմասնակցեց: Եղիշեն, որ հենց սկզբից նրան համարում է դավաճան, ոչինչ չի հայտնում Վասակ Սյունու զորքերի ճակատամարտին մասնակցելու մասին, իսկ Ղազար Փարպեցու դրան հակասող տեղեկությունը, թե վասակյանները մասնակցել են Ավարայրի ճակատամարտին, վերը հիշված պատճառով հազիվ թե համապատասխանում է իրականությանը:

¹⁸ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի. քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի: Ե., 1983, էջ 113—115:

¹⁹ Տես Եղիշե, նշ. աշխ., էջ 77—78, նաև՝ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 66:

²⁰ Տես Եղիշե, նշ. աշխ., էջ 73:

Պարսից արքունիքը պատրաստվում էր ճնշել ապստամբությունը, իսկ Վարդանանք, բոլորովին էլ միտք չունենալով նահատակվելու, Ավարայրի ճակատամարտում պատրաստվում էին վերականգնելու Հայոց թագավորությունը:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

БИТВА ПРИ ХАЛХАЛЕ (450 Г.)

Б. А. АРУТЮНЯН, доктор исторических наук, профессор

РЕЗЮМЕ

В национально-освободительной борьбе армянского народа против персидского владычества, вошедшей в историю под названием «война Вардананц» (450-451 гг.), значительную роль сыграла битва при Халхале (в районе современного Казахстана), с которой, практически, началась эта война.

Компаративный анализ двух первоисточников (труды историографов Егише и Парпеци) позволяет уточнить место и ход битвы, а также тактику, использованную армянским полководцем Варданом Мамиконяном. Изучением фактографического материала выявляется деятельность правителей и военачальников того времени, и, в частности, ставится под сомнение факт предательства наместника Армении Васака Сюни.

Одержав победу в битве при Халхале, спарпет Вардан Мамиконян подготовил свое войско к Аварайрскому сражению, достижением которого стало восстановление Армянского царства.

MILITARY HISTORY

THE BATTLE OF KHAGHKHAGH (450 A. D.)

B. H. HAROUTYOUNYAN, Doctor of Historical Sciences, Professor

SUMMARY

The Battle of Khaghkhagh (in the region of the contemporary Ghazakh), which, actually, became the beginning of the war that went down in history under the name «the Vardanants War» (450-451 A. D.) played a significant role in the national liberation struggle of the Armenian people against the Persian dominion.

The comparative analysis of the two primary sources (the works of historiographers Yeghishe and Parpetsi) allows to define more precisely the place and course of the battle, as well as the tactics employed by the Armenian General Vardan Mamikonyan. The study of the factual material reveals the activity of governors and military leaders of that time, and, particularly, the fact of Armenia's Governor-General Vasak Syuni's treachery is brought into question.

Winning the victory in the Battle of Khaghkhagh, Sparapet (military leader) Vardan Mamikonyan trained his army for the Avarayr battle, and the achievement of that was the restoration of the Armenian kingdom.

ՓՈԽԾՈՎԱԿԱԼ ՀԵՌՆԱՆ ԿՈՒՅՈՒՄՁՅԱՆ

Հ. Ա. ԴԵՄՈՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու

Փոխծովակալ Հեռնան Կոյունջյան-Բերգամալին* ծնվել է 1942 թ. Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյում, Լորիս Կոյունջյան-Բակիրջյանի և Լուլա Բերգամալի-Միսիրյանի ընտանիքում: Նա չորս երեխաներից երկրորդն է: Պապը՝ Օհանը, եղել է Ձմյունհիայում «Բակիրջյան Ֆրեր» մանածագործական ընկերության կառավարիչը:



Փոխծովակալ Հ. Կոյունջյան

1922 թ. Ձմյունհիայում տեղի ունեցած կոտորածից հետո նրանց ընտանիքը տեղափոխվել է Աթենք, այնուհետև՝ Սալոնիկ, ապա՝ Նիցցա:

Հեռնանի հայրը՝ Լորիսը, սովորել է Անգլիայում, այնուհետև աշխատանքի է անցել Մանչեստրում՝ հորեղբոր՝ մանածագործական ֆաբրիկաների սեփականատեր Մարկո Բակիրջյանի ղեկավարությամբ: 1936 թ. Լորիսը, Գերմանիայում և Վենեսուելայում ուսում ստանալով, գործուղվել է Մանչեստրի «Օլիվո և Բակիրջյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Չիլիի մասնաճյուղ՝ որպես գլխավոր կառավարիչ:

1938 թ. Լորիսն ամուսնացել է արգենտինահայ Լուլայի հետ, որի հայրը՝ Արմեն Բերգամալին, 30 տարի ղեկավարել է Բուենոս Այրեսի հայկական համայնքը:

Հեռնան Կոյունջյանը սովորել է Անգլիայում՝ Գրեյնջի դպրոցում: 1957 թ. ընդունվել և 1961 թ. ավարտել է Ռ-ազմածովային ակադեմիան՝ ցուցաբերելով բարձր առաջադիմություն: Ավարտելով ակադեմիան և ստանալով միչմանի կոչում՝ 1962 թ. նա «Էսմերալդա» երկկայմ առագաստանավով (բրիգանտին) և «Պրեզիդենտե Պինտո» տրանսպորտային նավով ուսումնավարժական նավարկումներ է կատարել չիլիական ափի երկայնքով:

Հեռնանը Ռ-ազմածովային ճարտարագիտական ակադեմիայում հաճախել է ստորջրյա օբյեկտների ոչնչացման խմբի և հրետանահրթիռային դասընթացներ, իսկ Չիլիի բանակի հատուկ ուժերի դպրոցում՝ հիմնական զինվորական պարաշյուտային և ցատկերի վարպետության կատարելագործման դասընթացների:

«Օ՝ Հիգինս» և «Պրետ» հաժանավերում, ինչպես նաև «Ծովակալ Ռիվերոս» էսկադրային ականակրում Հեռնանը ծառայել է որպես օպերացիաների ղեկավարման սենյակի՝ օդային տարածության վերահսկման գծով սպա, հրետանային սպա

* Այժմ՝ պաշտոնաթող:

և անվտանգության գծով սպա: Նա կազմավորել է «Ծովակալ Լինչ» պահականավի (ֆրեգատ) առաջին անձնակազմի՝ տեխնիկական ապահովմամբ զբաղվող մասը, երբ նավը դեռ կառուցվում և փորձարկվում էր Մեծ Բրիտանիայում: Այնուհետև նույն նավում ծառայել է որպես հրամանատարի տեղակալ, իսկ այնուհետև՝ շտաբային համադասող սպա, որը համարվում է նաև ռազմանավի հրամանատարի առաջին օգնական:

Հեռնան Կույումջյանը ռազմածովային ճարտարագետ է: Վինյա դել Մարի ռազմածովային սպառազինության դպրոցում ծառայելով որպես գլխավոր հրետանային հրահանգիչ՝ հաճախել է Թագավորական ռազմածովային նավատորմի հաստատություններում և Հյուսիսային Իռլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի ու Նիդեռլանդների



«Ծովակալ Լինչ» պահականավը

պաշտպանական սարքավորանքի արտադրություններում կազմակերպված հրթիռային և վերահսկողական-հրամանատվական համակարգերի գծով տարբեր դասընթացներ: Նա մասնակցել է նաև պլանավորված տեխնիկական սպասարկման համակարգի և վերահսկման սերվոհամակարգերի գծով դասընթացների՝ կազմակերպված Թագավորական ռազմածովային նավատորմում:

Տարբեր դասընթացներին ակտիվ մասնակցության շնորհիվ երիտասարդ Հեռնանը խորացրել է իր գիտելիքները: 1970-ական թվականների կեսերին նա արդեն փորձառու ռազմածովային էր: 1978—1983 թվականներին՝ Արգենտինայի և Չիլիի միջև ծագած ճգնաժամի տարիներին*, նա ծառայել է որպես Չիլիի ռազմածովային նավատորմի «Ծովաշների» խմբի հրամանատար, եղել է ռազմածովային նավատորմի «Ամֆիբիա» հատուկ խմբի շտաբի պետ և օպերացիաների գծով սպա:

* 1978 թ. Արգենտինայի և Չիլիի միջև պատերազմի սպառնալիք ծագեց Բիզլ ծովածոցում գտնվող Լենոքս, Պիկտոն և Նուևո կղզիների համար, քանի որ ենթադրվում էր, որ այդ շրջանում կան նավթի զգալի պաշարներ:

1979 թ. Կույումջյանը անտարկտիկական հետազոտական «Ելչո» նավի հրամանատարն էր: Այդ նավով նա մասնակցել է տարբեր հետազոտական ու օվկիանոսագրական աշխատանքների, մատակարարական, փրկարարական օպերացիաների, նավատորմային ապահովման և նավարկային օգնության ցուցաբերման նպատակով կազմակերպվող անտարկտիկական ծովարշավների:

Հեռնան Կույումջյանը ոչ միայն ծառայել է որպես շտաբի սպա, որն ունի իսպանական նավատորմի Ռ-ազմածովային քոլեջի՝ ծովային պատերազմների վարման գծով դիպլոմ, այլև, լինելով ծովային ու ռազմական գիտությունների մագիստրոս, Չիլիի ռազմածովային քոլեջի պրոֆեսոր, վարել է այդ քոլեջի տնօրենի տեղակալի, Չիլիի Զինված ուժերի ռազմական քոլեջների առաջին միացյալ դասընթացի պետի պաշտոններ:

1985 թ. նա նշանակվել է «Էսմերալդա» վարժանավի հրամանատար: Կույումջյանի հրամանատարությամբ «Էսմերալդան», առազատները պարզած, նավարկելով Հարավային Ատլանտիկայում, արևելքից արևմուտք անցել է Հոռնի հրվանդանը, ինչից հետո Հեռնանին անվանեցին Ֆրանսիայի Սենտ Մարտի՝ Հոռնի հրվանդանը շրջանցած հեռավոր նավարկության նավապետների միջազգային ընկերակցության «ալբատրոս»:

1986 թ. Կույումջյանը նշանակվել է Չիլիի Ռ-ազմածովային նավատորմի հետազոտման և զարգացման դիրեկտորատի ստեղծման աշխատանքային խմբի անդամ և կարևոր դեր է խաղացել ռազմածովային ուժերի արդիականացման ծրագրի իրականացման գործում: 1987 թ. կապիտանի կոչումով նա ծառայել է որպես ռազմածովային նավատորմի Գ-երագույն շտաբի թիկունքային ապահովման վարչության պետ, ապա, լինելով գլխավոր հրամանատարի գլխավոր խորհրդական, մասնակցել է Նյուպորտում «Ծովային ուժերի» վերաբերյալ գիտաժողովին, այնուհետև եղել է Արևմուտքում ծովային գծով դիվանագիտական կորպուսի ավագ (դուայեն): Այս ամենին զուգընթաց, 1986–1987 թթ. նա ռազմածովային նավատորմի Առաջին ախտորոշման կոմիտեի նախագահն էր, իսկ 1988 թ. որպես ռազմածովային կցորդ գործուղվել է Փարիզ՝ Չիլիի դեսպանատուն: Հատկանշական է, որ Հեռնանը երկու տարի հավատարմագրված է եղել նաև Բոննոմ:

1990 թ. Հեռնան Կույումջյանը ծառայել է որպես «Բլանկո Էնկալադա» էսկադրային ուղղաթիռակիր ականակրի հրամանատար, 1991 թ. ստացել է փոխծովակալի կոչում՝ ստանձնելով ռազմածովային նավատորմի սպառազինության գծով տնօրենի պաշտոնը. նա պատասխանատու էր ռազմածովային նավատորմի սպառազինության բոլոր տեսակների, ուղեվարասարքերի, տվիչների, կողային սարքերի ու սարքավորանքի, ինչպես նաև ռազմածովային նավատորմի բոլոր զորահանդեսային ուժերի համար:

1993—1994 թթ. Հեռնան Կույումջյանը կազմել է «Ռ-ազմածովային նավատորմի հետազոտման ու զարգացման ծրագիրը», եղել է այդ ծրագրի առաջին տնօրենը, որը պատասխանատու էր ռազմածովային նավատորմի զարգացման բոլոր ծրագրերի և հետազոտման ու զարգացման գլխավոր նախագծերի համար: Զուգահեռաբար նա

եղել է վարչական զարգացման գծով կոմիտեի՝ «Մարինա 2000»-ի (ռազմածովային նավատորմի 2-րդ կազմակերպական ախտորոշում) նախագահ:

1994 թ. ղեկտեմբերին նրան տեղափոխել են Առաջին ռազմածովային գոտի (Վալպարաիսո)՝ որպես գլխավոր հրամանատար: Մեկ տարի անց՝ 1995 թ. մինչև 1996 թ. աշխատել է ռազմածովային արդարադատության բնագավառում:

1997 թ. Կույունջյանը ծառայել է ռազմածովային նավատորմում որպես անձնակազմի գծով գլխավոր տնօրեն: Այս պաշտոնում նա պատասխանատու էր ռազմածովային նավատորմի մարդկային ռեսուրսների, առողջապահական, սոցիալական ապահովման և կրթական համակարգերի որակյալ կառավարման համար:

1998 թ. նա ծառայել է որպես ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի պետ՝ ըստ ավագության լինելով գլխավոր հրամանատարից հետո երկրորդը:

Նույն թվականի ղեկտեմբերին Հեռնանը Սանտյագոյում նշանակվել է պաշտպանության նախարարության Պաշտպանական շտաբի պետ՝ ծառայելով երկրի երկու նախագահների և պաշտպանության երեք նախարարների օրոք:

Կույունջյանը եղել է Ռ-ազմածովային նավատորմի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր անդամ և նախագահ, Ծովային համալսարանի վարչության անդամ, «Ասմար» նավաշինական և նավավերանորոգման ընկերության բարձրագույն ղեկավարության անդամ, Ջինված ուժերի թռչակային համակարգի գլխավոր վարչության անդամ, Չիլիի փոխադարձ ապահովագրության տնօրենների խորհրդի անդամ և Ջինվորական դատարանի նախագահ: Նա եղել է նաև Վալպարաիսոյի ռազմածովային ակումբի նախագահ, Չիլիի ոստիկանական խորհրդի խորհրդական, Բարձրագույն կրթության ազգային խորհրդի խորհրդական, Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի խորհրդական, Ազգային պաշտպանության բարձրագույն խորհրդի խորհրդական, Արտաքին քաղաքականության խորհրդի խորհրդական և Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար՝ որպես ռազմական գծով ավագ խորհրդական աշխատելով նախագահ Լագոսի անմիջական ենթակայության տակ:

Հեռնան Կույունջյանը, 44 տարի ռազմածովային նավատորմում և 10 տարի որպես զեներալ ծառայելուց հետո, 2001 թ. հունվարի 1-ին թռչակի անցնելով՝ նախագահի կողմից նշանակվել է «Երկուհարյուրամյակի հանձնաժողովի» անդամ*:

Անցնելով թռչակի՝ Հեռնան Կույունջյանը շարունակում է իր ակտիվ գործունեությունը, մասնավորապես՝ ընտրվել է Վալպարաիսոյի համալսարանի վարչության անդամ, որտեղ ծառայելով չորս տարի՝ ակտիվորեն մասնակցել է համալսարանի հավատարմագրման և որակի գծով դիրեկտորատի կազմակերպման գործընթացներին:

Այժմ Կույունջյանը ռազմավարության գծով խորհրդական է և մի շարք ընկերությունների գործընկեր: Այդ ընկերություններում նա ներդրել է ընտանեկան մանրածախ ձեռնարկչության իր երկարամյա փորձը:

* Չիլիի անկախության երկուհարյուրամյակի (2010 թ.) տոնակատարությունների կազմակերպման հանձնաժողով:

Ներկայումս նա Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի անդամ է, Չիլիի Միջազգային հարաբերությունների խորհրդի անդամ, Վալդիվիայի Գիտական ուսումնասիրությունների կենտրոնի խորհրդի անդամ: Նա նաև պաշտպանության նախարարության պաշտպանական քաղաքականության գծով խորհրդատվական խորհրդի անդամ է և միջազգային ու պաշտպանական հարցերի մասին հոդվածներ է գրում ինչպես տեղական պարբերականների, այնպես էլ այլ պաշտպանական հրատարակությունների համար: Կույուճյանը վերջերս ընտրվել է Չիլիի հայկական համայնքի նախագահ:

2001 թվականից սկսած նա փոփոխման, համակարգային մտածողության, ռազմաժողովային ուժերի կառավարման և մշտական կատարելագործման ուղղություններով մասնագիտացած ռազմավարական-խորհրդատվական «Սի ՌԻայ Սի Էլ» (CYCL) ընկերության ղեկավար-տնօրենն է:

Կույուճյանը նախագծել է ռազմավարական մոդելներ, որոնք կիրառական նշանակություն ունեն Չիլիի կառավարման նախարարության միավորված կառավարման, ճգնաժամային կանխատեսումների և կառավարման, քաղաքապետարանների ղեկավարման և վերահսկման համար, իսկ ծովային աղետների ու մարդկային ռեսուրսների ընտրագատման նրա մոդելները նախատեսված են քաղաքացիական ընկերությունների համար:

Հարուստ և օրինակելի է փոխժողովակալ Հեռնան Կույուճյանի անցած ուղին: Իր գործունեության ընթացքում ցուցաբերած անձնվիրության և բարձր կարգապահության համար նա արժանացել է շուրջ քսան պարգևների, որոնց թվում են Իսպանիայի թագավորի կողմից շնորհված «Ռազմաժողովային արիության 1-ին կարգի», Ֆրանսիայի կառավարության կողմից շնորհված «Արիության համար», ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղարի կողմից շնորհված «Երախտիքի լեգեոն» պարգևները:

Հեռնան Կույուճյանը մեկն է այն հայորդիներից, որոնք զգալի ներդրում են ունեցել տարբեր երկրների պաշտպանության ամրապնդման գործում:

Ուազմածովային ուժերի հատուկ ստորաբաժանումների շարքում իրենց ուրույն տեղն ու դերակատարումն ունեն մարտական լողորդները: Նախկինում նրանց հիմնական մարտական խնդիրներն էին մերձափնյա տարածքների ակննապատումը, դեսանտային գործողություններին նախորդող ստորջրյա հետախուզական և սակրավորական աշխատանքները, հիդրոտեխնիկական օբյեկտների ոչնչացումը: Այսօր, անհամաչափ սպառնալիքների ուժգնացման հետ կապված, մարտական լողորդների ստորաբաժանումները իրականացնում են նաև մի շարք ոչ ռազմական օբյեկտների, այդ թվում՝ նավերի և հիդրոտեխնիկական կառույցների պաշտպանությունը հնարավոր ահաբեկչական գործողություններից:

Մարտական լողորդների հանդերձանքի, սպառազինության, սարքավորանքի և փոխադրամիջոցների մշակման ու կատարելագործման ուղղությամբ աշխատանքներ են կատարվում շատ երկրներում: Հանդերձանքը համապիտանի է և կիրառվում է մի շարք ոլորտներում: Իսկ սպառազինությունը և հատուկ սարքավորանքը նախատեսված են հատուկ այդ ստորաբաժանումների համար՝ նրանց գործունեության բոլոր առանձնահատկությունների հաշվառմամբ:




Նկ. 1. Ռեգեներատիվ տիպի LAR VII մեկուսացնող շնչառական սարք (ԱՄՆ)

Մեկուսացնող շնչառական սարքեր (ՄՇՍ): Ի տարբերություն ակվալանգներից, որոնցում արտաշնչվող օդը դուրս է մղվում արտաքին միջավայր՝ ապաքողարկելով ջրատուգակին, ռեգեներատիվ բանեկարգով աշխատող ՄՇՍ-ներում օդը, հատուկ կլանիչ նյութի միջոցով մաքրվելով ամխաթթու գազից, հարստացվում է թթվածնով և վերադարձվում շրջանառության մեջ: ՄՇՍ-ի աշխատածամանակը մի քանի անգամ գերազանցում է նույն կշռաեզրայափաշային տվյալներով ակվալանգի աշխատածամանակը: Նույն սկզբունքով աշխատող ՄՇՍ-ներ կիրառվում են նաև հրշեջ ծառայություններում և քիմիական գորքերում (մեկուսացնող հակազագ): Այս ոլորտներում կիրառվող ՄՇՍ-ների կարևոր հատկությունն է դիմացկունությունը բարձր ջերմաստիճանի և ագրեսիվ քիմիական միջավայրի նկատմամբ, իսկ մարտական լողորդների ՄՇՍ-ների կարևոր հատկությունն է գրոյական լողունակությունը (ՄՇՍ-ի կշիռը ջրում հավասար է 0-ի):

Սպառազինություն: Ամերիկյան արտադրության (AAI corporation) «Ակվառևոլվերը» աշխարհում սերիական արտադրության առաջին ստորջրյա զենքն է և մի շարք երկրների ՋՈՒ-երում ընդունված է սպառազինության մեջ: Կառուցվածքային առանձնահատկությունների շնորհիվ այն օժտված է գրոյական լողունակությամբ և գուրկ է սովորական կրակոցին հատուկ ապաքողարկող հատկանիշներից (բոց, ծուխ, աղմուկ): Գա հետևանք է «գազի ընդարձակում փակ փոփոխական ծավալում» սկզբունքի կիրառման, ըստ որի՝ վառողային գազերը կրակոցի ժամանակ մնում են փակված և ջրում պղպջակ չեն առաջացնում:



ա)



բ)

Նկ. 2. «Ակվառևովերի» ընդհանուր տեսքը (ա) և փամփուշտի կառուցվածքը (բ)

Նույն սկզբունքով է գործում «Հեկլեր ունդ Կոխ» (*Heckler & Koch*) ձեռնարկության մշակած Պ-11 ստորջրյա ատրճանակը, որն այսօր ներառված է Գերմանիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Դանիայի, Նորվեգիայի, Նիդեռլանդների և Իտալիայի ՁՈՒ-երի մարտական լողորդների սպառազինության մեջ: Ատրճանակի հեռահարությունը ջրում 15 մ է, օդում՝ 30 մ: Հատկանշական է, որ Պ-11-ը կրակոցի ձայնի ուժգնությամբ չի գերազանցում նույն ձեռնարկության արտադրած ՄՊ-5 խլարարով ատրճանակի ձայնի ուժգնությունը:

Պ-11-ի հիմնական բնութագրերն են՝	
տրամաչափը, մմ	7,62×36
երկարությունը, մմ	200
բարձրությունը, մմ	185
լայնությունը, մմ	60
ընդհանուր զանգվածը, կգ	1,2
սնուցման աղբյուրի զանգվածը, կգ	0,7
փամփուշտների քանակը, հատ	5



Նկ. 3. ԸՄՊ-11

Արտասահմանյան մասնագետների կարծիքով՝ Պ-11-ը հուսալի և արդյունավետ զենք է:

Միևնույն ժամանակ նրանք նշում են, որ կան դժվարություններ՝ կապված հաճախակի շահագործման հետ, քանի որ զենքի վերալիցքավորումից հետո անհրաժեշտ ջրամեկուսացումը հնարավոր է կատարել միայն գործարանային պայմաններում:

Փոխադրամիջոցներ: Մեծ հեռավորությունների վրա հակառակորդի մերձափնյա տարածքում նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար մարտական



Նկ. 4. Ամերիկյան PDP ստորջրյա քարշակ

լողորդների սարքավորանքը համարվում է հատուկ ստորջրյա փոխադրամիջոցներով: Որպես կանոն, դրանք նախատեսված են մի քանի մղոն հեռավորության վրա 1—2 լողորդ և որոշակի քանակությամբ զինամթերք տեղափոխելու համար: Դրանցից է ամերիկյան PDP ստորջրյա քարշակը, որի հիմնական բնութագրերն են.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, կապիտան,
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ախտաբանություն—патология; pathology	годенствия; fair society of prosperity
ական—мина; mine	բարոյաբույժ—деморализация; demoralization
—ական-անակնկալ—мина-сюрприз; booby trap	բացարձակապետություն—абсолютизм; absolutism
—ական-թակարդ—мина-ловушка; booby trap	բնապահպանական հետք—экологический след; ecological footprint
աներիկանացման երկարաձգում—продолгование американизации; prolongation of Americanization	բնավորության շեշտվածություն—акцентуация характера; character accentuation
անդամախեղություն—членовредительство; self-mutilation	բռնաճնշում—репрессия; repression
անհակադառնալի գործընթաց—необратимый процесс; irreversible process	գործառույթ—функция; function
անձնավորության հոգեկերտվածք—психологический склад личности; psychological make-up of a person	գործնական-օգտապաշտական վերաբերմունք—утилитарно-практическое отношение; pragmatic attitude
անցակետ—пропускной пункт; checkpoint	գունային զգայունակություն—цветовая чувствительность; chromatic sensitivity, color response
ապակենտրոնացված կառուցվածք—децентрализованная структура; decentralized structure	դարաղ—ящур; murrain, foot-and-mouth disease
արդիականացում—модернизация; modernization	դատողություն—1. суждение, 2. рассуждение, дискурс; 1. reasoning, judgement, 2. discourse
արժեհամակարգ—система ценностей; value system	դրույթ—положение; provision
արժեքային կողմնորոշում—ценностная ориентация; value orientation	երկրևեռ պոլիսոզ—биполярный психоз; bipolar psychosis
արտագոյականություն—экстравертность; extraversion	երկփեղկվածություն—дихотомия; dichotomy
արտատարածքայնություն—супрарегиональность; supraregional nature	զանգվածային հուսաբերություն—массовая фрустрация; mass frustration
բազմակարծություն—плюрализм; pluralism	զինվորական վարչարարություն—военное администрирование; military administration
բազմաչափություն—многомерность; multidimensionality	զուգամիտում—конвергенция, сходимость; convergence
բարեկեցության արդարացի հասարակություն—справедливое общество бла-	էթնիկական հանրություն—этническая общность; ethnic community
	էթնիկականություն—этничность; eth-

nicity	համընդհանրացում—глобализация; globalization
էթնոագգային ինքնություն—этнонациональная самость; ethnonational identity	համընդհանուր հռչակագիր—всеобщая декларация; universal declaration
էսկադրային ականակիր—эскадренный миноносец, эсминец; destroyer	հաշվեկշիռ—баланс; balance
ընթացակարգ—процедура; procedure	հասարակական-պետական վերնաշենք—общественно-государственная надстройка; social-state superstructure
ընկալունակություն—восприимчивость; receptivity, susceptibility	հաստատութենական ունակություն—институциональная способность; institutional ability
ընտրանք—выборка; sampling	հատվածայնություն—фрагментарность; fragmentariness
ինտենսիվ հանրայնացում—интенсивное обобществление; intensive socialization	հարաբերակցություն—соотношение; correlation
ինքնածին նորմ—аутогенная норма; autogenous norma	հարացույց—парадигма; paradigm
ինքնիշխանություն—суверенитет; sovereignty	հեդոնիզմ—гедонизм; hedonism
իրավահավասարություն—равноправие; equality of rights	հիվանդության կեղծագործում—симуляция болезни; 1. malingering, 2. sham illness
իրավաչափություն—правомерность; 1. rightfulness, lawfulness, 2. legitimacy	հոգեծին կորուստ—психогенная потеря; psychogenic loss
իրավապայմանագրային հենք—договорно-правовая основа; legal-contractual basis	իրամայական—императив; imperative
յուսնոտություն—сомнамбулизм; somnambulism	ճանաչողական աններդաշնակություն—когнитивный диссонанс; cognitive dissonance
խորհրդատվություն—консультация, консалтинг; consulting	մանկայնություն—инфантильность; infantilism
ծովարշավ—морская экспедиция; sea expedition	մարդավաճառություն—трафикинг, торговля людьми; human trafficking
ծրագրահեն—хакер; hacker	մարդկանց առևտուր—տես <i>մարդավաճառություն</i>
կազմակերպվածք—организационное устройство; organization structure	մարզայնություն—провинция; province
կայմ—мачта; mast	մարսանենգություն—контрабанда; contraband, smuggling
կենսոլորտի գործառության խաթարում—дисфункция биосферы; biosphere dysfunction	միասնական աշխարհատարածքի ձևավորում—формирование единого мирового пространства; formation of an integrated global space
կշռաեզրաչափային սվյալներ—массогабаритные данные; mass-dimensioning specifications	միջազգայնագետ—международник; international affairs expert
հաճանավ—крейсер; cruiser	միջազգայնացում—интернационализация; internationalization
համաձայնագիր—соглашение, конвенция; convention	միօրինակացում—унификация; unification
համամարդկային արժեք—общечеловеческая ценность; universal value	մոլազարություն—фанатизм; fanaticism
համացանց—глобальная сеть; 1. global network, 2. wide-area network	նավարկություն—плавание, мореплавание; 1. navigation, sailing, 2. voyage

—հեռավոր նավարկության նավապետ— капитан дальнего плавания; sea captain	վերազգային կառույց—транснациональ- ная структура; transnational struc- ture
ներգոցողականություն—интровертность; introversion	վերակառուցավորում—реструктуриро- вание; restructuring
նյարդահոգեկան բարեհաջողության վի- ճակ—состояние нервно-психиче- ского благополучия; state of neu- ropsychic well-being	վերացարկել—абстрагировать; abstract տարանջատվածություն—1. разобщен- ность, 2. дистанцированность; 1. disconnection, dissociation, 2. alien- ation, detachment
նորմատիվություն—нормативность; normativeness	տարանցում—транзит; transit
նչ համաժամանակյա զարգացում—асин- хронное развитие; asynchronous development	տեխնածին քաղաքակրթություն—техно- генная цивилизация; anthropoge- nic civilization
չափանիշ—критерий; criterion	տոհմացեղային պարփակվածություն— родоплеменная замкнутость; kin- tribal unsociability
—հայեցակարգային բնութագրերի չափա- նիշ—критерий концептуальных ха- рактеристик; criterion of conceptual characteristics	ուղեծիր—орбита; orbit
չկայացած պետություն—несостоявшее- ся государство; failed state	ուղեղների արտահոսք—утечка мозгов; brain-drain
պաշտպանունակություն—обороноспо- собность; defense capacity	փոխզործություն—взаимодействие; in- teraction
նավակազմի մոտորանավակ—военный катер; military motor-launch	փոխկախվածության աճում—рост взаи- мозависимости; growth of interde- pendency
նավարկարշակ—военная кампания; mili- tary campaign	փողի լվացում—отмывание денег; mo- ney-laundering
սահմանների անխախտելիություն—не- рушимость границ; inviolability of borders	քաղաքակրթությունների երկխոսություն —Диалог цивилизаций; civilizations dialogue
սառցավահան—ледяной щит; ice shield	քննադատականություն—критицизм; criticism
սարքավորանք—оборудование; equip- ment	քննարկում—обсуждение, дискуссия; discussion
—ուղեվարական սարքավորանք—нави- гационное оборудование; naviga- tion equipment	օզոնային խոռոչ—озоновая дыра; ozone hole
վարքագիծ—линия поведения; line of conduct	օվկիանոսագրական աշխատանք—океа- нографическая работа; oceano- graphic operation

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

абсолютизм—բացարձակապետություն
абстрагировать—վերացարկել
акцентуация характера—բնավորու-
թյան շեշտվածություն
асинхронное развитие—նչ համաժա-

մանակյա զարգացում
аутогенная норма—ինքնածին նորմ
баланс—հաշվեկշիռ
биполярный психоз—երկբևեռ պսիխոզ
взаимодействие—փոխզործություն

военный—1. զինվորական, 2. ռազմական, 3. պատերազմական, 4. ռազմագիտական
 —военная кампания—ռազմարշավ
 —военное администрирование—զինվորական վարչարարություն
 —военный катер—ռազմական մոտորանավակ
 восприимчивость—ընկալունակություն
 всеобщая декларация—համընդհանուր հռչակագիր
 выборка—ընտրանք
 гедонизм—հեղոնիզմ
 глобализация—համընդհանրացում
 глобальная сеть—համացանց
 деморализация—քարոշարում
 децентрализованная структура—աշակերտորոնացված կառուցվածք
 диалог цивилизаций—քաղաքակրթությունների երկխոսություն
 дискурс—սմ. *рассуждение*
 дискуссия—սմ. *обсуждение*
 дистанцированность—տարանջատվածություն
 дисфункция биосферы—կենսոլորտի գործառնության խաթարում
 дихотомия—երկփեղկվածություն
 договорно-правовая основа—իրավապայմանագրային հենք
 императив—իրամայական
 институциональная способность—հաստատուբենական ունակություն
 интенсивное обобществление—ինտենսիվ հանրայնացում
 интернационализация—միջազգայնացում
 интровертность—ներգողականություն
 когнитивный диссонанс—ճանաչողական աններդաշնակություն
 конвенция—սմ. *соглашение*
 конвергенция—գուգամիտում
 консалтинг—սմ. *консультация*
 консультация—խորհրդատվություն
 контрабанда—մարտանենգություն
 крейсер—հաժանավ
 критерий—չափանիշ
 —критерий концептуальных характеристик—հայեցակարգային բնութա-

գրերի չափանիշ
 критицизм—քննադատականություն
 ледяной щит—սառցավահան
 линия поведения—վարքագիծ
 массовая фрустрация—զանգվածային հուսալքություն
 массо-габаритные данные—կշռաեզրաչափային տվյալներ
 мачта—կայմ
 международник—միջազգայնագետ
 мина—ական
 —мина-ловушка—ական-թակարդ
 —мина-сюрприз—ական-անակնկալ
 многомерность—բազմաչափություն
 модернизация—արդիականացում
 мореплавание—սմ. *плавание*,
 морская экспедиция—ծովարշավ
 необратимый процесс—անհակադարձալի գործընթաց
 нерушимость границ—սահմանների անխախտելիություն
 несостоявшееся государство—չկայացած պետություն
 нормативность—նորմատիվություն
 обороноспособность—պաշտպանունակություն
 оборудование—1. սարքավորում, 2. սարքավորանք
 —навигационное оборудование—նղեվարական սարքավորանք
 обсуждение—քննարկում
 общественно-государственная надстройка—հասարակական-պետական վերնաշենք
 общечеловеческая ценность—համաճարդկային արժեք
 озоновая дыра—օզոնային խոռչ
 океанографическая операция—օվկիանոսագրական աշխատանք
 орбита—նղեծիր
 организационное устройство—կազմակերպվածք, կազմակերպական կառուցվածք
 отмывание денег—փողի լվացում
 парадигма—հարացույց
 патология—ախտաբանություն
 плавание—1. լող, 2. լողում, 3. նավարկություն, նավարկում, նավագնացություն,

<p>ծովագնացություն —капитан дальнего плавания—հեռա- վոր նավարկության նավապետ плюрализм—բազմակարծություն положение—1. վիճակ, 2. դրույթ правомерность—իրավաչափություն пролонгирование американизации— ամերիկանացման երկարաձգում провинция—1. նահանգ, 2. մարզպանու- թյուն, 3. գավառ пропускной пункт—անցակետ процедура—ընթացակարգ психологический склад личности— անձնավորության հոգեկերտվածք психогенная потеря—հոգեծին կորուստ равноправие—իրավահավասարություն разобщенность—տարանջատվածու- թյուն рассуждение—դատողություն репрессия—բռնաճնշում реструктурирование—վերակառուցա- վորում родоплеменная замкнутость—տոհմա- ցեղային պարփակվածություն рост взаимозависимости—փոխկախ- վածության աճում симуляция болезни—հիվանդության կեղծագործում система ценностей—արժեհամակարգ соглашение—համաձայնագիր сомнамбулизм—լուսնոտություն соотношение—հարաբերակցություն состояние нервно-психического бла- гополучия—նյարդահոգեկան բարե- հաջողության վիճակ справедливое общество благоденст- вия—բարեկեցության արդարացի հա- տարակություն суверенитет—ինքնիշխանություն суждение—դատողություն супрарегиональность—արտատարած-</p>	<p>բայնություն сходимость—սմ. <i>конвергенция</i> техногенная цивилизация—տեխնո- գեն բաղադրակրթություն торговля людьми—սմ. <i>трафикинг</i> транзит—տարանցում транснациональная структура—վե- րազգային կառույց трафикинг—մարդավաճառություն, մարդկանց առևտուր унификация—միօրինակացում утечка мозгов—ուղեղների արտահոսք утилитарно-практическое отношение —գործնական-օգտապաշտական վե- րաբերմունք фанатизм—մոլագարություն формирование единого мирового пространства—միասնական աշխար- հատարածքի ձևավորում фрагментарность—հատվածայնություն функция—1. ֆունկցիա, 2. գործառույթ хакер—ծրագրահեն цветовая чувствительность—գունային զգայունակություն ценностная ориентация—արժեքային կողմնորոշում членовредительство—անդամախեղու- թյուն экологический след—բնապահպանա- կան հետք экстравертность—արտագոյղականու- թյուն эскадренный миноносец—էսկադրային ականակիր эсминец—սմ. <i>эскадренный миноносец</i> этническая общность—էթնիկական հանրություն этничность—էթնիկականություն этнонациональная самость—էթնոագ- գային ինքնություն ящур—դարաղ</p>
--	---

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

absolutism—բացարձակապետություն
abstract—1. վերացարկելի, 2. վերացական
alienation—տարանջատվածություն

anthropogenic civilization—տեխնոգեն
բաղադրակրթություն
asynchronous development—ոչ համա-

<p> ժամանակյա զարգացում autogenous norma—ինքնաձին նորմ balance—1. հաշվեկշիռ, 2. հավասարակշռություն biosphere dysfunction—կենսոլորտի գործառության խաթարում bipolar psychosis—երկբևեռ պսիխոզ booby trap—1. ական-անակնկալ, 2. ական-թակարդ brain-drain—ուղեղների արտահոսք character accentuation—բնավորության շեշտվածություն checkpoint—անցակետ chromatic sensitivity—գունային զգայունակություն civilizations dialogue—քաղաքակրթությունների երկխոսություն cognitive dissonance—ճանաչողական աններդաշնակություն color response—see <i>chromatic sensitivity</i> consulting—խորհրդատվություն contraband—մաքսանենգություն convention—1. համաժողով, համագումար, 2. համաձայնագիր, պայմանագիր, կոնվենցիա convergence—գուգամիտում correlation—հարաբերակցություն criterion—չափանիշ —criterion of conceptual characteristics—հայեցակարգային բնութագրերի չափանիշ criticism—1. քննադատություն, 2. քննադատականություն cruiser—հաժանավ decentralized structure—ապակենտրոնացված կառուցվածք defense capacity—պաշտպանունակություն demoralization—բարոյալքում destroyer—էսկադրային ականակիր detachment—see <i>alienation</i> dichotomy—երկփեղկվածություն disconnection—տարանջատվածություն discourse—դատողություն discussion—քննարկում dissociation—see <i>disconnection</i> ecological footprint—բնապահպանա- </p>	<p> կան հետք equality of rights—իրավահավասարություն equipment—1. սարքավորում, 2. սարքավորանք —navigation equipment—ուղեվարական սարքավորանք ethnic community—էթնիկական հանրություն ethnicity—էթնիկականություն ethnonational identity—էթնոագգային ինքնություն extraversion—արտագողականություն failed state—չկայացած պետություն fair society of prosperity—բարեկեցության արդարացի հասարակություն fanaticism—մոլագարություն foot-and-mouth disease—see <i>murrain</i> formation of an integrated global space—միասնական աշխարհատարածքի ձևավորում fragmentariness—հատվածայնություն function—1. ֆունկցիա, 2. գործառույթ globalization—համընդհանրացում global network—համացանց growth of interdependency—փոխկախվածության աճում hacker—ծրագրահեն hedonism—հեդոնիզմ human trafficking—մարդավաճառություն, մարդկանց առևտուր ice shield—սառցավահան imperative—հրամայական infantilism—մանկայնություն institutional ability—հաստատութենական ունակություն intensive socialization—ինտենսիվ հանրայնացում interaction—փոխգործություն international affairs expert—միջազգայնագետ internationalization—միջազգայնացում introversion—ներգողականություն inviolability of borders—սահմանների անխախտելիություն irreversible process—անհակադառնալի գործընթաց judgement—see <i>reasoning</i> </p>
---	---

<p>kin-tribal unsociability—տոհմացեղային պարփակվածություն</p> <p>lawfulness—see <i>rightfulness</i></p> <p>legal-contractual basis—իրավապայմանագրային հենք</p> <p>legitimacy—իրավաչափություն</p> <p>line of conduct—վարքագիծ</p> <p>malingering—հիվանդության կեղծագործում</p> <p>mass-dimensioning specifications—կշռսեղրաչափքային տվյալներ</p> <p>mass frustration—զանգվածային հուսալքություն</p> <p>mast—կայմ</p> <p>military—1. զինվորական, 2. ռազմական, 3. պատերազմական, 4. ռազմագիտական</p> <p>—military administration—զինվորական վարչարարություն</p> <p>—military campaign—ռազմարշավ</p> <p>—military motor-launch—ռազմական մոտորանավակ</p> <p>mine—ական</p> <p>modernization—արդիականացում</p> <p>money laundering—փողի լվացում</p> <p>multidimensionality—բազմաչափություն</p> <p>murrain—դաբաղ</p> <p>navigation—նավարկություն</p> <p>normativeness—նորմատիվություն</p> <p>oceanographic operation—օվկիանոսագրական աշխատանք</p> <p>orbit—ուղեծիր</p> <p>organization structure—կազմակերպվածք, կազմակերպական կառուցվածք</p> <p>ozone hole—օզոնային խոռոչ</p> <p>paradigm—հարացույց</p> <p>pathology—ախտաբանություն</p> <p>pluralism—բազմակարծություն</p> <p>pragmatic attitude—գործնական-օգտապաշտական վերաբերմունք</p> <p>procedure—ընթացակարգ</p> <p>prolongation of Americanization—ամերիկանացման երկարաձգում</p> <p>province—1. նահանգ, 2. մարզպանություն, 3. գավառ</p>	<p>provision—1. ապահովում, մատակարարում 2. դրույթ</p> <p>psychogenic loss—հոգեծին կորուստ</p> <p>psychological make-up of a person—անձնավորության հոգեկերտվածք</p> <p>reasoning—1. դատողություն, 2. փաստարկում</p> <p>receptivity—ընկալունակություն</p> <p>repression—բռնաճնշում</p> <p>restructuring—վերակառուցավորում</p> <p>rightfulness—իրավաչափություն</p> <p>sailing—see <i>navigation</i></p> <p>sampling—ընտրանք</p> <p>sea captain—հեռավոր նավարկության նավապետ</p> <p>sea expedition—ծովարշավ</p> <p>self-mutilation—անդամախեղություն</p> <p>sham illness—հիվանդության կեղծագործում</p> <p>smuggling—see <i>contraband</i></p> <p>social-state superstructure—հասարակական-պետական վերնաշենք</p> <p>somnambulism—լուսնոտություն</p> <p>sovereignty—ինքնիշխանություն</p> <p>state of neuropsychic well-being—նյարդահոգեկան բարեհաջողության վիճակ</p> <p>supraregional nature—արտատարածքայնություն</p> <p>susceptibility—see <i>receptivity</i></p> <p>transit—տարանցում</p> <p>transnational structure—վերազգային կառույց</p> <p>unification—միօրինակացում</p> <p>universal declaration—համընդհանուր հռչակագիր</p> <p>value—1. արժեք, 2. արժեքային</p> <p>—universal value—համամարդկային արժեք</p> <p>—value orientation—արժեքային կողմնորոշում</p> <p>—value system—արժեհամակարգ</p> <p>voyage—1. նավարկություն, 2. ճանապարհորդություն</p> <p>wide-area network—համացանց</p>
--	---

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիպագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասկումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic quarterly «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ձեռք է հանում զ. թ. 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին

Հայաստանի Հանրապետության Կրթության նախարարության հանձնարարությամբ
հրատարակվում է «Հայկական Բանակ» պարբերականը
համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին

Հայաստանի Հանրապետության Կրթության նախարարության հանձնարարությամբ
հրատարակվում է «Հայկական Բանակ» պարբերականը

Երևան, հունիսի 1-ին, 1997 թ. հունիսի 1-ին, համար 1997 թ. հունիսի 1-ին

© 1997 թ. հունիսի 1-ին, համար 1997 թ. հունիսի 1-ին, համար 1997 թ. հունիսի 1-ին

Երևան, հունիսի 1-ին, 1997 թ. հունիսի 1-ին, համար 1997 թ. հունիսի 1-ին
Հայաստանի Հանրապետության Կրթության նախարարության հանձնարարությամբ
հրատարակվում է «Հայկական Բանակ» պարբերականը
համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին
համարի համար 1997 թ. հունիսի 1-ին